



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

34
9-61

07 FEB 2010

240.13
7-61

№ 19 «Յառուճ»-ի գրադարան № 19

ԱԼՖՈՆՍ ԴԻԻՆԱՆ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ

ՕՐԷՆՍԻՐՈՒԹԻՒՆԸ

ԴԱՂՆԱԿՑԱԿԱՆ

Զ Ի Ի Ց Ե Ր Ի Ա Յ Ո Ւ Մ

Պատմական սեուրիւն

Գ Ի Ն Ն Է 20 Կ

1906
ԹԻՖԼԻՍ.

61 16 APR 2013
№ 19 «Յնտաշ»-ի գրադարան № 19

83

34
340 141

1779-ԳԻԼ

ԱԼՖՈՆՍ ԴԻԻՆԱՆ

5 FEB 2007




ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ

ՕՐԷՆՍԴԻՐՈՒԹԻՒՆԸ

ԴԱԶՆԱԿՅԱԿԱՆ

Զ Ի Ի Ց Ե Ր Ի Ա Յ Ո Ւ Մ

Պատմական տետրիկ



14490

016
140-0441

Թ Ի Ֆ Լ Ի Ս

Ելէքտր. տպարան «ՀԵՐՄԷՍ» Ընկ. Մաղաթեան փ. № 5
1906 (199)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

- I. «Հատկանական ժողովներ»
 - § 1. Նրանց ծագումը.
 - § 2. Նրանց կազմակերպութիւնը.
 - § 3. Առաջարկութեան իրաւունքը.
- II. Դաճնակցական բեֆերենդում.
- III. «Գիւմումներ ժողովրդին».
- IV. «Հանրային ժողով ժընեւում».
- V. Ֆրանսիական յեղափոխութիւնը եւ ժողովրդական օրենսդրութիւնը Զւիցերիայում.
 - § 1. Ժողովրդական օրէնսդրութիւնը յեղափոխութեան ժամանակ.
 - § 2. Զւիցերիայի սահմանադրական բեֆերենդում.
- VI. վ ե ս օ.
- VII. Զւիցերիայի եւ Հիւսիս. Ամերիկ. Միացեալ Նահանգների սահմանադրութեանց համեմատութիւնը.
- VIII. Սահմանադրութիւն եւ ժողովուրդ.
 - § 1. 1848 թ. դաշնակցական սահմանադրութիւնը.
 - § 2. Սահմանադրական նախաձեռնութիւնը կանտոններում.
 - Ա. Անհատական նախաձեռնութիւն.
 - Բ. Հաւաքական նախաձեռնութիւն.
 - § 3. Սահմանադրութեան վերաբերեալ ձայնտուութիւնները կանտոններում.
 - Ա. Նախնական ձայնտուութիւններ.
 - Բ. Վերջնական ձայնտուութիւններ.
- IX. Բեֆերենդումը կանտոններում.
 - § 1. Օրէնսդրական բեֆերենդումի ներմուծումը.
 - § 2. Բեֆերենդումի տեսակները.
 - Ա. Պարտաւորիչ բեֆերենդում.
 - Բ. Կամաւոր բեֆերենդում.
 - 3. Ի՞նչ բանի է գործադրուում բեֆերենդումը.

Ա. Օրէնքներ և որոշումներ.

Բ. Դաշնագիրներ և կոնկորդատներ.

Գ. Որոշումներ Ֆինանսական գործերի վերաբերմամբ.

Դ. Սովորական ֆինանսական որոշումներ.

II. Արտակարգ ֆինանսական որոշումներ.

X. Օրենսդրական նախաձեռնութեան իրաւունքը.

Ա. Նախաձեռնութեան տեսակները.

Բ. Նախաձեռնութեան առարկան.

Գ. Նախաձեռնողների նազազոյն թիւը.

XI. 1872 թ. դաւնակցական սահմանադրութեան նախագիծը.

XII. Օրենսդրական բեֆերէնցումը դաւնակցութեան մէջ.

§ 1. Դաշնակցութեան սահմանադրութեան 89 յօդ.

§ 2. Դաշնակցական սահմանադրութեան 90 յօդ.

§ 3. Դաշնակցական բեֆերէնցումի հետեւանքները.

XIII. Դաւնակցական սահմանադրութեան մասնաւոր վերաբնութիւն.

§ 1. Յաւելած 5 յուլիսի 1891 թ.

§ 2. Օրգանական օրէնք.

Վերջաբան.



I. «ՀԱՄԱՅՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐ» (Landsgemeinden)

§ 1. Նրանց ծագումը

Ուսովապետական սկզբունքները գոյութիւն ունէին գերմանական հաստատութիւնների մէջ շատ հին ժամանակներում: Տակիտոսը յայտնում է, որ գերմանացոց մէջ ժողովրդական համագումարները կատարեալ օրէնսդրական իրաւունք էին վայելում: Եւ մինչդեռ Գերմանական պետութեան հարաւային մասում գերագոյն իշխանութեան գործադրութիւնը ժողովրդից աստիճանաբար անցնում էր թագաւորին, կենտրոնական Զւիցերիայի ալպեան հովիտներում նա մնում էր տակաւին բոլոր քաղաքացիների ձեռքում:

Րէյսի հովտի բնակիչները իրանք էին վճռում իրանց արտատեղիներին վերաբերեալ բոլոր գործերը: Յայտնի է, որ Շվիցի քաղաքացիները ամենահին ժամանակներից սկսած ընդհանուր ժողովներ էին անում իրանց տեղական գործերի մասին վճիռներ կայացնելու համար. քաղաքական դրութիւնն այստեղ նոյնը չէր, ինչ որ Ուրիում, որովհետեւ Շվիցի ազգաբնակչութիւնը գտնուում էր հարեան երկիրների տիրապետող անձանց անմիջական իշխանութեան ներքոյ. իսկ նրա յարաբերութիւնները դէպի պետութիւնը անհաստատ էին: Միևնոյն վիճակի մէջ էր և Ունտերվալդէնը՝ այն տարբերութեամբ, որ նա զեռ բաժանւած էր արքայութիւնների և զղեակների: Դրա հետեւանքն էր—հող ունեցող գիւղացիների թւի սահմանափակումը: Ամեն տեղ տիրում էր երկիւղ, որ տիրապետող անձինք էլ չեն բաւականանալ իրանց ֆեոդալական իրաւունքներով և ձեռք կ'մեկնեն գիւղացոց արտօնութիւններին: Ժողովուրդը ժրաշան հոգատարութեամբ պահպանում

էր իր անկախութեան վաղեմի աւանդութիւնները և ամենայն եռանդով դիմադրում էր իւրաքանչիւր կողմնակի միջամտութեան հին սովորութիւնները քմահաճ բացատրութեան ամեն մի փորձին: Շահերի ընդհանրութիւնը առաջ բերեց միաբանութեան ոգի և երբ քաղաքական հորիզոնում սկսեցին երևալ ամպեր, քաղաքացիների ժողովները դարձան ամեն մի հայրենասիրական գործունէութեան ելակէտ: Դրանք էին Զւիցերիացոց անկախութեան առաջին պատճառները. երբ ներկայացաւ գործունէութեան նպատակը վայրկեանը, — մարտնչելու համար արդէն վաղուց պատրաստ էին ծրագիրը և կուելու միջոցները:

XIII դարու վերջում, այսինքն այն ժամանակ, երբ կայացաւ զւիցերիական դաշնակցութիւնը, ժողովրդական օրէնսդրութիւնն արդէն համարեա կատարելապէս զարգացած էր հետևեալ կանտոններում՝ Ուրի, Շվից, երկու Ունտերվալդէն, Գերսաու, Յուզ, Գլարուս, Ապպենցել: Այս երկիրներէց մի քանիսում ազգային ժողովների օրէնսդրական և դատավարական իշխանութիւնը սկզբում սահմանափակուում էր կայսրի գերագոյն իշխանութեամբ: Բայց այդ կախումը աստիճանաբար թուլանում էր, մինչև որ, վերջապէս, միանգամից ոչնչացաւ:

Իսկ ուրիշ տեղերում ազգային ժողովները իշխանութիւնը բաւականին սահմանափակ էր. հարկաւ, այդ ժողովներն էին վրձում հասարակական գործերը, բայց այդ վճիռները դեռ պէտք է հաստատուէին այն անձանց կողմից, որոնցից կախում ունէին այս երկիրները (խոշոր կալուածատէրեր, արքայութիւններ, քաղաքներ և այլն:): «Երկրի» գլխաւոր բաղադրի հրապարակը կամ կանտոնի կենդրոնում որ և է մարգագետին ծառայում էին իրրև ժողովատեղի բոլոր քաղաքացիների համար, «որոնք իրանց վրայ ուրիշ տէր չէին ճանաչում և հաստատուէին ոչ թէ ուրիշների կալածքներում, այլ իրանց սեփական հողի վրայ»: (Բըլունտլի): Ազատ քաղաքացիների այս ժողովները վճռում էին հասարակական բոլոր գործերը և բոլոր կարևոր խնդիրները. իսկ երկրորդական խնդիրների վճիռը յանձնուում էր խորհրդին: Բոլոր քաղաքացոց ժողովի, համայնական ժողովի («Landsgemeinde») և խորհրդի մէջ եղած յարաբերութիւնները շատ լաւ կարելի է բնորոշել Տակիտոսի խօսքերով, որոնք վերաբերում են գերմանական ազգերի հին հասարակական կազմակերպութեան. «De-

minoribus principes cosultant, de majoribus omnes», — ևրկրորդական գործերը վճռում էր աւագանին, իսկ կարևորագոյն գործերը — բոլորեքեան: Այն հարցերը, որոնք պիտի քննէին համայնական ժողովում, նախապէս հետազօտուում էին առանձին յանձնաժողովում. այսպէս ուրեմն, դեռ հին ժամանակներում էլ գոյութիւն ունէր այն կանոնը, թէ «իշխանութիւնները իրանց եզրակացութիւնները (Artikel) յանձնում են համայնական ժողովի վրձումին»: (Կելլեր):

Միջին դարերի ամբողջ ընթացքում այս ժողովների օրէնսդրական իշխանութիւնը մնաց անփոփոխ. նրանց գլխաւոր նպատակն էր նախ և առաջ հասարակական շահերը պաշտպանել: Մենք չենք կարող ճշտութեամբ ասել, թէ համայնական ժողովները իսկապէս երբ ստացան գերագոյն իշխանութիւն, բայց շատ հաւանական է, որ խորհրդին ենթակայ էր միայն գիւղական ազգաբնակչութիւնը, և սիւզբեքները իրաւունքները աստիճանաբար կրճատուում էին, մինչև որ, վերջապէս, քաջարի լեռնականները նորից լիովին վերականգնեցին իրանց կարգ ու կանոնը: Համայնական ժողովներից ամենահինը, որի մասին տեղեկութիւն կայ յիշատակարաններում, կայացել է Շվիցում 1294 թ. ազնւակախութեան և հոգևորականութեան սողոսկումներից ապահով մնալու համար. այդ ժողովը կայացրել է մի այսպիսի վերին աստիճանի կարևոր վճիռ. «Եթէ վանքերը չ'ցանկանան, իրանց կալարողութեան համեմատ, օգնել գիւղացիներին հարկեր և տուրքեր տալու, նրանք չեն կարող օգտուել մեր երկրի դաշտերից, ջրից, անտառից, մարգագետիններից և արօտատեղիներից: Նոյնպէս և օտարներից նա, ով ունի մեր երկրում վուշ, իբրև անշարժ կայք, այս ստացւածքից պիտի վճարէ հարկեր, բայց այնքան, որ ծանր չ'լինի նրա համար: Իսկ եթէ օտարերկրացու տէրը կամենայ նրան պատժել դրա համար կամ վուշը տալ ուրիշ անձի, ոչ ոք չ'պիտի համարձակուի վերցնել այդ ստացւածքը կամ որ և է կերպ մնասել նրա տիրոջ, հակառակ դէպքում՝ 5 ֆունտ տուգանք տալ, մնասների փոխարէնը վճարել և վերադարձնել վուշը: Իսկ եթէ յանցաւորը չ'կարողանայ հատուցանել այդ տուգանքը, ոչ ոք իրաւունք չ'ունենայ նրան թողնել իր տունը կամ բակը, նոյնպէս և չ'տալ նրան խմել և ուտել. ով այդ անի, նա ինքը պիտի վրձարէ նրա փոխարէն»:

Կրօնական վերանորոգութիւնից (ընթացիկ) յետոյ գոյութիւն ունէին տասն և մէկ առանձին համայնական ժողովներ. երկուսը Շվիցում, երկուսը Գլարուսում, երկուսը Ունտերվալդէնում, երկուսը Ուրիում և մէկը Յուզում: Շվիցի ժողովները դարձան այնքան բազմամարդ և աղմկալից, որ Զոնդերբուհը նըրանց ոչնչացրեց 1848 թ. ¹⁾: Գերսաուեր ժողովը, որը հինգ հարիւր տարի շարունակ գոյութիւն ունէր Շվիցի ժողովի հետ միաժամանակ, ընդհատեց իր գոյութիւնը. Գլարուսի ժողովները, թէ բողոքականների և թէ կաթոլիկներինը, միացան. շուտով դրանից յետոյ այս օրինակին հետևից նաև Ուրին:

1848 թ. Յուզը դաւաճանեց զուտ ուսմկապետութեան ²⁾ սկզբունքներին և ընկաւ ներկայացուցիչ—ուսմկապետական կանտոնների շարքը: Այսպիսով, նախկին համայնական ժողովները պահպանեցին միայն երկու ամբողջ կանտոններում՝ Ուրի և Գլարուս՝ և չորս կէս-կանտոններում՝ Օբվալդէն և Նիդվալդէն, Արտաքին Ռոդ-ի Ապպենցել և Ներքին Ռոդ-ի Ապպենցել: ³⁾

1) Բայց իրօք համայնական ժողովները շարունակում են իրանց գործունէութիւնը Յուզում, իբրև «նահանգական ժողովներ» (Bezirksgemeinden). այժմ այնտեղ, նախկին հանրա-կանտոնական ժողովի փոխարէն, գոյութիւն ունեն վեց այդպիսի ժողովներ: Կանտոնի վեց նահանգներից իւրաքանչիւրը կազմում է իր ժողովը, ուր մասնակցում են բոլոր չափահաս և իրաւատէր քաղաքացիները. այդ ժողովները կայանում են սովորաբար տարին մի անգամ, մայիս ամսուայ առաջին կիրակի օրը. երբ հարկը պահանջում է, կարող են կայանալ նաև արտակարգ ժողովներ. այն լինում է կամ խորհրդի պահանջով կամ նահանգի քաղաքացոց ընդհանուր թւի $\frac{1}{5}$ -ի պահանջով: Հասարակական պաշտօնների համար ընտրութիւններ կատարելուց զատ, այս ժողովները ստուգում են պետական բիւջէն և վճուում հասարակական ամենակարեւոր գործերը: (Տես Շվիցի սահմանադրութիւնը, երես 78—90.)

(Գրքում եղած գրթէ բոլոր ծանօթութիւնները, չնչին բացառութեամբ, պատկանում են ուսւ թարգմանչին):

2) «Ուսմկապետութիւն» Զւիցերիայում հասկացւում է բառացի մտքով, այսինքն ժողովրդի կառավարութիւն: Գերագոյն իշխանութիւնը ուսմկապետութեան մէջ, բառիս դիւցերիական մտքով, չէ անցնում ընտրւած անձերի, պատգամաւորների ձեռքը, այլ մնում է ժողովրդից անբաժան: Այստեղ զանազանում են զուտ ուսմկապետութիւնը ներկայացուցչական ուսմկապետութիւնից. առաջինի մէջ ընտրւած անձինք վարում են միայն ընթացիկ գործերը, երկրորդում՝ ընտրւածներին յանձնուում է նաև օրէնսդրական իշխանութիւնը, բայց օրէնքները ենթակայ են ժողովրդի վաւերացման՝ ընդհանուր ձայնտուութեան միջոցով, միևնոյն ժամանակ այս ձայնտուութիւնները պարտաւորիչ

§ 2. Նրանց կազմակերպւելնը

Մինչդեռ ամեն տեղ Արևմտեան Եւրոպայում ֆէոդալական և արքայական արսուլուտիզմը անընդհատ կռիւ էին մղում հողի, արտօնութիւնների և գերագոյն իշխանութեան համար, գւիցերիացիք կարողացան պահպանել իրանց լեռնային հովիտներում ուսմկապետութեան ձևերը, որոնք յատուկ են ժողովուրդներին նրանց պատմութեան սկզբում: Մի քանի փոփոխութիւններ, որոնք տեղի ունեցան ներկայ դարու սկզբում, վերաբերում են իսկական ուսմկապետութեան աւելի մանրամասնութիւններին, քան սկզբունքներին: Հասկանալի է, որ կառավարութիւնը պիտի համակերպւէր ժամանակի աճող պահանջներին, բայց գերագոյն իշխանութեան ազբւրը և նրա իրագործումը մնացին անփոփոխ Զվիցերիայի քաղաքական ազատութեան գոյութեան ամենահին ժամանակներից:

Տեսականապէս համայնական ժողովներին մասնակցում են բոլոր քաղաքացիները, որոնք ունեն ձայնի իրաւունք և հասել են չափահասութեան. իսկ գործնականապէս ժողովը կազմւում է այն քաղաքացիներից, որոնք անձամբ ներկայ են լինում այնտեղ. իր ձայնը հաւատալ մի ուրիշին չէ թոյլատրւում: Քաղաքացիների ներկայութիւնը ժողովում զուտ բարոյական պարտականութիւն է. միայն Արտաքին Ռ-ի Ապպենցելում բացակայող անձինք ենթարկւում են հինգ ֆրանկ տուգանքի: Ժողովը գումարւում է տարին մի անգամ՝ Ապպենցելում և Ունտերվալդէնում՝ ապրիլի վերջին կիրակի, Ուրիում—մայիսի առաջին կիրակի, Գլարուսում, ըստ կարելւոյն, մայիսի ընթացքում: Ժողովները կայանում են միշտ միևնոյն տեղերում. Ուրիում՝ Բեուցլինգէնում՝ Նանդի վրայ, Ալտգորֆից կէս ժամայ ձախապարհ. Օբվալդէնում՝ Լանդերբուզու Սարնէնի մօտ, Նիդվալդէնում՝ Վիլում Ստանսի մօտ. Արտաքին Ռ-ի Ապպենցելում ժողովը, ըստ հին սովորութեան, գումարւում է կամ Տրոգէնում կամ Սունդվիլում. վերջապէս, Ներքին Ռ-ի Ապ-

են կամ ըստ հարկի պահանջման. (այսինքն, ձայնտուութիւնը կատարւում է, եթէ մի օր և է օրէնքի դէմ բողոքում է քաղաքացիների մի յայտնի մասը) Զւիցերիական երեք կանտոնները՝ Բազել, Ապպենցել (Արտաքին Ռ. և ներքին: Ռ.) և Ունտերվալդէն (Օբվ. և Նիդվ.) բաղկացած են իւրաքանչիւրը երկու բոլորովին ինքնուրոյն հուսասարկմաներից կէս-կանտոններից: Դաշնակցական գործերում ամեն մի կանտոն ունի մի ձայն, իսկ կէս-կանտոնը կէս ձայն:

պենցելում և Գլարուսում ժողովները կազմակերպւում են նոյնա-
նուն տեղերում ¹⁾։

Արտակարգ, լրացուցիչ ժողովները նոյնպէս նախատեսուած
են. Ներքին Ռ-ի Ապպենցելում և Նիդվալդէնում ժողով հրաւի-
րում են խորհուրդները, իսկ մնացած կանտոններում ժողովներ
գումարելու իրաւունքը պատկանում է քաղաքացիներին, միևնոյն
ժամանակ արտակարգ ժողով կազմելու համար պահանջւում է՝
Գլարուսում 1500, իսկ Ուերիում 150 իրաւատէր քաղաքացիներ։
Որքան էլ երկարատև լինեն արտակարգ ժողովները (սովորաբար,
նրանք վերջանում են երկրորդ օրը), սահմանադրութիւնները
նշանակում են նրանց համար որոշ տեղեր. Օրվալդէնում նրանք
կայանում են Սարնենի քաղաքային տանը, Ուերիում Ալտորֆում,
Արտաքին Ռ-ի Ապպենցելում՝ այնտեղ, ուր տեղի ունեցաւ վեր-
ջին տարեկան համագումարը։ Արտակարգ ժողովների միջոցին չէ
պահպանւում խիստ կարգ ու կանոն, ինչպէս այդ լինում է տարե-
կան ժողովներին։ Իսկ այս վերջինները ամեն տեղ կատարւում
են խիստ հանդիսաւոր կերպով։ Ուերիում, Օրվալդէնում և Արտա-
քին Ռ-ի Ապպենցելում նրանց հանդէսը որոշած է առանձին
ցուցմունքներով. այս կանտոններից վերջինում քաղաքացիների
համար մինչև անգամ պարտականութիւն է համարւում ժողովում
երևալ «տօնային զգեստով» և զէնքը ձեռին։ Փողոցներում—կա-
տարեալ խաղաղութիւն է. կարգապահութեան հետևում է պահա-
կախումը՝ կազմւած մի քանի մարդկանցից, որոնք հագնւում են
պատմական զգեստներ։ Օրվալդէնում տասը ասրին մի անգամ
դուրս է բերւում այն դրօշակը, որ նւիրել է Յուլիոս II պապը։
Նիդվալդէնում կանտոնի ոստիկանը շատ կարեւոր գեր է կատա-
րում հանդիսի ժամանակ. նրան կարելի է համեմատել մի որևէ
արքունիքի հանդիսակատարութեան գլխաւոր կարգադրիչի հետ։
Լանդամանը (պետութեան գլուխը) յայտարարելով ժողովը բաց-
ւած, հարցնում է, թէ ժողովուրդը ընդունում է արգեօք խոր-
հրդի հրաւէրը և ցանկանում է սկսել նիստը։ Խորին լուռութիւն է
տիրում։ Յետոյ առաջ է գալիս ոստիկանը և պատասխանում է

¹⁾ Կանայք և երեխաները տեղաւորւում են ժողովրդական շրջանից
գուրս։ Գլարուսում մանուկները տեղ են բռնում ուղղակի տրիբունայի դէմ,
ուր տեղաւորւում են իշխանաւորները. այսպիսով, նրանք մանկական հաս-
կից ծանօթանում են իրանց իրաւունքների և պարտականութիւնների հետ։

Լանդամանին, որ ժողովուրդը, հաւատարիմ իր հին սովորութիւն-
ներին, ցանկանում է կայացնել իր տարեկան ժողովը։

Այս վաղեմի հաստատութիւնը ռամկապետութեան ամենա-
գեղեցիկ և լաւագոյն արտայայտութիւնն է։ Բոլոր քաղաքացիները
նայտեղ վայելում են հաւասար իրաւունքներ. սոցիալական
տարբերութիւնները անհետանում են։ Ժողովը սովորաբար բաց-
ւում է աղօթքով և Լանդամանի հանդիսաւոր ճառախօսութեամբ.
այնուհետև ժողովուրդը ստուգում է պետական բիւջէն, ընտրում է
տէրունական պաշտօնեաներ, քննում է նախագծւած օրէնքները
և ենթարկում նրանց ձայնտուութեան։ Ձայնտուութիւնը կատար-
ւում է ձեռքերը բարձրացնելով, և նրա հետևանքը որոշում է մի
առանձին բիւրօ, որ նստած է լինում ատեանում։ Կասկածելի
դէպքերում քաղաքացիները, որոնք ընդունում կամ ժխտում են
այս կամ այն առաջարկութիւնը, բաժանւում են խմբերի. օրինակ,
Ապպենցելում երկու կողմի քաղաքացիները մտնում են եկեղեցի
առանձին դռներով. դռների մօտ նրանց թիւը հաշւում են առան-
ձին համրողներ։ Հանդէսը վերջանում է ընտրւած պաշտօնեաների
և քաղաքացիների փառահեղ երգումով, որի հին, պատրաստի
ձևակերպութիւնը կարդում է պետական քարտուղարը։ Յետոյ ժո-
ղովը ցրւում է օրինակելի կարգապահութեամբ։

Համայնական ժողովը ժողովրդի գերագոյն իշխանութեան
արտայայտիչը և ղեկավարն է. դա ինքը ժողովուրդն է, իբրև մի
անձ թէ ֆիզիքապէս և թէ բարոյապէս։ Պետական իրաւունքի
սկզբունքը, այն է՝ «ամբողջ իշխանութիւնը քաղաքացիների ամ-
բողջ միութեան մէջ է» — այստեղ երևակայական, շինծու պատ-
րանք չէ, որովհետև գերագոյն իրաւունքները իրօք պատկանում
են ժողովրդին։ Նա չէ հրաժարւում դրանցից յօգուտ մէկի կամ
միւսի, չէ յանձնում ընտրեալներին, այլ ինքն անմիջապէս օգտ-
ւում է նրանցից իր բարեհայեցողութեամբ։

Այս պատկառելի հիմնարկութիւնը անգործադրելի է մեծ տա-
րածութիւն բռնող տէրութիւնների մէջ, բայց նա լիովին գոհաց-
նում է Զւիցերիայի փոքրիկ հասարակապետութիւնների քաղա-
քական պահանջները, և կարելի է միայն զարմանալ այն հմտու-
թեան վրայ, որով ժողովուրդը իսկական ռամկապետութեան գա-
ղափարը համակերպել է այնտեղ ժամանակակից կեանքի պա-
հանջներին։

§ 3. Առաջարկութեան իրաւունք

Հասարակական իրաւունքին վերաբերեալ մի քանի հեղինակութիւնների մէջ Զւիցերիայի համայնական ժողովի մասին խօսուած է ընդհանրապէս և նախաձեռնութիւնից յետոյ: Դա սխալ բան է, որովհետև համայնական ժողովը ուրիշ բան չէ, եթէ ոչ ընդհանրապէս և նախաձեռնութեան գործադրութեան մի առանձին ձևը: Այնուամենայնիւ նոր ժողովրդական իրաւունքներն այն ձևով՝ ինչպէս ներկայումս են, չէ կարելի յարմարեցնել համայնական ժողովին, քանի որ նա ժողովրդական օրէնսդրութեան կատարեալ կենդանացումն է (բոլոր քաղաքացիների մի ժողով մի տեղում), իսկ նոր ժողովրդական իրաւունքները արդիւնք են ապակենտրոնացման: Որպէս զի աւելի լաւ ըմբռնենք նախաձեռնութեան այժմեան ձևի ծագումը, անհրաժեշտ է հետևել հին ժողովների առաջարկութեան իրաւունքի զարգացման:

Սորհուրդը, ինչպէս մենք արդէն տեսանք, ունէր առաջարկութեան իրաւունք: Այդ չ'պէտք է շփոթել (1759 թ. Շվիցում կայացած համայնական ժողովի որձանագրութիւնը այդ շեշտում է) առաջարկութեան այն իրաւունքի հետ, որ պատկանում էր ամեն մի քաղաքացու: Տեսնենք, թէ ինչպէս էր գործադրուած այդ իրաւունքը զանազան կանտոններում:

I. Ուրիում նա պատկանում էր տեղական խորհրդին 1):

Իսկ քաղաքացիները վայելում էին առաջարկութեան իրաւունքը մի այսպիսի ձևով՝ «եօթ տոհմի ցանկութեամբ», — Siebengeschlechtsbegehren. եօթ քաղաքացիներ, որոնք ազգականութիւն

1) «Սորհուրդ» բառը (Rath, conseil, consiglio) Զվիցերիայում գործ է ածուած «ընտրեալների ժողովի» մտքով: Միայն ժընևի conseil général-ը ունի ուրիշ նշանակութիւն. նա նշանակում է կանտոնի բոլոր քաղաքացիների միութիւնը: Կանտոնական խորհուրդները զանազան ժամանակներում և զանազան երկիրներում տարբեր ձևեր էին ընդունում: Առհասարակ, իւրաքանչիւր կանտոն ունէր երկու խորհուրդ, որոնք նոյնպէս զանազան նշանակութիւն ունէին: Նրանցից մէկը կոչուած էր «մեծ» կամ տեղային, միւսը՝ «փոքր». Երբեմն նրանք կոչուած էին, իրանց անդամների թւի համեմատ, օրինակ, յիսուեակի խորհուրդ: (տես՝ ներքև ժընևի մասին): Այժմ այս խորհուրդները զանազան անուններ են կրում: Մէկը կոչուած է մեծ, կամ կանտոնական, տեղային, միւսը — կառավարչական կամ պետական:

չ'ունէին իրար հետ, ժողովի սկզբում յայտնուած էին պետական-քարտուղարին իրանց ցանկութիւնները, որոնք յետոյ քննուած էին լրացուցիչ ժողովում:

Մինչև Միջամտութեան 1) շրջանը այս ցանկութիւնների վերաբերմամբ խորհուրդն իրաւունք չ'ունէր իր եղբակացութիւններն անել...: 19 փետրարի 1803 թ. Ակտը վերացրեց այդ «եօթի իրաւունքը» և տեղ նրա տեղ առաջարկութեան սահմանափակ իրաւունք բոլոր քաղաքացիներին: (Գլ. XV, յօդ. 2 և 3): Բեստաւրացիայի ժամանակ փոխւեցին այն սահմանափակումները, որ մտցրել էր 1803 թ. ակտը, բայց խորհրդին տրւեց իրաւունք իր եղբակացութիւններն անել քաղաքացիների առաջարկութեան վերաբերմամբ:

1823 թ. «Տեղային Մատեանի» (Ուրիի օրէնքների ժողովածուն) 20 յօդւածը հետևաւն է ասում առաջարկութեան իրաւունքի նկատմամբ. «Այն առարկաները, որոնք պիտի ենթարկւեն հանրա-կանտոնական կամ նահանգների համայնական ժողովների քննութեան, պէտք է առաջարկւեն տեղային խորհրդի կողմից կամ գոնէ եօթ քաղաքացիների կողմից, որոնք անարատ ընտանիքներից են: Այս վերջին առաջարկութիւնները պէտք է ներկայացուած լինեն տեղային խորհրդին գրաւոր կերպով ապրիլի սկզբում. նըրանք պէտք է ստորագրուած լինեն այն քաղաքացիների անուններով, որոնք անուած են այդ առաջարկութիւնները, և կախուած լինեն բոլոր ծխական եկեղեցիներում, որպէս զի տեղային խորհուրդը կսրողանայ իր եղբակացութիւնը տալ համայնական ժողովին, որտեղ առաջարկութիւններին ստորագրած քաղաքացիները յամենայն դէպս անձամբ պիտի ներկայ լինեն»:

17 յօդ. պնդում է, որ տեղային խորհրդի առաջարկութիւնները քննուած են նախ քան «եօթ»-ի առաջարկութիւնները:

Ըստ սահմանադրութեան 1851 թ. տեղային խորհուրդը իրաւունք ունէր վճռելու՝ տալ արդեօք ընթացք «եօթի» առաջարկութիւններին: Երբ հարկը ստիպում էր, գումարուած էր արտակարգ ժողով, ուր կարելի էր քննել միայն այն հարցերը, որոնք նախատեսուած և որոշուած են:

1) «Միջամտութիւն» անելով պէտք է հասկանալ Նապոլէոնի միջամտութիւնը կամ միջնորդութիւնը գւիցերիական գործերում. Նապոլէոնը բռնութեամբ մտցրեց Զվիցերիայում սահմանադրութիւն, որ յայտնի է «միջամտութեան Ակտ» անունով:

1888 թ. սահմանադրութիւնը ոչնչացրեց «եօթի» այս իրաւունքը. այժմ ամեն մի քաղաքացի կարող է (գրաւոր կերպով) առաջարկել իր նախագիծը, խորհուրդը միեւնոյն ժամանակ կարող է իր կարծիքն յայտնել այդ առաջարկութեան մասին:

II. Գլաւուսում կառավարչական մամինները կազմում էին այն գործերի ցուցակը, որոնք պիտի ենթարկէին համայնական ժողովի քննութեան. այս ցուցակը կոչւում էր «մեմորիալ»: Առաջարկութեան սահմանափակ իրաւունքը, որը պատկանում էր քաղաքացիներին, յաճախ յարուցանում էր «մեմորիալ» քննութեան ժամանակ ընդհատումներ: Այդ անյարմարութիւնը վերացնելու համար 1766 թ. վճուած էր, որ խորհրդի առաջարկութիւնները պիտի քննեն ամենից առաջ, բայց որպէս զի քաղաքացիները ևս կարողանային օգտուել իրանց առաջարկութեան իրաւունքից, որոչւած էր, որ նրանք իրանց առաջարկութիւնները պիտի մտցնեն «մեմորիալ», որը առաջարկում էր համայնքներին համայնական ժողովից երեք շաբաթ առաջ: Նախ քննուած էին «մեմորիալի» մէջ պարունակւած առաջարկութիւնները և այն մասնաւոր առաջարկութիւնները, որ մտցրել էր նրա մէջ խորհուրդը, և յետոյ միայն իւրաքանչիւր ոք իրաւունք ունէր իր սեփական առաջարկութիւնները անել: Ժողովրդական նախաձեռնութիւնը սահմանափակ էր. սկզբունքով նա պատկանում էր տեղային խորհրդին: Միջամտութեան Ակտը կրճատեց այդ առաջարկութեան իրաւունքը և վերածեց խնդրատուութեան հասարակ իրաւունքի, տալով տեղային խորհրդին վճիռների կատարեալ ազատութիւն քաղաքացիների առաջարկութիւնների վերաբերմամբ:

1836 թ. հոկտեմբերի 2 Գլաւուսի սահմանադրութիւնը բարեփոխեց այդ առաջարկութեան իրաւունքը: Համայնական ժողովի քննութիւնների հիմքը կազմում է «մեմորիալը»: Տեղային խորհուրդը իրաւունք ունի քաղաքացոց առաջարկութիւնների օրինականութիւնը և հիֆնաւորութիւնը քննութեան ենթարկել, բայց նա չէ կարող վերջնական վճիռներ տալ նրանց վերաբերմամբ. վերջնական վճիռներ տալու իրաւունքը պատկանում է միայն համայնական ժողովին: Այն առաջարկութիւնները, որ տեղային խորհուրդը չէ ընդունել, բայց համայնական ժողովը հաւանութիւն է տւել, պէտք է նորից ենթարկեն հետեւեալ ժողովի քննութեան:

Համաձայն այժմ գործադրող 1887 թ. Գլաւուսի սահմանա-

դրութեան, ամեն մի առաջարկութիւն, որը երկու ձայնով պաշտպանուած է խորհրդում, համարում է ընդունւած, բացի այն դէպքից, երբ այդ հակառակ է սահմանադրութեան: Ընդունւած առաջարկութիւնը խորհրդի եզրակացութեան հետ միասին մտցնում է «մեմորիալի» մէջ ժողովից մի ամիս առաջ: Մտցնում են նոյնպէս այն առաջարկութիւնները, որ խորհուրդը մերժել է, բայց առանց եզրակացութեան (գլաւուսեան դարձւածով դրանց դնում են լրացուցիչ սայլակի մէջ, Beiwagen). համայնական ժողովը կարող է կամ մերժել այդ առաջարկութիւնները կամ վերադարձնել տեղային խորհրդին, որը պարտաւոր է յետոյ իր եզրակացութիւնը տալ յետագայ ժողովին: Օրէնքը չէ կարող փոխել ընդունելուց յետոյ երեք տարւայ ընթացքում, բացի այն դէպքերից, երբ կերեւայ որ նա վնասակար է երկրի համար: Սահմանադրութեան քննութեան պահանջները կարող են ներմուծել «մեմորիալի» մէջ ամեն տարի. նրանք քննում են իբրև սոսկ օրինագծեր:

III. Ապպենցելի քաղաքական կազմակերպութիւնը բեֆորմացիայից առաջ շատ նախնական էր. այստեղ չկար տարբերութիւն սահմանադրութեան հիմնական սկզբունքների և մասնաւոր օրէնքների միջև:

Երբ մի նոր կարգադրութեան կարիք էլ լինում, այդպիսին հրատարակում էր տեղային խորհրդի կամ համայնական ժողովի կողմից, և միեւնոյն ժամանակ այդ իշխանութիւնները չէին կաշկանդում նախկին վճիռներով: Օրէնսդրութիւնն այն ժամանակ շատ պարզ էր: Իւրաքանչիւր քաղաքացի իրաւունք ունէր անել իր ցանկացած առաջարկութիւնները. դա անսահման ռամկապետութիւն էր:

1585 թ. «աբժաթեայ տեղային մատեանը», Ապպենցելի օրէնքների առաջին պաշտօնական ժողովածուն, այդ իրաւունքը ենթարկեց խիստ հրահանգների, որոնք կատարւում էին ուսման ճշտութեամբ. և իրաւ, ներքին Ռ-ի 1607 թ. տեղային մատեանը այդ հրահանգները համարում է շատ հին: Ապագայում առաջարկութեան օրէնքն այստեղ վերականգնեց, յետոյ նորից վերացեց, և Ապպենցելի օրէնսդրութիւնը մի ծայրայեղութիւնից անցնում էր դէպի միւսը մինչև 1733 թ. Այդ ժամանակ այստեղ որոշւած էր, որ համայնական ժողովին առաջարկութիւն անել

կարելի է միայն թոյլառութեամբ խորհրդի, որը, միև կողմից, չէր կարող մերժել մի այդպիսի թոյլառութիւն:

Արտաքին Ռ-ի Ապպենցելի 1747 թ. «Տեղային մատեանը» զանազանութիւն է դնում տեղային խորհրդի՝ իր եզրակացութիւնները տալու իրաւունքի և նրա՝ որոշ առաջարկութիւնները վերջնականապէս մերժելու իրաւունքի մէջ: Առաջարկութիւն անողը երբ մերժուեմ է խորհրդի կողմից, կարող է ինքն անձամբ ներկայացնել այն համայնական ժողովին:

Միջամտութեան Ակտը նաև Ապպենցելում կրճատեց առաջարկութեան իրաւունքը, տեղային խորհրդին թողնելով իրաւունքը՝ վերջնական վճիռ տալու քաղաքացիների առաջարկութիւնների վերաբերմամբ: Արտաքին Ռ-ի Ապպենցելի 1831 և 1838 թ.թ. սահմանադրութիւնները, նոյնպէս և ներքին Ռ-ի Ապպենցելի 1829 թ. սահմանադրութիւնները, սրա վերաբերմամբ էական փոփոխութիւններ չ'կատարեցին. նրանք բոլորն էլ ճիշտապէս էին 1747 թ. տեղային մատեանի վրայ: Արտաքին Ռ-ի Ապպենցելի վերջին սահմանադրութիւնը (1872 թ.) պնդում է, որ առաջարկութեան իրաւունքը պատկանում է բոլոր քաղաքացիներին և այն ղէպքերում, երբ գործը վերաբերում է նոր օրէնքներ հրատարակելուն, առաջարկութիւնը վաղօրօք պէտք է յայտնուած լինի խորհրդին ի գիտութիւն: Եթէ խորհուրդը չ'ցանկանայ մի այդպիսի առաջարկութիւն ներկայացնել համայնական ժողովին, կարող է ներկայացնել այն ամեն մի քաղաքացի, միայն մի պայմանով, որ նա հակառակ չ'լինի դաշնակցական և կանտոնական սահմանադրութիւններին:

Արտաքին Ռ-ի Ապպենցելի 1877 թ. սահմանադրութիւնը անձնական առաջարկութեան իրաւունքը փոխարինեց նախաձեռնութեան իրաւունքով: Համայնական ժողովին օրինազօր առաջարկելու իրաւունքը նա յանձնեց մեծ խորհրդին կամ քաղաքացիների խմբին, իր անդամների թւով հաւասար մեծ խորհրդին: Վերջին ղէպքում մեծ խորհուրդը պիտի տայ իր եզրակացութիւնը: Իբրև այս ժողովի առանձնայատկութիւն հարկաւոր է նկատել այն, որ նա վերջնական վճիռներ չէ կայացնում, այլ միայն ձայներ է հաւաքում առաջարկութիւնների մասին:

IV. Նիպվալդենում քաղաքացիները, ըստ երևութիւնի, այնքան էլ յօժարութեամբ չէին գալիս համայնական ժողով, ուստի և



1563 թ. այստեղ կայացաւ մի վճիռ, որ կոչուեց «Կանոնադրութիւն»՝ զամ իր հետ երկու քաղաքացի բերէ: Այդպիսով «Կանոնադրութիւն» տեղային խորհուրդը: Օրէնսդրական խնդիրները վերջնականապէս լուծուեմ էին լրացուցիչ ժողովում. փորձեր եղան՝ լրացուցիչ ժողովի օրէնսդրական իշխանութիւնը յանձնել «նապատիկ» տեղային խորհրդին, բայց անյաջող: Ընդհանրապէս, համայնական ժողովներն այստեղ խիստ ազմալից էին լինում, որովհետև քաղաքացիները աշխատում էին անցկացնել իրանց առաջարկութիւնները առանց խորհրդի եզրակացութեան. 1688 թ. դրւած էր մի այսպիսի սկզբունք, որ համայնական ժողովը չէ կարող քննել ոչ մի առաջարկութիւն, եթէ նա տեղային խորհրդի կողմից չէ ներկայացւած, Բայց 1701 թ. այս սահմանափակումները մեղմացան. այժմ պահանջում էր միայն, որ առաջարկութիւնները ներկայացւեն գրաւոր կերպով: 1731 թ. «տեղային մատեանը» ստում է, որ առաջարկութիւնները չ'պիտի պարունակեն իրանց մէջ այնպիսի բաներ, որոնք «հակառակ են Աստուծային փառքին կամ հայրենիքի բարիքին, մեծութեան և պատւին»: Տեղային խորհրդին իրաւունք էր տրւած հետազօտելու առաջարկութիւնները: 1758 թ. համայնական ժողովը որոշում կայացրեց, որ «այսուհետև իւրաքանչիւր քաղաքացի իրաւունք ունի իր ցանկացած առաջարկութիւններն անել, մի պայմանով, որ նրանք չ'շօշափեն Աստուծային փառքը, հայրենիքի ազատութիւնը, պատիւը և նշանակութիւնը. այս կանոնի նկատմամբ ամեն մի զանցառութիւն պատժուեմ է ժողովի անմիջական կարգադրութեամբ»:

Մինչև Միջամտութեան Ակտը տեղային խորհուրդը զրկւած էր առաջարկութիւններ քննելու իրաւունքից, և օրէնսդրութիւնը կախւած էր քաղաքացիների կամայականութիւնից: Նիպվալդէնի տեղային խորհուրդը միայն 1803 թ. ստացաւ անսահման իրաւունք՝ քննել և ընդունել կամ մերժել այն առաջարկութիւնները, որոնք պիտի ներկայացւած լինէին գրաւոր կերպով:

Բայց 1816 թ. նորից վճուեց, որ տեղային խորհուրդը իրաւունք ունի միայն տալ իր եզրակացութիւնները, իսկ մերժել առաջարկութիւնները նա կարող է միայն այն ղէպքում, եթէ նրանք «հակառակ են Աստուծային փառքին և այլն, սահմանադրութեան կամ դաշնագիրներին և փոխադարձ համաձայնութիւններին»: Սահմանադրութեան վերաքննութիւնը խուսափեց ժողով

1003
111600

վրրդական ձեռներէնցութիւնից, բայց օրէնքները փոփոխութիւնը քննաց նրանից կախած:

1850 թ. սահմանադրութեան համաձայն, ամեն մի առաջարկութիւն գրաւոր կերպով պէտք է ներկայացուի տեղային խորհրդին, որը նրա մասին յայտնում է իր կարծիքը և, եթէ հարկաւոր համարէ, ներկայացնում է նոյնպէս իր առաջարկութիւնը նոյն լանդրի վերաբերմամբ:

Այս առաջարկութիւնները չ'պէտք է հակասեն ոչ եկեղեցու ընդունած կանոններին, ոչ կանտոնական կամ դաշնակցական սահմանադրութեան: Համայնական ժողովը կարող է միայն ընդունել այդ առաջարկութիւնները կամ մերժել ամբողջապէս, իսկ փոփոխելու իրաւունք չ'ունի: 1877 թ. սահմանադրութիւնը ընդհանուր առմամբ պահպանեց 1850 թ. սահմանադրութեան որոշումները. տեղային խորհուրդը զեկուցանում է, թէ արդեօք թոյլատրելի են համապատասխան առաջարկութիւնները թէ ոչ, բայց նրա այդ իրաւունքը բաւականաչափ պարզ չէ որոշած:

V. Օրվարդեցում առաջարկութեան իրաւունքի պատմութիւնը մի առանձին աչքի ընկնող բան չէ ներկայացնում: Միջամտութեան ժամանակների Օրվարդեցի սահմանադրութիւնը նման է Նիդվարդեցի սահմանադրութեան: 1816 թ. սահմանադրութեան 13 յօդ. աւելի է տեղային խորհրդին իրաւունք ընդունել կամ մերժել օրինագծերը:

1867 թ. ներկայուած գործադրող սահմանադրութիւնը գաւնազանում է խորհրդի հին իրաւունքը՝ տալ իր եզրակացութիւնը և նրա իրաւունքը՝ չ'թոյլ տալ քննելու համայնական ժողովում այն առաջարկութիւնները, որոնք հակասում են դաշնակցական կամ կանտոնական սահմանադրութիւններին կամ շօշափում են մասնաւոր անձանց իրաւունքները (յօդ. 37): Եթէ խորհրդի եզրակացութիւնը յանձնարարում է չ'ընդունել ներկայացրած առաջարկութիւնը, հեղինակը կարող է ետ վերցնել. իսկ եթէ նա այդ չ'ցանկանայ, նա պարտաւոր է անձամբ ներկայացնել իր առաջարկութիւնը համայնական ժողովին: Ժողովը կարող է ընդունիլ կամ մերժել խորհրդի առաջարկութիւնները և եզրակացութիւնները առանց որ և է փոփոխութիւնների:

Սահմանադրութեան մասնաւոր կամ ընդհանուր վերաքննութեան հարցը քննում է ժողովում խորհրդի կամ 500 քաղաքա-

ցիւնների պահանջով (կանտոնում կղած նրանց թւի 7-րդ մասը). միևնոյն ժամանակ ժողովը վճռում է, յանձնել արդեօք վերաքննութեան գործը մեծ խորհրդին, թէ դրա համար ընտրել մի առանձին օրէնսդրական ժողով. եթէ դրանից յետոյ վերաքննւած սահմանադրութիւնը կ'մերժուի, ժողովը որոշում է նշանակել նոր վերաքննութիւն թէ բոլորը թողնել նախկին ձևով:

II. ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ԲԵՖԵՐԵՆԴՈՒՄ.

«Բեֆերենդում» բառը առաջ ուրիշ նշանակութիւն ունէր, քան այժմ: Հին Զւեցերիայում սէյմի նիստերը անկանոն էին. այնտեղ քննւում էին այն գործերը, որոնք վերաբերում էին դաշնակցական երկիրների շահերին. դաշնակցական երկիրների ներկայացուցիչները ոչ թէ պատգամաւորներ էին բառիս այժմեան նշանակութեամբ, այլ պատիրակներ, որոնք վարում էին գործերը իրանց կառավարութիւնների անունով: Երբ պատահում էին այնպիսի գործեր, որոնք վերաբերմամբ պատիրակները լիազօրութիւններ չ'ունէին, այն ժամանակ նրանց մասին կղած վճիռները ընդունւում էին ad referendum, զեկուցանելու համար, այսինքն ներկայացնելու դաշնակցական երկիրների իշխանութիւններին, որոնք ամենևին կաշկանդւած չ'էին այն վճիռներով, որ կայացրել էր սէյմը: Սէյմի հետևեալ ժողովում ձայնտուութիւն էր կատարւում, և յաճախ այնպէս էր պատահում, որ անկարելի էր լինում ընդունել ոչ մի վճիռ, քանի որ կանտոնները չէին ուղարկել իրանց եզրակացութիւնները:

Այս է «Բեֆերենդում» բառի ծագումը, որը յետագայում սկսեց գործ ածել Զւեցերիայի հասարակական իրաւագիտութեան մէջ, — բայց արդէն ուրիշ նշանակութեամբ: Այժմ նա նշանակում է ժողովրդական ձայնտուութիւն, ժողովրդի անմիջական մասնակցութիւնը օրէնսդրութեան մէջ, մինչդեռ նախկին բեֆերենդումից օգտւում էին միայն կանտոնները: *) Բայց այժմեան և նախկին բեֆերենդումի մէջ մնացել է ընդհանուր միայն այն, որ

*) Այսինքն նրանք, որոնք պատկանում էր իշխանութիւնը կանտոններում. իսկ շատ կանտոններում ժողովրդական ձայնտուութիւնները անյայտացան, և իշխանութիւնն անցաւ ազնւականութեան, պատրիկներին և նրանց ներկայացուցիչներին, խորհուրդներին:

նա թույլ չէ տալիս օրէնքի ոյժ ստանալ այն տեսակ օրէնքներին, որոնք չեն համաձայնում շահագրգռածների ցանկութիւններին:

Բեֆերենդումի այս տեսակ ձևափոխութիւն կատարեց Գրաուբրինդէնում և Վալլիսում: Այս երկիրները, զւիցերական դաշնակցութեան մասերը լինելով (XVI դ.), կազմում էին ըստ ինքեան բարդ տէրութիւններ, և նրանցից իւրաքանչիւրը բռնում էր չափազանց մեծ տարածութիւն, այնպէս որ քաղաքացիները չէին կարող գումարել մի ընդհանուր ժողով: Այդ պատճառով տէրութիւնները բաժանուում էին մի քանի շրջանների, և ամեն մի շրջան ունէր իր ազգային ժողովը: Հետաքրքրական է հետեւել այս կանտոններում այն հիմնարկութեան զարգացման, որը սպազաշում պիտի ծառայէր իրրև օրէնակ ժամանակակից ժողովրդական ձայնաուութիւններին:

I. Գրաուբրինդէնի երկիրը բաղկացած էր երեք դաշնակցութիւններից. Վերին, Գոտտեսհաուս և Յենդերիխաէն: Միևնոյն ժամանակ այս դաշնակցութիւններից իւրաքանչիւրը բաղկացած էր մի քանի «Տոխգերիխտներից» *) և համայնքերնից, որոնք անկախութիւն ձեռք բերեն դեռ XIII դ.: Իւրաքանչիւր դաշնակցութիւն ունէր իր սէյմը. այն գործերը, որոնք վերաբերում էին ամբողջ երկրի շահերին, քննուում էին տարեկան սէյմում, ուր ամեն մի Տոխգերիխտ ուղարկուում էր մի պատգամաւոր: Այս սէյմի վճիռները կրկին վերադառնում էին գերագոյն իշխանութեան, համայնքներին, որոնք վճուում էին արտաքին և ներքին քաղաքականութեան բոլոր կարևոր խնդիրները: Դժբախտաբար խորհրդի և ժողովների օրէնսդրական լիազօրութիւնները ճշտիւ որոշւած չէին:

Վճիռներն ընդունուում էին բոլոր քաղաքացիների ոչ մեծամասնութիւնից. իւրաքանչիւր համայնք ունէր մէկ կամ մի քանի ձայներ, համեմատ իր վճարելիք հողային տուրքերին. օրէնքներն ընդունուում էին այս համայնական ձայների մեծամասնու-

*) «Hautes juridictions»: Մենք գերադասեցինք այս բառը թողնել առանց թարգմանութեան: Hochgericht նշանակում է գերագոյն դատարան: Գրաուբրինդէնում այդպէս էին կոչուում նահանգի շրջանները, որոնք ունէին իրանց սեփական գերագոյն դատարանները, որոնք տալիս էին իրանց վերջնական վճիռները, կեանքի և մահուան իրաւունքով: Այս տեսակ դատարանը նշան է գերագոյն իշխանութեան, ուստի և նրա անունը անցաւ անկախ տէրութիւններին, որոնք ունէին այնպիսի դատարաններ:

թեամբ. հետեւալ ժողովում համայնքների ձայները համարուում էին և հրատարակուում էին համայնքների կողմից ընդունւած օրէնքները կամ վճիռները: Այսպիսով, այս երկրում միշտ պահպանուում էր կենդանի հետաքրքրութիւն դէպի հասարակական գործերը, և ժողովրդական հիմնարկութիւնները ստացան առողջ զարգացում:

Մինչև 1880 թ. համայնքների ինքնավարութիւնն այստեղ համարեա անսահման էր, և հիմք չ'կայ կարծելու, որ բեֆերենդումը որ և է ոչ ցանկանալի հետեւանքներ ունեցաւ այստեղ, որովհետև Գրաուբրինդէնի բոլոր սահմանադրութիւնները պահպանեցին այս ժողովրդական իրաւունքը: 1880 թ. մայիսի 23-ի սահմանադրութիւնը այս երեք դաշնակցութիւնների ազատ երկիրը դարձրեց մի տէրութիւն: «Բեֆերենդումը բաւական փոփոխութիւններ կրեց այստեղ այն մտքով, որ օրինագծերը ընդունուում են արդէն ոչ թէ դաշնակցական պետութեան զանազան մասերի մեծամասնութեամբ, այլ երկրի բոլոր քաղաքացիների մեծամասնութեամբ, — միայն քաղաքացիները ձայն են տալիս ոչ թէ մէկ ընդհանուր ժողովում, այլ մի քանի ժողովներում: (Նիւտի): Ըստ 2 յօդ. այժմ գործադրող Գրաուբրինդէնի սահմանադրութեան, օրէնսդրական իշխանութիւնը պատկանում է անմիջապէս ժողովրդին: Բոլոր օրէնքները՝ հիմնական, քաղաքացիական, քրէական, վարչական՝ մեծ խորհուրդը յանձնում է ժողովրդի ձայնաուութեան, կարևորագոյն կարգադրութիւնները նոյնպէս յանձնուում են ժողովրդի ձայնաուութեան:

3-րդ յօդ. ասում է, որ կանտոնի 5000 իրաւատէր քաղաքացիները պահանջով աւագ խորհուրդը պէտք է յանձնէ ժողովրդի ձայնաուութեան. 1) նոր օրէնքների, դեկրետների, և աւագ խորհրդի որոշմանց առաջարկութիւնները, 2) առաջարկութիւնները՝ վերացնելու կամ փոփոխելու այն օրէնքները, որոնք գործում են կրկու տարուց ոչ պակաս, և աւագ խորհրդի այն կարգադրութիւններն ու որոշումները, որոնք օրէնքի ոյժ են ստացել կամ դեռ չէին ստացել. այս յօդւածի գործողութիւնը չէ տարածուում աւագ խորհրդի այնպիսի որոշումների վրայ, որոնք անյետաձգելի բնաւորութիւն ունին:

Աւագ խորհուրդը իրաւունք ունի իր եզրակայութիւններն անելու առաջարկութիւնների վերաբերմամբ, նոյնպէս և, հարկա-

ւոր ղէպքում, առաջարկել ժողովրդին իր հակա-նախագծերը: Բեֆերենդումի այս հին հայրենիքում գոյութիւն ունեն պարտաւորիչ ժողովրդական ձայնաւութիւններ, որոնք բարեբախտաբար, հաւասարակշռած են ժողովրդական նախաձեռնութեան իրաւունքով:

II. Մինչդեռ Գրաուրլենդէնում բեֆերենդումը անընդհատ գոյութիւն ունէր մինչև մեր օրերը, Վալլիսում նա վերացեց 1844 թ.

Վալլիս կանտոնը բաղկացած էր առանձին մասերից, «տասնեակներից» («Zehnten»), որոնք ըստ ինքեան մանչ անկախ տէրութիւններ էին, ունէին իրանց խորհուրդները և դատարանները. ընդհանուր գործերը վարում էր աւանդաբար տեղային խորհուրդը: «Տասնեակների» պատերազմները ընդունում էին սէյմի վճիռները ad referendum և զեկուցանում էին նրանց մասին իրանց համաքաղաքացիներին. ձայնաւութիւններ կատարւում էին իւրաքանչիւր համայնքում, և առաջարկութիւնը կամ ընդունւում կամ մերժւում էր «տասնեակների» մեծամասնութեամբ: Բոլոր «տասնեակները», անկախ իրանց մեծութիւնից և իրանց քաղաքացիների թւից, հաւասար ձայն էին վայելում: Անհատական ներկայացուցչութեան սկզբունքը անյայտ էր այն ժամանակ. այսպիսով, օրէնքները շատ անգամ ընդունւում էին, թէև «տասնեակների» մեծամասնութեամբ, բայց քաղաքացիների փոքրամասնութեամբ: Ներկայ դարու սկզբում Վալլիսը ծանր օրեր տեսաւ. 1) 1802 թ. օգոստոսի 30 տեղային խորհուրդը ստիպւած եղաւ ընդունել այն սահմանադրութիւնը, որ երկիրը դարձրեց «Ռոտանի հասարակապետութիւն»: «Տասնեակների» կազմակերպութիւնը պահպանեց, բայց բեֆերենդումը ոչնչացրեց: Նապոլէոնը ի նկատի ունենալով Միւսպրտենան անցքի կարեւորութիւնը, չՔաշեց իր կարգադրութեամբ Վալլիսը միացնել Ֆրանսիային:

Նապոլէոնի անկումից յետոյ, Վալլիսը կրկին դարձաւ զւիցերական կանտոն. 1815 թ, սահմանադրութիւնը վերականգնեց այնտեղ բեֆերենդումը: Օրէնքները կարող էին ոյժ ստանալ միայն այն ժամանակ, երբ նրանք ընդունած են «տասնեակների» կողմից, բայց ոչ թէ քաղաքացիների, այլ խորհուրդների միջոցով:

1) Ֆրանսիայի միջամտութիւնը:

Բեֆերենդումը չէր տարածոււմ ընդհանուր-զւիցերիական գործերի վրայ: 1848 թ. բեֆերենդումի տեղ ընդունեց ժողովրդական վեոսն և այնուհետև ձայնաւութիւնների ժամանակ համարւում են ոչ թէ «տասնեակների» ձայները, այլ քաղաքացիների անհատական ձայները:

1848, 1853 և 1775 թ. սահմանադրութիւնների մէջ ժողովրդական օրէնսդրութեան իրաւունքը սահմանափակւած է միայն ֆինանսական խնդիրներով: Այսպիսով, այս կանտոնը ժողովրդի՝ օրէնսդրութեան մասնակցելու խնդրում ինքնօրինակ դիրք է բռնում Զւիցերիայի հասարակական իրաւունքի մէջ: Ֆինանսական գործերին վերաբերիալ բեֆերենդումը, այսինքն, որ բոլոր կարևոր պետական ծախսերը պիտի հաստատուեն ժողովրդի կողմից, միայն առանձին մի ձևն է պարտաւորիչ բեֆերենդումի, որի մասին կ'սուսենք յետոյ:

III. «ԴԻՄՈՒՄՆԵՐ ԺՈՂՈՎՐԴԻՆ».

Մենք տեսանք, որ Գրաուրլենդէնում և Վալլիսում բեֆերենդումը ուրիշ բան չէր, եթէ ոչ մի քանի մանր հասարակապետութիւնների ձայնաւութիւններ: Նոյն այդ ժամանակում Բեռն և Յիւրիխ քաղաքներում մի ուրոյն սովորութիւն կար—կառավարութեան կողմից «գիմումներ» անել ժողովուրդին: Այս գիմումները սահմանադրութեան մէջ կանոնների տակ չէին մտել և այս պատճառով չէին կազմում ժողովրդի իրաւունքը: Բեռնի և Յիւրիխի արխտոկրատ կառավարութիւնները երբեմն գիմում էին այդ միջոցին՝ դժւար հանգամանքներում պատասխանաւորութիւնից ազատ մնալու համար:

I. Բեռնում առաջին «գիմումը ժողովրդին» տեղի ունեցաւ 1449 թ. ժողովուրդը հաստատեց գլխահարկը (շաբաթական 1 անգստեր), պատերազմական պարտքը ծածկելու համար: Այսպէս էին կայանում կարևոր վճիռները՝ վերաբերեալ ուրիշ տէրութիւններին հետ դաշն կապելուն, բեֆորմացիա մտցնելուն և այլն: «Ժողովրդին գիմումներից» ամենանշանաւորը տեղի ունեցաւ 1590 թ. և վերաբերում էր Նիոնի խաղաղութեան և Սալօյիայի դաշինքին: Բեռնի խորհուրդը խաղաղութեան դաշինք կապեց սալօյեան

գըսի հետ: Այս գաշնադրութեան համաձայն Բերնը և դուքսը փոխադարձաբար երաշխաւորում էին իրանց երկիրներէրի ապահովութիւնը: Բերնի կառավարութիւնը, իւրացնելով Վաադի երկիրը (ՎՕ), իր գաշնակից ժընկը թողեց բախտի բերման: Բայց Բերնի ժողովուրդը վրդոված էր մի այսպիսի անարգ գաշնադրութեամբ, և կառավարութիւնը հարկադրեւած զգաց իրան ժողովրդի ձայնաւութեան դիմելու: Չայնաւութիւնը մերժեց Սալօյեայի հետ կապած դաշինքը, և այսպիսով ժընկը փրկված էր Զվեցիւրիայի գաշնակցութեան համար: Այս և սրա նման շատ դէպքերից կարելի է տեսնել, որ ժողովուրդը գիտէր երկրի արժանապատուութիւնը պաշտպանել ուրիշ տէրութիւնների հետ ունեցած յարաբերութիւնների մէջ: Պէտք է խոստովանել, որ այս ուսմկապետական հաստատութիւնը երբէք վատ հետեւանքների չէ հասցրել. քաղաքացիների բազմամարդ ժողովներում միշտ վճռողական նշանակութիւն էր ունենում ժողովրդի անողջ դատողութիւնը:

Սովորոյթը հաստատել է այստեղ ժողովրդի երեք տեսակ մասնակցութիւն օրէնսգրութեան մէջ. 1) իւրաքանչիւր նահանգական ժողով ուղարկում էր Բերն պատգամաւորութիւն երկուերեք անձերից, այս պատգամաւորները պիտի հաղորդէին խորհրդի անդամներին ժողովրդի ցանկութիւնները. 2) կառավարութիւնը ուղարկում էր իր դեսպաններին, որոնք նախագահում էին ժողովրդի ժողովներում. 3) ժողովների վճիռները ընդունում էին առանց դեսպանների և կառավարութեան մասնակցութեան. նրանք ծանուցում էին խորհրդին պատշաճ ստորագրութեամբ և կէնքւած նահանգական պրեֆեկտի դրոշմով:

Համայնական ժողովները գումարում էին ամեն մի նահանգում մի որոշ տեղում, որ վաղուց ի վեր յատկացրեւած էր զրա համար, պրեֆեկտի կամ կառավարութեան դեսպանների նախագահութեամբ: Ժողովների մասնակցում էին «բոլոր քաղաքացիները, տասնէջր տարեկան հասակից սկսած. — «alles was von 14 Jahren war». այդ մասնակցութիւնը, ըստ երևութին, պարտաւորիչ էր: Բեֆորմացիայի ժամանակ, օրինակ, խորհրդի դեսպանները պիտի հսկէին, «որ ամենքը ներկայ լինէին ժողովներում և ոչոք չ'խուսափէր, որովհետև գործը վերաբերում է չափազանց կարևոր խնդիրներին:» Չայնաւութիւնը կատարում էր երկու տեսակ. քաղաքացիները բաժանում էին երկու խմբերի—մէկը համաձայն,



իսկ միւսը անհամաձայն այս կամ այն առաջարկութեան հետ, և յետոյ ձայները հաշվում էին, կամ ուղղակի խնդիրը վճռում էր ձեռքերի բարձրացնելով: Չայնաւութեան ընդհանուր արդիւնքը որոշում էր ոչ թէ քաղաքացիների, այլ նահանգների մեծամասնութեամբ:

Մի քանի փորձեր եղան «ժողովրդին դիմումները» դարձնել գիւղացիների սահմանադրական իրաւունք, բայց անյաջող, և երբ Բերն քաղաքը բոլոր իշխանութիւնն իր ձեռքն առաւ, քաղաքային ազնւականութիւնը, պարիկները ոչնչացրին իրանց ատելի այս կարգը (1612 թ. դեկտեմբերի 21):

1798 թ., երբ Ֆրանսիական զօրքերը մտնում էին Բերնին, Բերնի իշխանութիւնները մտարեքեցին նախնի ժամանակները, վճռեցին թոյլ տալ ժողովրդին մասնակից լինել կառավարութեան և հրաւիրել գիւղական ազգաբնակչութեան ներկայացուցիչներ՝ նոր սահմանադրութիւն մշակելու:

Վ. Նոյնանման «դիմումներ ժողովրդին» «բարձր» քաղաքային խորհրդի կողմից գոյութիւն ունէին նաև Յիւրիլում: Նրանք գոյութիւն ունէին այստեղ դեռ ևս XV դ., բայց համեմատաբար երկար չ'տևեցին: Պաշտօնապէս նրանք առաջին անգամ յիշատակում են, իբրև տեղային իրաւունք, կապելի ճրովարտակի մէջ (1531 թ. դեկտեմբերի 9): Այստեղ ասւած է. «Եթէ մեզանում յարուցեն (նոր) յօդաւանք կամ կարևոր գանգառներ որևէ մէկի դէմ, որոնք, մեր կարծիքով, կշօշափեն քաղաքի և երկրի շահերը, այն ժամանակ մենք պէտք է այդ հասցնենք մեր բարեբարոյ գիւղացիներին ի գիտութիւն և խորհրդակցենք նրանց հետ:»

Այս գիմումները ժողովրդին կատարում էին դեսպանների մօտ, ուր նրանք զեկուցանում էին գործի մասին, հարցեր էին առաջարկում վճռելու տեղական ազգաբնակչութեան և ազգաբնակչութեան պատասխանները ներկայացնում էին խորհրդին: Բերնում համայնական ձայնաւութիւնները անհրաժեշտ էին, որպէս զի օրէնքի զօրութիւն ստանային ներքին գործերին վերաբերեալ սովորական կարգադրութիւնները, իսկ Յիւրիլում նրանք գործ էին ածում միայն վաւերացնելու համար այն վճիռները, որոնք վերաբերում էին արտարին գործերին կամ առանձնապէս կարևորութիւն ներկայացնող ներքին խնդիրներին: Ժողովրդի պատասխանները պարունակում էին մանրամասն պատճառաբանութիւն-

ներ և վկայում են այն ժամանակեայ ժողովրդի՝ իրերի պարզ ըմբռնողութիւնը: Այդպիսի ձայնաւութիւններ կատարում էին Ֆրանսիայի հետ դաշն կապելու վերաբերմամբ, բեֆորմացիայի, օտար զօրքերում ծառայելու արգելման վերաբերմամբ. այսպիսով մերժեցին ֆրանսիացոց արքայի այդ մասին արած առաջարկութիւնները, որոնք, անշուշտ, չէին գոհացրել ամենքին:

Այս բեֆորէնզումը նոյնպէս վերացաւ XVII դ. սկզբում, և այնուհետև մի քանի ժամանակ նրա վերականգնելու փորձերը պատժուած էին, իբրև քաղաքական յանցանք:

Բլուաշլին ասում է այդ մասին իր գրքում՝ Staats-und Rechtsgeschichte. «Ո՛րքան հեշտ և օգտակար կլինէր այս իրաւունքը օրգանական կապով կապել սահմանադրութեան հետ և միացնել միւս բարերար հաստատութիւնների հետ: Բայց ոյժերը, ըստ երևութիւնի, սպառել են բեֆորմացիայի համար մղած կուռք. վիշտը, հոգսերը և ծանր փորձանքները թուլացրել են բարի կամքը. շնորհիւ արտաքին և ներքին դժբախտութիւնների, պատերազմի և ժանտախտի, ֆիզիկական աղէտները յետ մղեցին ոգու պահանջները: Ոչ միայն չշարունակեց այն, ինչ որ սկսւած էր, այլ նոյն իսկ կրկին մոռացեց այս իրաւունքը:»

IV. «ՀԱՆՐԱՅԻՆ ԺՈՂՈՎ ԺԸՆՆԻՈՒՄ» ¹⁾

Ժողովրդական իրաւունքների զարգացումը ժընևում ներկայացնում է պատմական մեծ հետաքրքրութիւն, որովհետև ապագայում այս իրաւունքները կարևոր դեր էին կատարում գրականութեան մէջ: Երբ Ռուսոսն «հասարակական դաշնագրի» մէջ վեր կացաւ ներկայացուցչական սիստեմի դէմ, նա աչքի առաջ ունէր իր հայրենի քաղաքի օրինակը և այս օրինակից դուրս բերեց անհիմն եզրակացութիւն՝ մեծ տէրութիւններում ռամկապետութեան անիրագործելի լինելու մասին: Ժընևի հասարակապետութեան զարգացման պատմութիւնը ներկայացնում

¹⁾ Le Conseil Générale. — Conseil նշանակում է խորհուրդ և այդպէս էլ թարգմանւած է միւս տեղերում, իսկ խորհուրդ Զվիցերեայում նշանակում է ներկայացուցիչների համագումար, պալատ: Բայց ժընևի conseil générale-ը նշանակում էր բոլոր քաղաքացիների միութիւնը: Բնագրից ընթերցողը կարող է տեսնել, որ con gen նոյնանիշ չէ գերմանական կանտոնների Landsgemeinden բառին:

է մի յարատև և աճող պայքար քաղաքացիների և բարձրագոյն իշխանութեան մէջ, հոգևոր և աշխարհական իշխանութեան մէջ. մի կողմից եպիսկոպոսի իշխանութիւնը և միւս կողմից սավոյեան դքսի: Ժընևը ձեռք է բերել իր իրաւունքները երկարատև ջանքերի, երկար կռւի գնով. նւաճելով անկախութիւն, նա իր քաղաքական կեանքը հաստատեց ռամկապետական սահմանադրութեան հիմքի վրայ:

Յայտնի է, որ 1364 թ. ժընևի քաղաքացիները տարւայ սկզբում ընդհանուր ժողով են գումարել և ընտրել չորս սինդիկներ, տալով նրանց վարչական իշխանութիւն մի տարի ժամանակով: Այս ընտրեալները պէտք է պաշտպանեն համայնքի շահերը եպիսկոպոսի առաջ. նրանք կարող էին տալ քաղաքացիական իրաւունքներ և խլել այդ իրաւունքները նրանցից, որոնք անարժան կհանդիսանան: Քաղաքացիները արտօնութիւններ էին վայելում օտարների հետ համեմատած. նրանց կարող էին դատել միայն իրանց համաքաղաքացիները: Նրանց վրա չէր կարելի հարկեր դնել առանց նրանց համաձայնութեան և այլն:

Սկսած 1388 թ. ընդհանուր ժողով գումարւում էր տարին երկու անգամ և դրանից յետոյ չորս սինդիկներին աւելացրին քսան անդամներից բաղկացած մի խորհուրդ: 1457 թ., երբ սավոյեան դքսի ճնշումը սաստկացաւ, ժընևում կազմեց յիսուն անդամներից մի խորհուրդ, որը իւրացրեց ընդհանուր ժողովի բոլոր իրաւունքները, — բացի համայնական կայքերը անօրինելու իրաւունքից. այժմ նա արդէն նշանակում էր սինդիկներ և վըճուում հասարակական գործերը: Բայց օրինագծերը և որոշումները կարող էին ոյժ ստանալ միայն քաղաքացիների ժողովի կողմից հաստատելուց յետոյ: «Յիսնի խորհուրդը» (յետագայում — 60) դրեց սկիզբը «Երկու հարիւրի խորհուրդին», որը ժամանակով վճռողական դեր պիտի կատարէր հասարակապետութեան զարգացման ընթացքում:

Բեֆորմացիան, որը մտցրեց ժընևում XVI դ. կիսին, շատ կարևոր հետևանքներ ունեցաւ. արիստակրատ կառավարութիւնը որը կազմեց Կալվինի ազդեցութեան ներքոյ, քաղաքացիների ժողովի իրաւունքները կրճատեց, թողնելով նրանց միայն ձայնի իրաւունքը. այժմ կարևորագոյն գործերը վճռում էր երկու հարիւրի խորհուրդը կրտսեր խորհրդի առաջարկութիւններով:

Միայն 1603թ. այս խորհուրդը ձեռք բերեց նախաձեռնութեան իրաւունք այն մտքով, որ նրան թոյլատրւած էր իւրաքանչիւր ժողովի նիստում առաջարկել այն միջոցները, որ օգտակար կ'ըհամարէ: Քաղաքական իրաւունքներ վայելում էին միայն մի քանի ընտանիքներ, այս արիստոկրատիան այնպիսի խոր արմատներ էր ձգել, որ նա կամաց-կամաց ընդունեց, իբրև կառավարութեան միակ ձեւը:

XVIII դ. սկզբում ժընկուձ առաջ եկաւ մի ուժեղ ուսմկապետական ըէակցիւա. բորբոքեց մի երկարատև, յամառ և մինչև անգամ արիւնահեղ կռիւ. ժողովուրդը ցանկանում է էր ոչ միայն վերականգնել ընդհանուր ժողովը իր նախկին իրաւունքներով, այսինքն, օրէնքներ ընդունելու և սահմանադրութիւնը փոփոխելու իրաւունքով, բայց նա պահանջում էր և գաղտնի ձայնաւութիւն և նախաձեռնութեան իրաւունք.

Ժողովրդական շարժման գլուխ կանգնած քաղաքացիների համարձակ պահանջները իրանց վրայ դարձրին Եւրոպայի ուշադրութիւնը: Հին քաղաքական սիստեմը հիմնովին խախտւած էր այս ազատարար շարժումով, որը եկաւ իբրև մեծ յեղափոխութեան նախագուշակ: Արդէն 1707 թ. ժընկուձ պարզ և սրոշ կերպով ձևակերպւած էին երեք սկզբունք. 1) ժողովրդի գերագոյն իշխանութիւն. 2) բոլոր քաղաքացիների հաւասարութիւն. 3) կառավարիչները միայն ժողովրդի հաւատարմատարներըն են:

Կառավարութեան ճնշման ներքոյ ընդհանուր ժողովը բաւականացաւ միայն մասնաւոր բարեփոխութեամբ. ընդունեց, որ ընտրութիւնները պիտի կատարւեն գաղտնի ձայնաւութեամբ և նոր օրէնքները կամ հների փոփոխութիւնները կարող են լիազօրութիւն ստանալ միայն ընդհանուր ժողովի կողմից հաստատուելուց յետոյ, որը պէտք է գումարւի հինգ տարին մի անգամ (1707 թ. մայիսի 26): Չնայած այս համաձայնութեան, յուզմունքը աւելի և աւելի սաստկանում էր, այնպէս որ 1738 թ. Ֆրանսիան, Բեռնը և Յիւրիխը ստիպւած էին միջամտել, քաղաքի կարգը և խաղաղութիւնը վերականգնելու համար, որի համար վեց ամիս հարկաւոր եղաւ:

Այս երեք միջնորդների ազդեցութեան ներքոյ մշակած սահմանադրութիւնը բոլոր օրէնսդրական իրաւունքները յանձնեց

ընդհանուր ժողովին, բայց օրէնքներ առաջարկելու իրաւունքը յատկացեց իշխանութիւններին: Ընդհանուր ժողովում քննելի գործերը կարող էին առաջարկել միայն սինդիկների և աւագ ու կրտսեր խորհուրդների կողմից: Քաղաքացիների բարձր և միջին դասը իրաւունք ունէին դիմելու սինդիկներին և գլխաւոր գատախաղներին իրանց առաջարկներով (droit de representations—առաջարկների իրաւունքը), և եթէ այս առաջարկները թողնւում էին առանց հետևանքի, նրանց վերջնական և անբողոքելի քննութեան էր ենթարկում ընդհանուր ժողովը: Այս իրաւունքի գործադրութիւնը յարուցանում էր բազմաթիւ երկպառակութիւններ: Ժընկուձ հաստատւած այլազնների սերունդը և իրանք օտարագրիները պահանջում էին իրանց իրաւունքների հաւասարութիւնը բարձր և միջին դասի քաղաքացոց իրաւունքների հետ և շատ գժգոհ էին 1768 թ. նոր սահմանադրութիւնից, որը բաւականութիւն չուեց նրանց պահանջներին: Սկսւած Ֆրանսիական յեղափոխութեան ժամանակից դարձեալ գժտութիւն ընկաւ ազգայնականութեան մէջ. քաղաքացիների հանրային ժողովը յայտարարեց իրան լիազօր, և 5 փետրւարի 1794 թ. սահմանադրութիւնը նրան տւեց իրաւունք հաստատել, մերժել, փոփոխել և վերացնել օրէնքները և կաբգադրութիւնները. խնդրատուութիւնների իրաւունքը ոչնչացրեց:» Օրէնսդրական նախաձեռնութիւնը պատկանում է միայն խորհուրդին, իսկ վերջնական լուծումը պատկանում է ժողովրդին:» Այս սահմանադրութեան համաձայն ժողովրդի կատարեալ լիազօրութիւնը այլ ևս անւանական չէր այլ իսկական: Ժողովուրդը ինքն էր հաստատում օրէնքները և իրապէս օգտուում էր իր գերագոյն իշխանութիւնից:

Բայց միայն 6 հոկտեմբերի 1796 թ. սահմանադրութեան վերաքննութիւնը ժողովրդին յանձնեց նախաձեռնութեան իրաւունքը. սահմանադրութիւնը կարող էր փոփոխութեան ենթարկել միայն քաղաքացիների ցանկութեամբ (1000-ից ոչ պակաս). վերաքննութեան նախագիծ կազմելու համար, քաղաքացիները ընտրում էին օրէնսդրական մարմին, իսկ մշակւած նախագիծը ենթարկւում էր նրանց անմիջական վաւերացման. քաղաքացիներին պատկանում էր խնդրատուութիւնների և գանգատների իրաւունքը (droit de plainte), հանրային ժողովը վճիռ էր կայացնում ամեն մի խնդրագրի մասին վերաբերեալ օրէնքի փոփոխութեան կամ

հրատարակութեան, եթէ միայն այդ խնդրատուութիւնը պաշտպանում էին 700 քաղաքացիներից ոչ պակաս:

Յետոյ, այս իրաւունքները, ինչպէս յայտնի է, սահմանափակեցին, որովհետեւ ժընը միացաւ Փրանսիական հասարակապետութեան. իսկ դրանից յետոյ 1814 թ. ետագէմ սահմանադրութիւնը ոչնչացրեց թէ հանրային ժողովը և թէ ժողովրդի գերագոյն իշխանութիւնը: Միայն Յուլիսեան յեղափոխութիւնից յետոյ ազատամիտ գաղափարները յաղթանակցին, և հասարակաց կարծիքի օրինաւոր պահանջները բաւարարութիւն ստացան:

V. ՅՐԱՆՍԻԱԿԱՆ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՕՐԷՆՍԴՐՈՒԹԻՒՆԸ ԶՎԻՅՆՐԻԱՅՈՒՄ.

§ 1. Ժողովրդական օրենսդրութիւնը յեղափոխութեան ժամանակ.

Ժողովրդական լիազօրութեան գաղափարը հին դարերում աւելի էր տարածւած, քան սովորաբար կարծում են. միայն այն ձևերը, որոնցով նա արտայայտւում էր, բաւական անորոշ էին:

Ձոն կոկիը Անգլիայի հասարակական կազմակերպութիւնը համարում էր լաւագոյնը, որովհետեւ Անգլիայում ազգային իշխանութիւնը պատկանում է ժողովրդին. օրէնսդրական իշխանութիւնը, որը ծագում է ժողովրդից, ունի գերագոյն, ղեկավարող նշանակութիւն. իսկ գործադիր իշխանութիւնը ենթարկւում է նրան:

Մոստեսկիէն իր «Օրէնքների Ոգին» գրքում ասում է, որ օրէնսդրական իշխանութիւնը պիտի լինի այն ներկայացուցիչների ձեռքում, որոնց ընտրել են ունեւոր դասակարգերը (par ceux qui possèdent), իսկ ժողովրդի ստորին դասակարգերը մասնակցութիւն չ'պիտի ունենան ընտրութիւնների մէջ: Գործադիր իշխանութիւնը, նրա կարծիքով, պէտք է լինի ինքնուրոյն օրգան, օրէնսդրական իշխանութիւնից բաժան:

Ռուսոսի գաղափարները ժողովրդի անմիջական օրէնսդրութեան մասին գործում էին և այժմ էլ գործում են մեծ ազդեցութիւն, որովհետեւ նրանք լոգիկաբար ծագում են ժողովրդի լիազօրութեան վարդապետութիւնից և առաջ բերին Ֆրանսիայում

այն ձևերը, որոնք յիշեցնում են զվիցերեական բեֆերենդումը և նախաձեռնութիւնը: 1762 թ. լոյս տեսաւ Ռուսոսի «Հասարակական Դաշնագիր»: Ռուսոսն խիստ դարձւածներով հանդէս եկաւ այն ժամանակ տարածւած ներկայացուցչական սիստեմի դէմ. «Հենց որ ժողովուրդը ինքն է տալիս իրան ներկայացուցիչներ, նա այլ ևս ազատ չէ,—նա այլ ևս չ'կայ»:

Իւրաքանչիւր հասարակական իշխանութեան աղբիւրը, Ռուսոսի կարծիքով, ժողովրդի կամքն է. այս կամքը չէ կարող յանձնել հաւատարմատար անձանց. բոլոր անհատական ցանկութիւններից ամեն մէկը չ' կարող ունենալ ինքնուրոյն նշանակութիւն. իսկ բոլոր ամբողջութեան կամ մեծամասնութեան գերագոյն իշխանութիւնը սահմանափակւած չէ: Գերագոյն պետը, այսինքն ժողովուրդը, հաւաքական մարմին է, համագումար է. ոչ ոք չէ կարող նրան ներկայացնել, բացի իրանից: Իւրաքանչիւր օրէնք, որ չէ հաստատել ինքը ժողովուրդը, ոչ մի նշանակութիւն ունենալ չէ կարող. դա օրէնք չէ: Կառավարութիւնը ժողովրդի գործակատար օրգանն է միայն, որը պէտք է նրան հպատակել այնպէս, ինչպէս ձեռքերը հպատակւում են խելքին:

Ռուսոսն անիրազործելի էր համարում զուտ օսովապետութիւնը ժողովրդի իրաւունքներով: Նրա իդէալն էր մի այնպիսի կազմակերպութիւն, որտեղ օրէնքները հաստատւում են քաղաքացիների ընդհանուր ձայնատուութեամբ, ինչպէս Յունաստանում, ուր ժողովուրդը, փափուկ կլիմայում ապրելով, միշտ հնարաւորութիւն ունէր ժողովել հրապարակներում և զբաղել քաղաքականութեամբ, քանի որ նրա համար աշխատում էին ստրուկները: Բայց ժամանակակից տէրութիւնները չափազանց ընդարձակ են, նրանց մեծամասնութիւնը գտնւում է ցուրտ կլիմայում. զրկւած լինելով այն նպաստաւոր պայմաններից, որոնց մէջ ապրում էին ժողովուրդները հին ժամանակներում, նրանք չ'են կարող վայելել նաև նրանց իրաւունքները: Ռուսոսն կարծում էր, որ ազատութիւնը կարող է գոյութիւն ունենալ միայն մանր համայնքներում. զրանում նա այնքան համոզւած էր, որ չէր կարող նոյն իսկ մտածել, որ մեծ քաղաքական կազմակերպութիւնների մէջ կարելի է մտցնել ժողովրդի անմիջական օրէնսդրութիւն:

Չվիցերիական ժողովրդի իրաւունքների մասին նա ունի շատ մութ գաղափար: Իրողութիւնը սա էր, որ այն երկիրները,

որոնք կառավարում էին համայնական ժողովներով, նոյնպէս և այնպիսիները, որտեղ ժողովրդի կամքը արտայայտուած էր դաշնակցական ընկերներու միջոցով, հետագրին ներկայացուցութեան սխտեմը, և վճռողական նշանակութիւն ունէր այնտեղ միայն ժողովրդի կամքը:

ժընեի փրկիստիան գիտէր միայն անտիկ հասարակապետութիւնները և իր հայրենի քաղաքը. նա չ'հասկացաւ նոյնպէս, որ լայնատարած երկիրներու ժողովրդական իրաւունքները գործադրութեան վերաբերմամբ անհրաժեշտ է փոխարինել դաշնակցական սկզբունքը անհատական սկզբունքով, որը Աթէնքի, Հռոմի և ժընեի նեղ սահմաններում, հասկանալի է, կարող էր տիրապետել առանց զգալի դժւարութիւններ:

Կոնդորսէի ձեռքով մշակված 1793 թ. սահմանադրութեան նախագծի մէջ ժողովրդին յատկացուած էր «գրաքննութեան» իրաւունք այն օրէնքների նկատմամբ, որոնք հակառակ էին նրա կամքին: Այս նախագիծը նոյն այդ տարին փոխւեց սահմանադրութեան, որը ժողովրդին տալիս էր իրաւունք «րեկլամացիայի» (այժմեան վետօն):

«Յօդ. 115. Եթէ դեպարտամենտների մեծ կիսում կանոնաւոր կերպով գումարած սկզբնական ժողովների տասերորդ մասը կը պահանջէ սահմանադրութեան կամ նրա առանձին յօդածների վերաքննութիւնը, օրէնսդրական ժողովը պարտաւոր է հրաւիրել հասարակապետութեան բոլոր նախնական ժողովները՝ իմանալու համար, թէ կոնվենտ պիտի գումարւի թէ ոչ»:

Այս սահմանադրութիւնը ենթարկւեց ժողովրդական ձայնտուութեան. դա առաջին օրէնսդրական ձայնտուութիւնն էր ընդարձակ երկրում. նրա հետևանքները, որոնք յայտարարուեցին 9 օգոստոսի 1793 թ., սրանք էին. 1, 801, 918 քաղաքացիներ ձայն տւին յօգուտ սահմանադրութեան և 11. 610—նրա դէմ 1):

Օգոստոսի 9 սահմանադրութեան վիճակը յայտնի է. նա երբէք ոյժ չ'ստացաւ: Երկու ամիս սպասուած էին օրգանական օրէնքները. յետոյ, հոկտեմբերի 10 երևաց մի որոշում, որ յայտա-

*) Տէնը իր «La Révolution գրքում (II), Le Gouvernement révolutionnaire, Paris, 1885, էջ 11—16) անհրաժեշտ կերպով ասպացուցեց, որ այս ձայնտուութիւնը ամենեին ազատ չէր:

րարում էր, թէ կառավարութիւնը մնում է «յեղափոխական, մինչև խաղաղութիւն հաստատուելը»:

Ամբողջ յեղափոխութեան ընթացքում ժողովրդի գերագոյն իշխանութիւնը իր բոլոր հետևանքներով արտայայտուեց միայն դերեկտորեալ սահմանադրութեան նախագծի մէջ՝ հասարակապետութեան III տարւայ 5 ֆրիւկտիդորի:

«Յօդ. I, § 17. Գերագոյն իշխանութիւնը, իր էութեամբ իսկ, գտնուած է բոլոր քաղաքացիների ամբողջութեան մէջ»:

§ 18 Ոչ մի քաղաքացի, քաղաքացիների ոչ մի մասնաւոր կազմակերպութիւն չեն կարող իւրացնել գերագոյն իշխանութիւնը»:

§ 20. Բոլոր քաղաքացիները հաւասար իրաւունք ունեն անմիջապէս կամ ուրիշի միջոցով մասնակցութիւն ունենալ օրէնքների մշակութեան, ժողովրդական ներկայացուցիչների և հասարակական պաշտօնեաների ընտրութեան մէջ»:

Գրակիւ Բարէտորի ձեռքով կազմած սահմանադրութեան այս նախագիծը պարունակում էր իր մէջ ժամանակակից ընկերներու մը և նախաձեռնութիւնը: Պատգամաւորների պալատի և սենատի հետ միատեղ նա նշանակել էր նոյնպէս և ազգային կամքի պահապանների ժողով (corps des conservateurs de la volonté nationale), որոնք պէտք է հսկէին, որ պալատները չ'կարողանային խախտել ժողովրդի կամքը:

Այս նախագծի համաձայն, օրէնքները կարող էին հրատարակւել երկու միջոցով. առաջինը, ամեն մի օրինագիծ, որ առաջարկուած է օրէնսդրական հիմնարկութիւնների կողմից, պէտք է պատճառաբանութեամբ հանդերձ, անցնէր քաղաքացիների ձայնտուութեան. սպ համապատասխանուած է ընկերներու միջին. երկրորդ, իւրաքանչիւր համայնք կարող էր «ստաջարկել նոր օրէնք և կամ վերացնել կին օրէնքը»: Եթէ մի այսպիսի առաջարկութիւն կ'անւի քաղաքացիների մեծամասնութեան կողմից, օրէնսդրական հաստատութիւնը, համաձայն վերահսկիչների զեկուցման, պէտք է մշակէ համապատասխան օրէնք և այն առաջարկէ ժողովրդի ձայնտուութեան: Դա—նախաձեռնութեան իրաւունքն է, որ վարգանու է ներկայուած:

Մենք հիմք չ'ունենք ենթադրելու, որ ֆրանսիական յեղափոխականներին յայտնի էր առաջարկութեան իրաւունքը զվեցերի-

ական երկիրներում, որոնք կառավարում էին համայնական ժողովներով, կամ զվիցերիական բեֆերենդումը. ըստ երևութիւն, նրանք անկախ գտան ժողովրդական օրէնսդրութեան միջոցը, որ չէր գտել Ռուսոսն, որ այժմ իրագործւում է ընդարձակ երկիրներում:

§ 2. Զվիցերիայի սահմանադրական բեֆերենդումը. 1) Այլեւան երկիրներում պահպանւած գերմանական հիմնարկութիւնները զարձան առաջին ազգիւր Զվիցերիայի այժմեան ուսմկապետութեան: Ֆրանսիական յեղափոխութիւնը նոյնպէս մեծ ազդեցութիւն ունեցաւ սահմանադրական իրաւունքի զարգացման վրայ զվիցերիական դաշնակցութեան մէջ: Մեծ կանտոնների ազգաբնակչութիւնը՝ յեղափոխութեամբ նախապատրաստւած, շատ շուտ իւրացրեց նրա էական սկզբունքները:

1798 թ. Ֆրանսիացիների արշաւանքից յետոյ Զվիցերիան յայտարարեց իրրե մի և անբաժան տէրութիւն, որտեղ գերագոյն իշխանութիւնը պատկանում է բոլոր քաղաքացիների ամբողջութեան: Արիստոկրատիայի արտօնութիւնները տեսականապէս ոչնչացրած էին, և առաջին Հելվետական սահմանադրութիւնը (IV տարւայ սահմանադրութիւնը) մտցրեց զուտ-ներկայացուցչական ուսմկապետութիւն, — մի երեսոյթ, որ բոլորովին նոր է Զվիցերիայում:

Իլիմերը շատ հիմնաւոր կերպով ասում է. «Դժւար է երեւկայել ժողովրդի սահմանադրական կեանքում աւելի մեծ փոփոխութիւն, քան այն, որ կատարեց Զվիցերիայում 1798 թ. 12 ապրիլի: Թողնելով պատմական իրաւունքի հողը, որպէս զի կարելի լինի ոտ դնել փիլիսոփայական կամ բնական իրաւունքի հողի վրայ, նա միևնոյն ժամանակ թողեց իր տէրութեան անշափ բաժան լինելը, ուր, այսպէս ասած, երկրի ամեն մի կտորը ունէր իր առանձին հիմնարկութիւնները, և անցաւ խիստ քաղաքական միութեան, ձևած չափած Ֆրանսիայի հասարակապետութեան օրինակով, և քաղաքային խորհուրդների կամ համայնական ժո-

1) Բեֆերենդում բառը յայտնի է ընթերցողներին, Իսկ սահմանադրական բեֆերենդումը (le referendum en matière constitutionnelle, Verfassungsreferendum) սահմանադրութեան հաստատութիւնն է ժողովրդի կողմից. (զանազանէլ օրէնսդրական, ֆինանսական և այլ բեֆերենդումից):

ղովների գերագոյն իշխանութիւնը փոխարենից ներկայացուցչական ուսմկապետութեամբ, որ հիմնւած է ազատութեան, հաւասարութեան և ժողովրդի լիազօրութեան վերացական սկզբունքների վրայ:» Ամեն մի 100 քաղաքացի՝ քսանամեայ հասակի, պիտի ընտրէին մէկին. այս ընտրւածները (électeurs Wahlmänner), իրանց կողմից ընտրում էին անդամներ՝ գերագոյն դատարանի, կառավարչական և օրէնսդրական խորհրդների համար:

Երկրում ամեն կողմից լսում էին եռանդուն պահանջներ հին պատմական իրաւունքները վերականգնելու մասին: Իսկ Նապոլէոնը սկսեց խառնել Զվիցերիայի քաղաքական գործերի մէջ: 1801 թ. առաջին հիւպատոսը ուղարկեց մալձեղոնեան նախագիծը, որի մէջ մի քանի զիջումներ էին արւած կանտոնների գերագոյն իշխանութեան: Այս նախագիծը չ'ընդունուեց, և նրան փոխարենից երկրորդ հելվետական սահմանադրութիւնը (1802 թ. սահմանադրութիւն): Դա առաջին սահմանադրութիւնն էր, որի վերաբերմամբ զվիցերիական ժողովուրդը պիտի ձայն տար. այսպիսով, սահմանադրական բեֆերենդումը մտցրեց Զվիցերիայում Ֆրանսիայից տասը տարի աւելի ուշ: Չայնտութիւնը կատարում էր ցուցակներով: Նախագիծը մերժվեց 20,000 ձայների մեծամասնութեամբ, 167,172 քաղաքացիք ձայնպահ եղան. այն ձայնպահներին հաշւեցին նրանց հետ, որոնք ձայն էին տւել յօգուտ սահմանադրութեան, զուցէ այն հիման վրայ, որ ով չէ բացասում, նա համաձայն է. սահմանադրութիւնը յայտարարեց «ընդունւած Հելվիցիայի իրաւատէր քաղաքացիների ահագին մեծամասնութեամբ» և զարձաւ հասարակապետութեան հիմնական օրէնք:

Նոր սահմանադրութիւնը չ'մեծացրեց ժողովրդի իրաւունքները. նախաձեռնութիւնը և օրէնսդրական բեֆերենդումը դեռ ևս անյայտ էին Զվիցերիայի քաղաքական կազմակերպութիւնների մէջ: Այնուհետև, 1830—1840 թ. ժամանակամիջոցում զվիցերիական ուսմկապետութիւնը բաւականին հասունացաւ և ձեռնամուխ եղաւ յեղափոխութեան ամենաօգտաւէտ զաղափարների իրագործման:

VI. Կ Ե Տ Օ.

վէտոն յայտնի էր դեռ ևս հռոմէական հասարակապետութեան մէջ. այնտեղ հասարակ ժողովուրդը (plebs) իրաւունք ստացաւ ծերակոյտում (սենատ) ունենալ իր ներկայացուցիչը, որը նիստերին ներկայ էր լինում, բայց խորհրդածութիւններին չէր մասնակցում Բաւական է ասելը՝ veto—թոյլ չեմ տալիս, որպէս զի սենատի կայացրած վճիռը ոչնչանար: Անցաւ ժամանակ, և այդ իրաւունքը յանձնւեց մի քանի ներկայացուցիչներին, և հէնց այդ էր որ սպառազոյցում դարձաւ հիմք կայսերական իշխանութեան:

Յրանսիական յեղափոխութեան ժամանակ (1791 թ. սահմանադրութիւնը) վէտոյի իրաւունքը յատկացրւած էր արքային. 1793 թ. օգոստոսի 9 եակորինեան սահմանադրութեան 115 յօդ. սկիզբը դրեց ժողովրդական վէտոյին:

Երբ յուլիսեան յեղափոխութեան շնորհիւ, արխատօկրատ միտումները Զւիցերիայում տեղի տւին սահմանադրական դադարներին, մի քանի կանտոններ իրանց սահմանադրութիւններին մէջ ժողովրդի իրաւունքը համարեցին ընդհանուր ձայնաւորութիւն պահանջելը, որպէս զի ժողովուրդը այս ձանապարհով կարողանայ մերժել օրէնսդրական իշխանութեան իրան ոչ ցանկալի կարգադրութիւնները և որոշումները:

Պայքարը սկսեց Մէն-Պալլէնի սահմանադրական խորհրդում¹⁾ 1831 թ. Պահպանողականները պնդում էին, որ ժողովրդի համար բաւական է ունենալ միայն ներկայացուցիչներ ընտրութեան իրաւունք, որ նա ընդունակ չէ անմիջապէս օգտուելու օրէնսդրական իշխանութիւնից. նրանք ասում էին, որ օրէնսդրական ձայնատուութիւններից կ'օգտուեն միայն սահմանադրական խորհրդի հետ յուզման մէջ պահելու համար: Սահմանադրական խորհրդի արմատականները, յուսալով, որ այս ներմուծութիւնը կ'տայ իրանց ձայների մեծամասնութիւն, հակաճառում էին, թէ հասարակապետութեան մէջ պիտի գերիշխէ ազգի կամքը, իսկ այդ կամքը չէ կարող, ինչպէս հարկն է, արտայայտուել միայն ներկայացուցիչներին ընտրութեան մէջ: Ժողովուրդը ընդունակ են համարում սրբագործել սահմանադրութիւնը ընդհանուր ձայնաւորութեան:

¹⁾ Ներկայացուցիչների ժողով, որոնք ընտրւած էին սահմանադրութեան նախագիծը կազմելու համար:

Թեան միջոցով—իսկ ինչո՞ւ նա անընդունակ է վճիռներ կայացնել աւելի հասարակ, սովորական օրէնքների վերաբերմամբ:

Արմատական կուսակցութիւնը չ'հասաւ իր պահանջների կատարման. ժողովրդին չ'տրեց իրաւունք անմիջական օրէնսդրութեան՝ պարտաւորիչ ձայնաւորութիւններով, բայց երկու կուսակցութիւնների միջև կայացաւ փոխադարձ զիջում, որի հետևանքը եղաւ ժողովրդական վէտոյի ներմուծումը: Մէն-Պալլէնի սահմանադրութիւնը (1831 թ.) որոշեց, որ բոլոր օրէնքները պիտի առաջարկւեն ժողովրդի հաստատութեան: Ժողովուրդը օգտուում է հաստատելու այս իրաւունքից այնպէս, որ նա, շնորհիւ իր գերադոյն իշխանութեան, կարող է չ'ընդունել այն օրէնքը, որ հրատարակել է օրէնսդրական ժողովը, և չ'թոյլ տալ, որ նա օրէնքի ոյժ ստանայ:

Այս սահմանադրութեան 135 յօդ. ասում է. ընդունելու իրաւունքը տարածուում է ամենից առաջ օրէնքների վրայ. ա) քաղաքացիական, քրէական և պետական դաշնագիրների, բ) պետական ծախսերին վերաբերեալ օրէնքների, գ) ընդհանուր կառավարութեան վերաբերեալ օրէնքների, դ) պատերազմական օրէնքների վրայ:

Ամեն մի օրէնք ոյժ է ստանում միայն 45 օր նրա հրատարակութիւնից անցած, եթէ այդ ժամանակամիջոցում չ'մերժւեց ժողովրդի կողմից: Եթէ նահանգի 50 քաղաքացիներ կ'պահանջեն նահանգական ժողով գումարել, նրանց պահանջը պիտի կատարուի, և ժողովը վճռում է, ընդունել հրատարակւած օրէնքը թէ մերժել: Եթէ քաղաքացիների մեծամասնութիւնը օրէնքին հակառակ կ'լինի, այն ժամանակ նա ոյժ չ'ունի. այս դէպքում ձայնապահ մնացածներին հաշուում են օրէնքի կողմնակիցների հետ:

Այսպիսով, ժողովրդին յատկացրւած էր վէտոյի իրաւունք, որ ուրիշ երկիրներում պատկանում է բացառապէս միապետներին: Մէն-Պալլէնի օրինակին հետևեցին նաև մի քանի կանտոններ. Բազելեան երկիրը 1832 թ., Վալլիս 1839 թ., Լիւցերն և Շաֆհաուզեն 1841 թ., Տուրգաու 1842 թ.: Յիւրիսում գործն ուրիշ ընթացք ստացաւ. սահմանադրական ձայնաւորութեան իրաւունքը 1842 թ. ազատամիտների և պահպանողականների զիմադրութիւնից:

Այնուհետև վէտոն տարածւեց ամբողջ Զւիցերիայում բեֆե-

րենդումի ձևով, որը նրանից շատ քիչ է տարբերում: Սէն-Ֆալ-լէնում սահմանադրութիւնը (1861 թ.) պահպանեց վէտօն, իսկ 1875 թ. սահմանադրութիւնը նրան փոխարինեց մասնաւոր բեֆերենդումով. այսպիսով, բեֆերենդումը գոյութիւն ունի այժմ համարեա բոլոր կանտոններում. իսկ վէտօն, բաւիա իսկական նշանակութեամբ, գոյութիւն չ'ունի ոչ մի տեղ: Վէտօն, իսկապէս, ունէր այն պակասութիւնը, որ աւելի ստորին իրաւասութիւն էր, քան բեֆերենդումը, և շատ կաշկանդում էր ժողովրդին: Նրա գլխաւոր տարբերութիւնը բեֆերենդումից կայանում էր նրանում, որ ունէր զուտ բացասական բնաւորութիւն: Բեֆերենդումը պարունակում է իր մէջ ընդհանրապէս պահանջ ժողովրդական ձայնատուութեան որ և է օրէնքի վերաբերմամբ, այն ինչ վէտօն նախապէս պահանջում է օրէնքի մերժումը: Այժմ օրէնսդրական վէտօն համարում են միայն անյաջող փորձ: Վէտօն մտցրին 1830 թ., իբրև զիջում սամկապետական պահանջներին և աւանդութիւններին, իսկ իրօք նա ժողովրդական իրաւունքի խարդախումն էր միայն:

1871 թ. դաշնակցական սահմանադրութեան նախագիծը քննելու ժամանակ վէտօն զտաւ իր տաղանդաւոր պաշտպանը յանձին Անդերվէրտի, բայց նրան պահպանեցին միայն 19 ձայներ. դրանից յետոյ այլ ևս խօսք չէ եղած նրա մասին դաշնակցական օրէնսդրութեան մէջ:

VII. ՉԻՒՅԵՐԻՍՅԻ ԵՒ ՀԻՒՍԻՍ. ԱՄԵՐԻԿ. ՄԻԱՅԵՈՒ ՆԱՀԱՆԳ-ՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆՑ ՀԱՄԵՄՏՏՈՒԹԻՒՆԸ.

Նոր Աշխարհում կազմել է դաշնակցական տէրութիւն, որի հաստատութիւնները կարևոր են նաև Չվիցերիայի համար: Ազատութեան ձգտումը Չվիցերիայում ծնունդ է առել քաղաքական պատճառներից. իսկ անգլիացի զիւղացիներին կրօնական շարժառիթները դրդեցին հիմնել Ամերիկայում անկախ գաղթականութիւններ: Չվիցերիական կանտոնների համայնական ժողովները, ինչպէս տեսանք, հին—գերմանական ծագում ունեն: Իսկ ամերիկական ուսմկապետութեան վերաբերմամբ մինչև օրս դեռ ապացուցւած չէ, որ նա միևնոյն աղբիւրից էր: Ծիշտ է, փորձեր ե-

ղան սերտ կապ գտնելու towchip'ների և ազգային ժողովների մէջ որոնք գոյութիւն ունէին V դ. էլրայի և Վեգէրի ափերում, բայց այդ towchip'ները հին—գերմանական ժողովների հետ կապելու համար, հարկաւոր կ'լինէր անգիտանալ բազմազարեան ընդհատումը, որ բաժանում է նրանց միմիանցից: Հնագոյն ժամանակներում անգլո—սաքսերը ազգային ժողովներ էին գումարում՝ պաշտօնական անձինք ընտրելու համար, բայց երբ նորմանները նւաճեցին Անգլիան, ժողովրդի գերագոյն իրաւունքի հարցը լըսեց մինչև Կոսմովելի զինւորների Agreement of the people:

Այս «ժողովրդան դաշնագիրը» 1647 թ. ներկայացւեց պարլամենտին, որը, քննելուց յետոյ, պիտի յանձնէր այն ժողովրդին: Այս ճանապարհով ծագած օրէնքը սահմանափակում էր պարլամենտի իշխանութիւնը և վճռողաբար ցոյց էր տալիս այն իրաւունքները, որոքն անմիջապէս պատկանում էին ժողովրդին:

Այս սամկապետական փորձից մի քանի տարի յետոյ, նոյնպէս և այսպէս կոչւած «ուխտաւոր հայրերի» (Pilgrim fathers) կրօնական շարժման ազդեցութեան տակ, Ամերիկայում ընդունւեց հիմնական կանոնադրութիւն (pacte): Անգլիական գաղթականութիւնների սահմանադրութիւնները Ամերիկայում առաջինը եղան ժամանակակից հասարակական իրաւագիտութեան պատմութեան մէջ: Ուստի օգտակար կ'լինի ծանօթանալ նրանց առաջին քայլերի հետ:

Կոնսեկտիկուտի Plantation covenant'ի օրինակով (1639 թ.) հիմնեցին մի քանի քաղաքական կազմակերպութիւններ, բացարձակ սամկապետական բնաւորութեամբ. պաշտօնական անձինք ընտրելու իրաւունքը պատկանում էր ժողովրդին, որովհետև նա հանդիսանում է իբրև աղբիւր ամեն մի իշխանութեան: Քաղաքացիների ժողովների իրաւունքները անսահման են, համայնքները՝ անկախ:

Մի ուրիշ տեղ Ամերիկայում, Ռոդ-Իսլանդում, գաղթականների ժողովը 1641 թ. միաձայն վճռեց ունենալ կառավարութեան սամկապետական ձև, այսինքն, սամկապետութիւն: Օրէնքների հրատարակութեան իրաւունքը պատկանում էր բոլոր քաղաքացիների ժողովին. այդպիսի ժողովները, որոնք կանոնաւոր կերպով գումարւում էին, ընտրում էին պաշտօնական անձինք, որոնք պէտք է հսկէին, որպէս զի անխտիր բոլոր քաղաքացիները հպա-

տակէին օրէնքներին: Այն հրովարտակները, որ տեղի Անգլիայի թագաւորական իշխանութիւնը, հաստատեցին այս վճիռները, որոնք իրանց ոյժը պահանջեցին մինչև 1818 և 1848 թթ.:

Բայց ամերիկական յեղափոխութեան մէջ ամենակարևոր դերը պիտի կատարէր Մասաչուզետի սահմանադրութիւնը, որը նոր Անգլիայի ամենախոշոր գաղթականութիւնն էր: Այս սահմանադրութեան համաձայն, պետութեան գոյութեան նպատակը կայանում է քաղաքացիների և նրանց բնական իրաւունքների պաշտպանութեան մէջ: Եթէ այս նպատակը չէ իրագործում լիովին, ժողովուրդը կատարեալ իրաւունք ունի փոխել կառավարութիւնը և ձեռք առնել այն բոլոր միջոցները որ նա հարկաւոր կ'համարէ տէրութիւնը բարեկեցիկ և ծաղկած զրութեան համար: Ժողովուրդը պարտաւոր է հաստատուն պահել սահմանադրութիւնը և հրատարակել այնպիսի օրէնքներ, որոնք ամեն մի քաղաքացու կարողանան պահպանել և պաշտպանել:

Այս սահմանադրութիւնը 1780 թ. ենթարկեց ժողովրդական ձայնաւորութեան համայնական ժողովներում (town meetings) և ընդունեց ձայների մեծամասնութեամբ:

Այսպիսով, մինչև իրաւունքների յայտարարութիւնը (Declaration of rights) Նոր Անգլիայում տիրապետում էր զուտ սահմանադրութիւնը՝ սահմանափակած միայն թագի բարձրագոյն հովանաւորութեամբ:

Յուլիսի 4-ին 1776 թ. տասներեք գաղթականութիւններ իրանց անկախ յայտարարեցին մետրոպոլիտից արքայական իշխանութեան անկումը բնական կերպով առաջ բերեց հասարակապետական կազմակերպութիւն: Սկզբունքով միայն ժողովուրդը պետական կազմակերպութիւն: Սկզբունքով միայն ժողովուրդը ունի իրաւունք հաստատել կառավարութիւնը՝ համաձայն ընդհանուր բարիքի պահանջներին. այդպէս է այն հիմքը, որի վրայ նուր բարիքի պահանջներին. այդպէս է այն հիմքը, որի վրայ հաստատւած է Ամերիկայի քաղաքական կազմը: Այնտեղ առաջին անգամ ժամանակակից մեծ տէրութեան մէջ վերանորոգեց անտիկ իրաւունքի արքայութիւնը. lex est, quod populus iubet atque constituit, — իրաւունքն այն է, ինչ որ ժողովուրդը ցոյց է տալիս և հաստատում է:

1787 թ. դաշնակցական սահմանադրութեան 5 յօդ. ասում է սահմանադրութեան միւս, հետեւալ փոփոխութիւնների մասին. «Երբ երկու պալատները ձայների երկու երրորդական մեծամաս-

նութեամբ հարկաւոր կ'համարեն, կոնգրեսը պէտք է առաջարկէ ներկայ սահմանադրութեան փոփոխութիւնները կամ նրա լրացումը. նահանգների (շտատ) օրէնսդրական ժողովների երկու երրորդականի պահանջով նա պէտք է նոյնպէս հրաւիրէ կոնվենտ փոփոխութիւնների նախագծեր կազմելու համար»...

Այսպիսով, վերաքննութիւնը դրւած է սյստեղ դժար պայմանների մէջ, բայց չպէտք է զարմանալ Ամերիկայի դաշնակցական սահմանադրութեան պահպանողական լինելու վրայ: Չէ որ նրա փոփոխութիւնը, որ ոչնչացրեց ստրկութիւնը, առաջ բերեց սարսափելի քաղաքացիական պատերազմ: Մինչև այժմ ամերիկական սահմանադրութիւնները քիչ են փոխել: Այնտեղ չկայ նախաձեռնութեան մշտական իրաւունք, ինչպէս այդ գոյութիւն ունի Չվիցերիայում:

Սակայն մի քանի նահանգներում—Նիւ-Իօրկ, Օհայօ, Նիւ-Հէմպշիր և այլն—քաղաքացիներից պարբերաբար հարցնում են, հարկաւոր է արդեօք վերաքննել սահմանադրութիւնը թէ ոչ: Ընդհանուր վերաքննութեան գործը յանձնւում է առանձին կոնվենտի, որը կարող է բոլորովին փոփոխել հիմնական օրէնքը թէ ըստ էութեան և թէ ըստ ձևի. Բայց վերաքննւած սահմանադրութիւնը ոյժ է ստանում միայն այն ժամանակ, երբ նա ընդունւած է, ընդհանուր ձայնաւորութեան միջոցով, քաղաքացիների մեծամասնութեան կողմից: Մենք չենք կարող կանգ առնել այստեղ մանրամասնութիւնների վրայ. ընդհանուր վերաքննութեան պայմանները միատեսակ չեն Ամերիկայի բոլոր նահանգներում:

Մասնաւոր վերաքննութիւնը թողւած է օրէնսդրական ժողովին, որ կատարում է այն իր նախաձեռնութեամբ, բայց հետեւալ սահմանափակումներով. Նիւ-Ջերսիում և Պենսիլվանիայում մասնաւոր վերաքննութիւն կարող է կատարել միայն հինգ տարին մի անգամ. Տենեսսիում՝ վեց տարին մի անգամ. շատ նահանգներում (Լուիզիանա, Օհայօ, Օրեգոն) պահանջւում է, սկսած 1838 թ., որ քաղաքացիներից հարցնեն ամեն անգամ, երբ սահմանադրութիւնը փոփոխելու ենթադրութիւն է լինում. Իլլինոյսում ընդունւած յօդւածը կարող է ենթարկել նոր վերաքննութեան միայն չորս տարի անցնելուց յետոյ: Վերաքննւած սահմանադրութիւնն ընդունելու համար համարեա ամեն տեղ պահանջւում է ձայն տուողների հասարակ մեծամասնութիւն, բայց Ռոդ-



Իսլանդում անհրաժեշտ է երեք հինգերորդականը, իսկ Օրեգոնում և Ինդիանայում հարկաւոր է, որ ձայնաւութեան մասնակցած լինի քաղաքացիների մեծամասնութիւնը:

Սահմանադրութեան վերաքննութեան դիւրութիւնը ներկայացնում է մի զարմանալի հակապատկեր այս հասարակատեան-պահպանողական սահմանափակումներին: Չվիցերիայի դաշնակցական սահմանադրութեան մէջ ոչ մի սահմանափակում չ'կայ, նա միայն դիւրացնում է վերաքննութիւնները:

Ամերիկայի սահմանադրութեան զարմանալի առանձնայատկութիւնը կազմում է դատարանների իրաւունքը գործադրական իշխանութիւնների՝ իրանց իրաւասութիւնից դուրս գալը կասեցնել: Այն օրէնքները և որոշումները, որոնք հակառակ են սահմանադրութեան, ամեն մի առանձին դէպքում համարւում են ոյժ չ'ունեցող: Մենք ասում ենք. համարւում են ոյժ չ'ունեցող, բայց չեն վերացւում. դատավարական իշխանութիւնը, հարկաւ, չէ կարող վերացնել հակասահմանադրական օրէնքները. դատարանը, իբրև քաղաքացիների պաշտպան սահմանադրական իրաւունքներից օգտւելու խնդրում, պարտաւոր է միայն քննել, ծագած վէճերի դէպքում, համաձայն է արդեօք սահմանադրութեան հետ այս կամ այն օրէնքը: Այսպիսով, դատարանը մեծ քաղաքական իրաւունքներ է վայելում. նրա վճիռները հիմնւում են ոչ միայն օրէնքի, այլ և սահմանադրութեան վրայ, եթէ միայն նրա և օրէնքի մէջ կայ տարաձայնութիւն, և նա կարող է արգելել օրէնքի գործադրութիւնը, եթէ հակառակ է սահմանադրութեան:

1848 թ. սահմանադրութիւնը Չվիցերիայում, որ հաստատեց դաշնակցական դատարանը, չ'դրեց նրա վրայ քաղաքացիների սահմանադրական իրաւունքների ապահովութիւն. այս կամ այն օրէնքի սահմանադրական լինելու խնդիրը վճուում է դաշնակցական ժողովի, այսինքն, քաղաքական հիմնարկութեան: Կողմից: Ըստ սահմանադրութեան 1874 թ., դաշնակցական դատարանը վճուում է զանգատները, վերաբերեալ իրաւունքների լատուելուն, այն իրաւունքների, որոնք ապահովւած են քաղաքացիների համար դաշնակցական սահմանադրութեամբ և դաշնակցական օրէնքներով՝ հիմնւած նրա վրայ, կամ կանտոնների սահմանադրութիւններով: Կառավարչական կամ քաղաքական բնաւորութիւն ունեցող գանդատները ենթակայ են դաշնակցական խոր-

հրդի և, աւելի բարձր, դաշնակցական ժողովի հայեցողութեան. իսկ այն զանգատները, որոնք վերաբերում են քրէական կամ քաղաքացիական իրաւունքին, կամ այնպիսիները, որոնց վճիռը կախած է զուտ իրաւաբանական խորհրդածութիւններից, ենթակայ են դաշնակցական դատարանին: Վերջապէս կանտոնական սահմանադրութեանց անձեռնմխելիութիւնը պահովւած է դաշնակցութեան կողմից. նրանց մեկնութիւնը պատկանում է վերջին ինստանցիայում դաշնակցական իշխանութիւններին, որոնք կարևոր դէպքերում ընդունում եղ կանտոնների գերագոյն իշխանութեան մեկնութիւնը: Կանտոնական սահմանադրութիւնները նոյնպէս իրաւունք չեն տալիս դատարաններին մերժել հակասահմանադրական օրէնքների կատարումը: Օրէնքները և ընդհանուր-պարտաւորիչ կարգադրութիւնները, որ ընդունել է դաշնակցական ժողովը, նոյնպէս և նրա միջոցով հաստատած դաշնագիրները պարտաւորիչ են դաշնակցական դատարանի համար (յօդ. 113): Դատարանը իրաւունք չ'ունի քննելու, համաձայն է արդեօք այս կամ այն օրէնքը կամ տրակտատը սահմանադրութեան թէ ոչ. այդ վճուում է ինքը օրէնսդրական իշխանութիւնը: Դաշնակցական դատարանը կարող է միայն քննել, թէ այս կամ այն օրէնքը հրատարակել է արդեօք պահպանելով այն ձևը, որ նշանակել է սահմանադրութիւնը: Յետոյ, նա կարող է բողոքել օրէնքի դէմ, գանդատի ձևով, 60 օրւայ ընթացքում նրա հրատարակութիւնից յետոյ, նա կարող է նոյնպէս ընդունել, որ գոյութիւն ունեցող օրէնքը չէ վերաբերում այս կամ այն դէպքին:

Դաշնակցական խորհուրդը և դաշնակցական ժողովը իրաւունք ունեն, սեփական ձեռներէցութեամբ, բողոքել այն օրէնքների դէմ, որոնք հակառակ են դաշնակցական կամ կանտոնական որոշումներին, որոնք ընդունւած են հասարակական կարգ ու կանոնի համար:

Ընդհանրապէս, Չվիցերիայում գոյութիւն չ'ունի ամերիկական դատարանների իրաւունքը՝ քննելու, համաձայն է արդեօք օրէնքը սահմանադրութեան:

VIII. ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԺՈՂՈՎՈՒՐԴ

§ 1. Դասնակցական սահմանադրութիւնը 1848 թ.

1815 թ. դաշնագրով քսան երկու կանտոններ փորձեցին ամբաստանել այն կապերը, որ նրանց միացնում էր, բայց միայն 1848 թ. սահմանադրութիւնը դարձրեց Չվիցերիան իսկական դաշնակցական տէրութիւն:

Երբ 1830 թ. Ֆրանսիական յեղափոխութիւնից յետոյ կանտոնական սահմանադրութիւնների մեծ մասը ենթարկեց վերաքննութեան ազատամիտ մտքով, զգացեց մի անդիմադրելի անհրաժեշտութիւն վերաքննելու դաշնակցութիւնը: Պրոֆեսոր Բոսսին մի նախագիծ կազմեց, որի համաձայն դաշնակցութեան մասնաւոր վերաքննութիւնը կարող էր տեղի ունենալ վեց տարին մի անգամ. իսկ ընդհանուր վերաքննութիւն կատարել կարելի էր ութ կանտոնների առաջարկով և 14 կանտոնների համաձայնութեամբ: Այս նախագիծը ենթարկեց կանտոնական մեծ խորհրդների ձայնտուութեան. Չորտուերում ենթարկեց ձայնտուութեան և մերժեց ժողովրդի սուտ մեծամասնութեան կողմից. նոյնը տեղի ունեցաւ և Լիցեքերնում: Լիցեքերնի ձայնտուութեան հետևանքը մեծ տպաւորութիւն գործեց մասնաւոր այն պատճառով, որ այն ժամանակ Լիցեքերնը առաջնակարգ կանտոն էր և նախագծի ընդունելութիւնն այստեղ անհրաժեշտ էր նրա համար, որպէս զի մեծամասնութիւն կազմէր յօգուտ այդ նախագծին (բոլոր կանտոնների ձայները հաւասար էին, առանց հաշւի աւնելու նրանց տարածութիւնը և ազգաբնակչութեան խտութիւնը):

Սահմանադրութեան նախագիծը տապալեց: Քաղաքացիական պատերազմը և փետրուարեան յեղափոխութիւնը Ֆրանսիայում առաջացրին շարժում յօգուտ վերաքննութեան, որ և յաջողութեամբ պսակեց:

1848 թ. սահմանադրութիւնը, խիստ չ'սահմանափակելով կանտոնների իրաւունքները, աշխատում էր բաժանել գերագոյն իշխանութիւնը դաշնակցութեան և կանտոնների մէջ. նրա երրորդ յօդուածն ասում է. «Կանտոնները լիազօր են այնքան, որքան նրանց լիազօրութիւնը չէ սահմանափակւած դաշնակցական սահմանադրութեամբ, և, իրրեւ այդպիսիները, օգուտում են այն բո-

լոր իրաւունքներից, որոնք յանձնւած չեն դաշնակցական իշխանութեան»:

Այն ժամանակ կարծում էին, որ գերագոյն իշխանութեան բաժանումը դաշնակցութեան և կանտոնների մէջ կազմում է դաշնակցութեան էութիւնը. բայց իրօք գերակշռեց ժողովրդի լիազօրութիւնը:

Ամերիկայի օրինակով, Չվիցերիայում էլ մտցրեց երկու պալատի սիստեմը. Ազգային խորհուրդը որ կազմւած էր ժողովրդի ներկայացուցիչներից (20,000 բնակիչների վրայ մէկը 1), և կանտոնների խորհուրդը, բաղկացած քսաներկու կանտոնների 44 ներկայացուցիչներից: Այս երկու խորհուրդները համագումարւած նիստերում կազմում են դաշնակցական ժողով, որ ընտրում է դաշնակցական խորհրդի *) և դաշնակցական դատարանի անդամներին երեք տարով:

Ժողովրդական օրէնսդրութիւնը նախատեսւած է սահմանադրութեան հետեւալ յօդուածներով.

«Յօդ. 111.— Դաշնակցական սահմանադրութիւնը կարող է վերաքննել ամեն ժամանակ:

«Յօդ. 112.— Վերաքննութիւնը կատարւում է դաշնակցական օրէնսդրութեան ճանապարհով:

«Յօդ. 113.— Եթէ դաշնակցական ժողովի մի մասը կ'վճուի վերաքննութիւն կատարել, իսկ միւս մասը չ'համաձայնի նրա հետ, կամ եթէ 50,000 իրաւատէր զվիցերիացի քաղաքացիներ կ'պահանջեն դաշնակցական սահմանադրութեան վերաքննութիւն, այն ժամանակ այս երկու դէպքումն էլ վերաքննութիւն կատարելու հարցը պէտք է յանձնել ժողովրդի ձայնտուութեան:— Եթէ այս երկուսից մի դէպքում զվիցերիական քաղաքացիների մեծամասնութիւնը, որը մասնակցում է ձայնտուութեան, կարծիք կը յայտնէ դրական մտքով, այն ժամանակ երկու խորհուրդն էլ պիտի վերընտրեն՝ վերաքննութիւն կատարելու համար:

«Յօդ. 114.— Վերաքննւած դաշնակցական սահմանադրութիւնը ոյժ է ստանում, եթէ նա ընդունւած է զվիցերիացի քա-

*) Դաշնակցական խորհուրդը—բարձրագոյն գործադիր իշխանութիւնն է դաշնակցութեան մէջ. այս հիմնարկութիւնը փոքր ինչ նմանութիւն ունի պարլամենտար երկիրների միջխորութիւնների հետ:

դաքացիները մեծամասնութեան և կանտոնների մեծամասնութեան կողմից»:

Վերաքննութեան նախաձեռնութիւնը թողնւած է ինչպէս ժողովրդին, նոյնպէս և դաշնակցական պալատներին. իսկ վերաքննութեան սրբազործութիւնը պատկանում է միաժամանակ ժողովրդին և կանտոններին: Այսպիսով արտայայտւած էր կանտոնների լիազօրութեան սկզբունքի, խոստովանութիւնը: Այստեղ առաջին անգամն է երևում ձայն տուող քաղաքացիների մեծամասնութիւնը. առաջ ամեն անգամ նրանց, որոնք ձայնպահ էին մընում, հաշուում էին յօգուտ այս կամ այն սուղարկութեան ձայն տուողների հետ:

Յօդ. 111-ը դանադանութիւն չէ դնում մասնաւոր և ընդհանուր վերաքննութիւնների մէջ: Բազէլ քաղաքի դեսպանութիւնը առաջարկում էր փոխել նրա բնադիրը հետևեալ կերպով. «Պաշտակցական սահմանադրութիւնը կարող է վերաքննել ամեն ժամանակ, թէ մասամբ և թէ իր ամբողջ ծաւալով»:

Բայց այս փոփոխութիւնը չ'ընդունեց: Յետագայում յաճախ վէճեր էին բարձրանում այն բացատրութիւնների առիթով, որ կարելի է տալ այս յօդւածին, թէ և արձանագրութեան մէջ պարզ արտայայտւած էր, որ այս փոփոխութիւնը չէ ընդունել այն պատճառով, որ մեծամասնութիւնը, համաձայն նրա իմաստի, հնարաւոր էր գտնում դաշնագրի մասնաւոր վերաքննութիւնը միևնոյն պայմաններում, ինչպէս ընդհանուր վերաքննութիւնը:

Այս խնդիրը վճուեց միայն 1891 թ.

Յօդ. 112-ի վերաբերմամբ շատ անգամ սխալմամբ ասում են, որ դաշնակցական հասարակական իրաւունքը դարձնում է սահմանադրական իրաւունքը համահաւասար օրէնսդրականին: Այս յօդւածը, ընդհակառակը, միայն որոշում է այն, որ դաշնակցական վերաքննութիւնը կատարւում է ոչ թէ մի որևէ հաստատութեան կողմից, այլ այն ճանապարհով, որ որոշւած է դաշնակցական օրէնսդրութեան համար, նախագիծը պիտի քննել երկու պալատների կողմից առանձնապէս: Եթէ երկու պալատն էլ համաձայն են վերաքննութեան անհրաժեշտութեան մասին, անկասկած է, որ նրանք այդ կ'կատարեն, ինչպէս հարկն է:

Իսկ եթէ դաշնակցական ժողովում կ'ծագէ տարաձայնութիւն, գործը վճուում է նոյն այն ճանապարհով, ինչպէս և այն

դէպքում, երբ վերաքննութիւն պահանջում է ժողովրդական նախաձեռնութիւնը: 50,000 ստորագրութիւններն այն ժամանակ համապատասխանում էին քաղաքացիների ամբողջ թւի ութերորդ մասին. նրանք կ'լինէին վերաքննութիւն պահանջող ժողովրդի կամքի բաւական համոզիչ արտայայտութիւնը:

Այս սահմանադրութիւնը, որ օրգանական կապով միացնում էր զվիցերիական ժողովուրդը, չ'ենթարկեց ընդհանուր ձայնտուութեան. ձայն տւին միայն կանտոնները. նրանք համարեա բոլորը յանձնեցին այն՝ ժողովրդի ձայնտուութեան, բայց այս ձայնտուութիւնների հետևանքները համարւում էին, իբրև կանտոնների ձայներ: Սահմանադրութիւնը ընդունեց $15\frac{1}{2}$ ձայնով ընդդէմ $6\frac{1}{2}$ ձայնի:

Վերաքննութեան վերաբերեալ յիշւած յօդւածները անփոփոխ մտան 1874 թ. այժմ գործադրող սահմանադրութեան մէջ (յօդ. 118—121), միայն 114 յօդ. (այժմ 121) ստացաւ հետևեալ լրացումը. «Կանտոնական ձայները հաշուելիս՝ կէս կանտոնի ձայնը համարւում է կէս ձայն: Կանտոնական ձայն համարւում է ամեն մի կանտոնի ժողովրդական ձայնատուութեան արդիւնքը»:

Դաշնակցական սահմանադրութեան երրորդ բաժինը, որ պարունակում է վերաքննութեան վերաբերեալ յօդւածներ, յետագայում վերաքննեց ժողովրդական ձայնատուութեամբ 5 յուլիսի 1891 թ., որի մասին խօսք կ'լինի ներքև:

Պէտք է նկատել, որ Զուիցերիայում ժողովուրդը աւելի շատ է զբաղւում սահմանադրութեամբ, քան Միացեալ Նահանգներում:

Միացեալ Նահանգներում սահմանադրութիւնը (դաշնակցական) ընդունւում կամ մերժւում է զանազան նահանգների միայն 44 օրէնսդրական ժողովների կողմից. այնտեղ անհրաժեշտ է միայն մի ֆակտոր—նահանգների մեծամասնութիւնը: Իսկ Զվիցերիայում գործը վճուում է երկու ֆակտորներով՝ կանտոնների մեծամասնութեամբ և քաղաքացիների մեծամասնութեամբ:

§ 2. Ս. հուման դր. կան նախաձեռնութիւնը կս նսոններում.


Կանտոնական սահմանադրութիւնները, որոնք ոյժ ստացան 1830 թ. յետոյ, նախաձեռնութեան իրաւունքը յատկացնում էին

միայն օրէնսդրական իշխանութիւններին: Այս իշխանութիւնները, որոնք պահպանողական էին իրանց ձգտումներով և ոգով, միայն երբեմն էին օգտուում իրանց յատկացրած իրաւունքից: Մի քանի կանտոններում, այն է՝ Աարգաու, Բազիլեան Երկիր և Շաֆֆհաուզէն, քաղաքացիները կարող էին, խնդրատուութեան պատրւակով, պահանջել ձայնտուութիւն վերաքննութեան անհրաժեշտութեան վերաբերմամբ, բայց նրանք պէտք է ժողովէին ստորագրութիւններ մի որոշ թիւ: Ուրիշ կանտոններում վերաքննութիւնը կարող էր կատարել միայն յայտնի ժամանակամիջոցներից յետոյ. մի քան որ համահաւասար է սահմանափակման: 1848 թ. դաշնակցական սահմանադրութիւնը կանոնաւորեց այս բազմազան որոշումները իր 5 և 6 յօդուածներով: Դաշնակցութիւնը պահպանում և ապահովում է կանտոնական սահմանադրութիւնները, նոյնպէս և քաղաքացիների սահմանադրական իրաւունքները. կանտոններն էլ, միւս կողմից, պարտաւոր են դաշնակցութիւնից ստանալ երաշխաւորութիւն իրանց սահմանադրութիւնների համար: Դաշնակցութիւնը տալիս է այդ երաշխաւորութիւնը, եթէ կանտոնական սահմանադրութիւնը բաւարարութիւն է տալիս յայտնի պահանջներին, որոնցից գլխաւորը կայանում է նրանում, որ նա պէտք է ենթարկւի վերաքննութեան, երբ այդ կ'պահանջէ քաղաքացիների բացարձակ մեծամասնութիւնը: Իրօք կանտոնական սահմանադրութիւնը կարող է վերաքննել ամեն ժամանակ, եթէ այդ կ'պահանջէ նրա ցոյց տւած՝ քաղաքացիների (համեմատաբար աննշան) թիւը: Բոլոր կանտոնները զանազանութիւն են դնում ընդհանուր և մասնաւոր վերաքննութեան մէջ, բացի Զոլոտուրնից, ուր գոյութիւն չ'ունեն մասնաւոր վերաքննութիւններ:

Կայ երկու տեսակ նախաձեռնութիւն. մի քաղաքացու—անհատական նախաձեռնութիւնն է, և պահանջը մի որոշ թւի քաղաքացիների, որոնք զրա համար ստորագրութիւններ են տւել, — հաւաքական նախաձեռնութիւնն է:

Ա. Անհատական նախաձեռնութիւն.

Անհատական նախաձեռնութիւնը, այսինքն, անձնական ձեռներէցութիւնը օրէնքներ հրատարակելու կամ սահմանադրութիւ-



նը վերաքննելու գործում, ինչպէս մենք տեսանք, իր սկզբնաւորութիւնն առնուած է առաջարկութեան իրաւունքից, որ գործադրուած էր զանազան կանտոնների համայնական ժողովներում: Գլխաւորում և Ներքին Ռ-ի Ապպէնցիլում իւրաքանչիւր իրաւատէր քաղաքացի կարող է առաջարկել իր նախագիծը՝ հանգամանօրէն մշակած: Այստեղ տարբերութիւն չէ գրւում սահմանադրութեան և հասարակ օրէնքի մէջ. օրէնքների կամ սահմանադրութեան վերաքննութեան արաջարկները կարգաւորուած են միևնոյն կանոններով:

Յիւրիխում, որի նոր սահմանադրութիւնը մի դարագլուխ է կազմում ժողովրդական օրէնսդրութեան պատմութեան մէջ, 1869 թ. մտցրւած է, հաւաքական նախաձեռնութեան հետ միասին, նոյնպէս և անհատական կամ անձնական նախաձեռնութիւն, և միևնոյն ժամանակ ոչ մի զանազանութիւն չէ գրւած մասնաւոր վերաքննութիւնների և նոր օրէնքների հրատարակութեան մէջ¹⁾:

Ժողովրդի նախաձեռնութեան ճանապարհով որոշւած ընդհանուր վերաքննութիւնը առաջ է բերում կանտոնական խորհրդի վերընտրութիւն, և վերաքննութեան վերաբերեալ հարցերը քննուում են երկու անգամ: Այս երկու քննութիւնների միջև պիտի անցնի երկու ամիս:

Իււրաքանչիւր քաղաքացի կարող է առաջարկել կանտոնական խորհրդին իր հանգամանօրէն մշակած նախագիծը. եթէ այս նախագիծը կ'պահպանեն խորհրդի նիստին ներկայ եղող անդամների երրորդ մասը, կամ 5,000 իրաւատէր քաղաքացիներ, այն ժամանակ նա անփոփոխ պիտի յանձնի ժողովրդական ձայնտուութեան: Այսպիսով, այն քաղաքացին, որը ցանկանում է առաջարկել օրինագիծը ժողովրդի հայեցողութեան, ունի իր առաջ երկու ճանապարհ:

Շտիւսսին գտնում է, որ այս ճանապարհն էլ անբաւարար է, և ցանկանում է, որ անձնական նախաձեռնութեան իրաւունքը աւելի ևս ընդարձակւած լինի: Նա կարծում է, որ ամեն մի քաղաքացի, որը ցանկանում է օգտւել իր նախաձեռնութեան իրաւունքից, պէտք է հնարաւորութիւն ունենայ անձամբ ներկայացնել իր նախագիծը կանտոնական խորհրդին: Յետոյ մի առան-

¹⁾ Աարգաուում, Շաֆֆհաուզէնում և Շվիցում նոյնպէս չ'կայ տարբերութիւն սահմանադրական և օրէնսդրական նախաձեռնութեան մէջ:

ձին մասնաժողով՝ նախագիծ տւողի հետ միասին պիտի քննէ նրա առաջարկը և, իրանց հարկաւոր լինի, միասին ուղղէ այն. վերջապէս, նախագիծը—փոփոխւած կամ անփոփոխ—պիտի ենթարկուի ժողովրդական ձայնաւուծեան: Այդպիսի դէպքում մենք կունենայինք իրէջարկական նախաձեռնութիւն, որը կ'պահպանէր անհատի իրաւունքները և կ'ապահովէր սահմանադրութիւնը կամայականութիւնից:

Եւ իրաւ. պարզ է, որ խորհուրդը առանց այլևայլութեան կ'մերժէ այն առաջարկը, որ ակնյայտնի անհեթեթութիւն կ'լինի: Բայց արդեօք խորհուրդը կարճդ է ամեն անգամ ինքը վճռել, որ ներկայացւած նախագիծերը—անհեթեթութիւններ են: Բլունտալին ասում է այս խնդրի առիթով. «Ես համոզւած եմ, որ ստորին դասակարգերի մէջ, ինչպէս և աւագ խորհրդում, կան մարդիկ, որոնք օժտւած են հեռատեսութեամբ, չ'նայած նրանց պարզութեան»: Շախասին աւելացնում է. «Եթէ մինչև անգամ թոյլ տանք, որ մէկնումէկը մի անմիտ առաջարկութիւն կ'անէ և յամառութեամբ կ'պաշտպանէ այն, ի՞նչ ֆլաս գրանից: Ամենին ոչ մի ֆլաս. ժողովուրդը հասարակ կերպով կ'մերժէ անհեթեթութիւնը,— և զրանով բանը կ'վերջանայ: Ի՞նչ նշանակութիւն կարող է ունենալ այն չնչին անյարմարութիւնը, որ ժողովուրդը կ'մերժէ օրէնսդրական առաջարկը, համեմատած այն մեծ օգուտների հետ, որ տալիս է ազատ նախաձեռնութիւնը: Մի՞թէ այս անյարմարութիւնները չ'կան և այժմ՝ սահմանադրութեան ներկայ ձևում: Մի՞թէ մենք չենք տեսել արդէն, որ ժողովուրդը մերժում է անհամապատասխան նախագիծերը, առաջարկւած նոյն իսկ իշխանութիւնից: Բայց ո՞ւմ մտքովն է անցել զրա պատճառով հրաժարել նախաձեռնութեան իր անձնական իրաւունքից:

Բ. Հասարական նախաձեռնութիւն.

Կանտոնների ստւար մեծամասնութեան մէջ գոյութիւն ունի հաւաքական նախաձեռնութիւնը, այսինքն այնպիսին, որի համար պահանջուած է իրաւատէր քաղաքացիների մի յայտնի, կանտոնական սահմանադրութիւնից որոշւած թիւ: Այս թիւը

տատանւում է 50-ի (Ուրիում) և 10,000-ի մէջ (Ալն-Գալլէնում 1):

Ընդհանուր վերաքննութիւն պահանջելու համար՝ բաւական է միայն մի հասարակ ցուցմունք, որ այդ հարկաւոր է: Մասնաւոր վերաքննութիւնը առաջարկուած է մշակւած նախագծի ձևով. նա կարող է առաջարկել նոյնպէս օրէնսդրական իշխանութեան կողմից: Բուն ժողովրդի կողմից սակաւ են պատահում գրգռումներ յօգուտ վերաքննութեան. պահանջի (նախաձեռնութեան) ընապիրը կազմում են ընդդիմադիր կուսակցութեան պարագլուխները, դժգոհ քաղաքական գործիչները. ստորագրութիւններ ժողովից կարող են գործ դնել բոլոր միջոցները: «Որպէս զի ստիպին ստորագրել նրանց, որոնք համաձայն չեն, սպանում են կուսակցական խստապահութեամբ, գործ են ածում բոլոր հասարակական ազդեցութիւնը, օգուտում են բարեկամական կապերից, նիւթական շահերից. նոյն իսկ կանանց ստիպում են ստորագրել իրանց ամուսինների, որդոց և հայրերի փոխարէն. ով համաձայն չէ, նրա վրայ ամեն տեսակ ճնշումներ են գործ դնում, մինչև որ նա զիջանում է, միայն թէ իրան հանգիստ թողնեն. նրա գործը հեշտացնում են, առաջարկելով, որ նա միայն կիսով չափ համաձայնութիւն տայ և թոյլատրի ստորագրել իր փոխարէն: Ընդհանրապէս ստորագրողն այնքան ժամանակ չէ կաշող ունենալ, որ նայի նախագիծը և նրա հիմունքները: Նրան ասում են, թէ մօտաւորապէս ինչպէս է բանը, և այս զրգուումների ժամանակ ճշմարտութիւնը շատ էլ չէ յարգուում:

Այժմ հարց է, կարճդ է արդեօք մի այդպիսի նախաձեռնութիւն, որը մենավաճառի առարկայ է դարձել յօգուտ նրանց, որոնք ժամանակ և շահ ունեն գրգռումներ վարելու, կարճդ է արդեօք համարել օրինաւոր և արդար ձև ժողովրդի աջակցութեան՝ պետական գործերը բարեփոխելու վերաբերմամբ: Կայ արդեօք

¹⁾ Ներկայումս Ս. Գալլէնից աւելի մեծ թւով ստորագրութիւններ պահանջում են սահմանադրական նախաձեռնութեան համար Բեռնի կանտոնում: Համաձայն Բեռնի 1846 թ. սահմանադրութեան, այստեղ քաղաքացիները կարող էին պահանջել միայն վնդնաւուր վերաքննութիւն, որի համար հարկաւոր էր 8000 ստորագրութիւն: 1893 թ. սահմանադրութիւնը քաղաքացիներին տրւեց նախաձեռնութեան իրաւունք նոյնպէս և մասնաւոր վերաքննութիւնների վերաբերմամբ, բայց ստորագրութիւնների թիւը աւելացրեց երկու դեպքի համար էլ մինչև 15,000: Միևնոյն 1893 թ. սահմանադրութիւնը մտցրեց Բեռնում նաև օրէնսդրական նախաձեռնութիւն (12,000 ստորագրութիւններ):

այս ընդունուած սովորութեան մէջ մի տարր, որ նպաստում է ժողովրդի քաղաքական կրթութեան»։ (Շտրուսի 1)

§ 3. Առհասարակ վերաբերեալ ձայնուութիւններ կան- սնններում։

Սահմանադրութեան ընդհանուր և մասնաւոր վերաքննու- թեան համար նա պիտի ենթարկուի ժողովրդի ձայնուութեան. ոյժ ստանալ կարող է միայն այն ժամանակ, եթէ ընդուն- ւած է ժողովրդի կողմից։ Յամենայն դէպս, նա չ'պիտի պարու- նակէ իր մէջ այնպիսի մի բան, որ հակառակ է սահմանադրու- թեան։ Դաշնակցութիւնը քննում է այն, և նրա այն յօդւածները, որոնք բաւարարութիւն չեն տալիս դաշնակցական սահմանադրու- թեան 6 յօդ. պահանջին, համարւում են չ'եղած։²⁾

Անտարակոյս, ժողովրդի համար մեծ բան էր այն, որ նա ստացաւ իրաւունք՝ յայտնել իր կամքը սահմանադրութիւնն ըն- դունելու վերաբերմամբ։

Այդ վաստակն ունեցաւ ժողովուրդը 1830—1840 թ. ժամա- նակամիջոցում։ Դրանից առաջ այդ իրաւունքը՝ գոյութիւն ունէր միայն համայնական ժողովներով կառավարող կանտոններում, նոյնպէս և Գրաուբիւրգէնում և Ժընևում, ուր սահմանադրութիւնը յանձնւում էր ժողովրդի ձայնուութեան՝ «նրանց բնածին իրա- ւունքի զօրութեամբ»։

1) Այս բնորոշումը չէ կարող համարել բոլորովին օրէկոյի։ Ճնշումը ստորագրութիւններ ժողովելու ժամանակ, անկասկած, դրութիւն ունի, բայց ոչ աւելի մեծ չափով, քան ներկայացուցիչներ ընտրելու միջոցին պարլամեն- տական երկիրներում։ Միև կողմից, իւրաքանչիւր նախաձեռնութիւնից առաջ լինում են աչքան խօսակցութիւններ, ժողովներ և այլն, որ քաղաքացիները ամեն անգամ քիչ թէ շատ ծանօթ են լինում նրա բովանդակութեան և շար- առիթների հետ բացի այդ, առաջարկութիւնները միշտ շօշափում են հրա- տապ և հանրածանօթ խնդիրներ։ Շտրուսին, Յիւրիխցի յայտնի առավապետու- կանը, ցոյց տալով նախաձեռնութեան նախաձեռնութեան թերութիւնները, յանձնա- րարում է աննախկին նախաձեռնութիւն, որը նոյնպէս զրգոտ է նախապատ- րաստում է, բայց միայն ձայնուութեան ժամանակ։

2) Դաշնակցական սահմանադրութեան 6 յօդ. պահանջում է, որ կան- տոնական սահմանադրութիւնները՝ ա) չ'պարունակեն իրանց մէջ ոչինչ՝ հակա- ոռակ նրա հրահանգներին, բ) «ապահովեն քաղաքացիները քաղաքական իրա- ւունքները հասարակապետութեան մէջ» (ներկայացուցչ. կամ առավապետ). և գ) ընդունեն ժողովրդի կողմից և կարելի լինի նրանց ենթարկել վերաքն- նութեան ամեն անգամ, երբ այդ պահանջում է կանտոնի քաղաքացիները ա- հագին մեծամասնութիւնը։

Ռամկապետական սկզբունքը, որի վրայ հիմնւում է Զվիցե- րիայի հասարակական իրաւունքը, պահանջում է, որ օահմանա- դրութեան վերաբերմամբ վերջնական ատեանում ժողովուրդն յայտնէ իր կարծիքը։

Ժողովրդին առաջարկւում է սահմանադրութիւնը ամբողջո- վին. նա կամ ընդունում կամ մերժում է այն իր բոլոր ծաւալով։ Աարգաու, Վիցերն և Սէն-Գալլէն այս կանտոնից բացառութիւն են կազմում. այնտեղ սահմանադրութեան նախագծի ամեն մի յօդ- ւածն առանձին պիտի առաջարկուի ժողովրդի ձայնուութեան։

Սահմանադրական ըեֆերենդումի ժամանակ որոշում են եր- կու տեսակ ձայնուութիւններ՝ նախնական և հիմնական կամ վերջ- նական։

Ա. Նախնական ձայնուութիւններ

Եթէ ժողովրդական նախաձեռնութիւնը պահանջում է սահ- մանադրութեան վերաքննութիւն, կամ եթէ կանտոնական խոր- հուրդը, իր սեփական ձեռնբեկցութեամբ, կ'առաջարկէ վերաքն- նութիւն, այն ժամանակ ամենից առաջ ժողովրդին առաջարկւում է վճռելու մի հարց՝ վերաքննութիւն առհասարակ լինի՞ թէ ոչ։

Գլխաւորում, Գրաուբիւրգէնում և Յուզում նախնական ձայն- տութիւնը պիտի կատարուի ամեն անգամ, երբ վերաքննութիւնը առաջարկւում է ժողովրդական նախաձեռնութեան ձանսպարհով։ Միև կանտոններում (Արտաքին Ռ-ի Ապպենցել, Բադէլիան Եր- կիր, Վիցերն, Շաֆհաուզէն, Շվից և Յիւրիխ) նախնական ձայն- տութիւն պիտի կատարուի, երբ առաջարկւում է ընդհանուր վե- րաքննութիւն, — միևնոյնն է թէ ում կողմից՝ ժողովրդի թէ օրէնս- դրական իշխանութեան։ Սէն-Գալլէնը և Աարգաու՝ն ընդունեցին այս կարգադրութիւնը ընդհանուր վերաքննութեան և նախաձեռ- նութեան վերաբերմամբ։ Այստեղ չ'կան նախնական ձայնուու- թիւններ, եթէ գործը վերաբերում է մասնաւոր վերաքննութեան՝ առաջարկւած աւագ խորհրդի կողմից։

Մնացած կանտոնները, բացի Ժընևից, միշտ դիմում են նախնական ձայնուութիւնների։ Ժընևը դրանք չ'ընդունեց։ Այս կանտոնը հետևում է ամերիկական սկզբունքին, որի համաձայն ժողովրդին տասն և հինգ տարին մի անգամ հարց է տրւում,

հարկաւոր է արդեօք վերաքննել սահմանադրութիւնը թէ ոչ: 1) Զարմանալի է, որ այս հնացած և շատ բաներով անյարժար կարգը մինչև օրս չէ վերացւած:

Եթէ վերաքննութիւնը վճուած է, ո՞վ պէտք է կատարէ այն: Մասնաւոր վերաքննութեան գործը սովորաբար յանձնուած է օրէնսդրական իշխանութեան:

Իսկ ընդհանուր վերաքննութեան վերաբերմամբ գոյութիւն ունի երկու կարգ. մի քանի կանտոններում այդ հարցը վճուում է ժողովուրդը մի ուրիշ հարցի հետ միասին, լինի՞ առհասարակ վերաքննութիւն թէ ոչ. այդպիսի դէպքում ժողովուրդը վճուում է, թէ այդ վերաքննութիւնը պիտի կատարէ գոյութիւն ունեցող աւագ (կանտոնական, տեղային, — սրանք միեւնոյն հիմնարկութեան զանազան անուններն են այլ և այլ կանտոններում) խորհուրդը, թէ պէտք է վերընտրել խորհուրդը, կամ յանձնել վերաքննութիւնը առանձին ժողովի:

Կանտոնների այս տեսակին պատկանում են՝ Արտաքին Ռ-ի Ապպենցելը, Բերն, Օբվալդէն, Նիդվալդէն, Շաֆհաուզէն 2), Սէն-Գալլէն, Գրաուբիւնդէն, Բազել-Քաղաք, Տուրգաու, Տեսսին, Վաադա (Վօ), Վալլիս, Նէյշատել (Նէյնբուրգ): Մնացած կանտոններում այս հարցը վճուած է սահմանադրութիւններով. Բազիլեան երկրում, Աարգաուում, Ժընևում, Ֆրիբուրգում (Ֆրայբուրգ), Շվիցում, Ռուրիում և Լիւցերնում ընտրուում է օրէնսդիր ժողով. Յիւրիխում վերընտրուում է կանտոնական խորհուրդը, Յուզում նախագիծը մշակուում է գոյութիւն ունեցող աւագ խորհրդում:

1) Ժընևեան սահմանադրութեան 115 յօդւածը: — Տասն և հինգ տարին մի անգամ ընդհանուր ժողովին պէտք է հարց առաջարկել սահմանադրութիւնը վերաքննելու նկատմամբ: — Բազիլեան երկրում այս ժամանակամիջոցը որոշւած է 12 տարով: (1863 թ. սահմանադրութիւն, էջ 87) Ըստ սահմանադրութեան Նիւ-Իօրկի՝ ժողովրդից պէտք է հարցնել վերաքննութեան հարկ լինելու մասին 20 տարին մի անգամ. նոյնքան է ժամանակամիջոցը նաև Վիբրգի Նիւ-յում, Մէրելէնդում և Օհայոում. Յովում — ասար տարի է, Նիւ-Հեմպշիրում — եօթ տարի:

2) Այս կանտոնում 1000 քաղաքացիք կարող են ամեն ժամանակ պահանջել, որ օրէնսդիր ժողով հրաւիրւի:

Բ. Վերջնական ճայնտութիւններ.

Վերաքննւած սահմանադրութիւնը առաջարկուում է ժողովրդին ընդունելու կամ մերժելու համար: Եթէ սահմանադրութիւնը ընդունւած է, նա ստանում է այն թւի անունը, երբ կատարել է ձայնաւութիւնը, և ոյժ է ստանում անմիջապէս ձայնաւութիւնից յետոյ: Իսկ եթէ նա մերժւած է, մի քանի կանտոններում տակաւին կարող է շարունակել վերաքննութիւնը: Բայց միւս կանտոններում վերաքննութեան մերժումը համարուում է վերջնական, և իր ոյժի մէջ է մնում նախկին սահմանադրութիւնը:

Ունտերվալդէնում, եթէ վերաքննւած սահմանադրութիւնը մերժւած է, համայնական ժողովը վճուում է, թողնել վերաքննութիւնը թէ շարունակել. վերջին դէպքում նա վճուում է նոյնպէս, թէ սահմանադրութեան ցոյց տւած հիմնարկութիւններից ո՞ր մէկին յանձնել վերաքննութեան գործը:

Նոյնպիսի որոշումներ գոյութիւն ունեն նաև Աարգաուում: Զոլտուերնում օրէնսդրական ժողովը, այդպիսի դէպքում, պիտի մշակէ երկրորդ նախագիծ: Եթէ այդ նախագիծն էլ մերժեց, ժողովուրդը վճուում է, հարկաւոր է շարունակել վերաքննութիւնը. եթէ այս իննդիրը կ'վճուի գրականապէս, ժողովուրդն ընտրում է նոր օրէնսդրական ժողով: Նոյնպէս և Ֆրայբուրգում, եթէ երկրորդ նախագիծը մերժւած է, ընտրուում է նոր օրէնսդրական ժողով:

Շաֆհաուզէնում, եթէ վերաքննւած սահմանադրութիւնը մերժւած է, իշխանութիւնները կամ 100 քաղաքացիներ կարող են հարց դնել ժողովրդի առաջ, շարունակել ընդհանուր վերաքննութիւնը թէ դադարեցնել գործը:

Այս կարճատու նկարագրից մենք տեսնում ենք, որ շատ բազմատեսակ են որոշումները՝ վերաբերեալ կանտոնական սահմանադրութիւնների վերաքննութեան, և չկայ մի ընդհանուր պարտաւորիչ կարգ: Այս իննդրում ամեն ինչ թողնւած է իւրաքանչիւր կանտոնի սովորութիւններին և փորձառութեան:

IX. ԲԵՖԵՐԵՆԴՈՒՄԸ ԿԱՆՏՈՆԵՐՈՒՄ

§ 1. Օրենսդրական բեֆերենդումի ներմուծումը.


Յուլիսեան յեղափոխութիւնն ունեցաւ մի անմիջական հետեանք—սահմանադրութիւնների վերաքննութիւն մի բանի կանտոններում: Նրանք բոլորը յայտարարեցին ժողովրդի լիազօրութիւնը. կարգաւորեցին իշխանութիւնների բաժանումը, մտցրին խնդրատուութեան իրաւունքը և ուղիղ ձայնաւուծութիւնների սիստեմը: Շարժման նպատակն այն էր, որ օրէնսդրական իշխանութիւնը յանձնէ ժողովրդին (օրինակ, Սէն. Գալլէնում ժողովրդին զիջում էր արւած, վէտօի ձևով). իբրև, օրէնսդրական իշխանութիւնը շատ անգամ անգիտանում էր ժողովրդի պահանջները, որ թելադրում էր իրական անհրաժեշտութիւնը, և այսպիսով առաջ բերեց իր համար ընդհանուր թերահաւատութիւն:

Առաջին կանտոնը, որ ընդունեց բեֆերենդումն իր այժմեան ձևով, Վաադան էր (1845 թ.): Այստեղ պիտի ենթարկէին ժողովրդական ձայնաւուծեան այն բոլոր օրինագծերը, որ առաջարկում էր աւագ խորհուրդն իր սեփական նախաձեռնութեամբ կամ 8000 քաղաքացիներ: Վաստաի օրինակին հետեցին Լիւցերնը (1846 թ.), Նոյնպէս և Շվիցը և Յուլլը, որոնք ոչնչացրին, ինչպէս մենք արդէն տեսանք, Զոնդերբուրգի պատերազմից յետոյ իրանց համայնական ժողովները:

Հետաքրքրական իրողութիւն է Նէյշատելում 1858 թ. ֆինանսական բեֆերենդումի ներմուծումը, որ առաջացաւ շնորհիւ աւագ խորհրդի շուտափոյթ որոշման, վերաբերեալ երկաթուղու կառուցման, որը պիտի ծառայէր միայն տեղական շահերին: Յօդւածը, որն այն ժամանակ ընդունեց, ասում է. «Բոլոր փոխառութիւնները կամ ֆինանսական պարտաւորութիւնները, որոնք 500,000 ֆրանկից աւելի են, պէտք է առաջարկեն ժողովրդի հաստատութեան (յօդ. 39 1)»:

1863 թ. Բազելեան երկիր կանտոնը մտցրեց իր սահմանադրութեան մէջ պարտաւորիչ բեֆերենդում. «Ամեն մի օրէնք, ամեն մի ընդհանուր պարտաւորիչ կարգադրութիւն և ամեն մի դաշնագիր, պաշտօնական լրագրում յայտարարուց յետոյ մի ա-

1) Այս յօդւածը փոփոխւած է մի օրէնքով, որ վերաբերում է բեֆերենդումի գործադրութեան (9 յունվարի 1880 թ. օրէնքը):



միս անցած, պիտի յանձնէ և ժողովրդի ձայնաւուծեան համայնական ժողովներում: Ձայնաւուծեան ժամանակ խնդիրը վճուում է մեծամասնութեամբ» (1863 թ. Սահմանադրութիւն, յօդ. 46):

Ժողովրդի ինքնավարութեան պատմութեան մէջ մի դարագլուխ է կազմում ժողովրդական օրէնսդրութեան ներմուծումը Յիւրիխում, ուր ժողովուրդը իրաւամբ դարձաւ օրէնսդիր: (յօդ. 28).

Յիւրիխի սահմանադրութեան 30 յօդ. ասում է. «Տարին երկու անգամ, գարնան և աշնան, տեղի է ունենում ժողովրդական ձայնաւուծիւն, վերաբերեալ կանտոնական խորհրդի օրէնսդրական գործերին: Լ'ստ հարկի պահանջման, կարող է նշանակուել արտակարգ ձայնաւուծիւն: Ժողովրդի ձայնաւուծեան ենթակայ են:—

1) Սահմանադրութեան, օրէնքների և կոնկորդատների բոլոր փոփոխութիւնները:

2) Կանտոնական խորհրդի այն որոշումները, որոնց վերաբերմամբ նրան իրաւունք չէ տրւած վերջնական վճիռ կայացնելու (յօդ. 31):

3) Այն որոշումները, որ կանտոնական խորհուրդն իր սեփական ցանկութեամբ կ'յանձնէ ժողովրդական ձայնաւուծեան»:

Առաջարկելով ժողովրդի ձայնաւուծեան մի օրինագիծ կամ որոշում, կանտոնական խորհուրդը կարող է կարգադրել, որ ձայնաւուծիւն կատարելի կամ ամբողջ առաջարկութեան վերաբերմամբ կամ նրա առանձին կէտերի վերաբերմամբ: Խորհուրդն իրաւունք չ'ունի տալ ոյժ այն օրէնքներին և որոշումներին, որոնք դեռ չեն ենթարկւած ժողովրդական ձայնաւուծեան: Բոլոր առաջարկութիւնները, որ անոււծ են ժողովրդին, պէտք է յայտարարւած և յանձնւած լինեն իրաւատէր քաղաքացիներին ձայնաւուծիւնից առաջ ոչ աւելի ուշ, քան երեք ամիս:

Շուտով այս շարժման հետեցին Բեռնը, Տուրգաու, Զուլտուերն. Աարգաու, Ժընև 1), Տեսսին. այսպիսով, բեֆերենդումը զոյւլութիւն ունի այժմ բոլոր կանտոններում, բացի Ֆրաշբուրգից 2):

1) 1862 թ. Ժընևի սահմանադրութեան նախագծի 33 յօդ. առաջարկում էր մասնաւոր բեֆերենդում, որի համար պահանջւում էր 5000 ստորագրութիւն, բայց այս նախագիծը մերժեց ժողովրդի կողմից այլ ղեկավարութեամբ, որոնք չեն վերաբերում բեֆերենդումի խնդրին:

2) Ֆրաշբուրգի կանտոնում ժողովուրդը ինքը դէմ կացաւ բեֆերենդում մտցնելուն, որ առաջարկել էր աւագ խորհուրդը:

Կանտոնական բեֆերենդումը մեծ առաւելութիւններ ունի. երբ օրէնսդրական իշխանութիւնը գիտէ, որ ժողովուրդը վերահասու է նրա գործունէութեան, նա աւելի մեծ ինսամքով է մշակում օրինագծերը, աւելի սակաւ կրքոտութեամբ և ոչ փուսկոտ կերպով է քննում և ընդունում նրանց: Երբ ծագում է ընդդիմադրութիւն, կամ կազմում է փոքրամասնութեան մի նշանաւոր կուսակցութիւն, խորհուրդը ստիպւած է լինում փոխել իր օրինագիծը, ձայնաւորութեան ժամանակ պարտութիւն չ'կրելու համար: Իսկ եթէ խորհուրդը, հաւաստի լինելով իր յաղթանակին, այնուամենայնիւ կ'ցանկանայ հրատարակել օրէնքները ի հաճոյս մի կուսակցութեան կամ անձի, նա ինքը չէ կարող անել այն, ինչ որ ինքը բարեհաճում է. ժողովուրդը նրան զգալ կ'տայ, որ նա ստոր է քաղաքացիներից, որոնք նրան ընտրել են:

Ներկայացուցիչները ընտրւում են ոչ թէ նրա համար, որ իրանց գործերն առաջ տանեն, այլ նրա համար, որ ընդհանուր շահերի համար աշխատեն. բեֆերենդումը կարող է չքայնել վատ կամ անտրդար օրէնքները աւելի շուտ, քան կ'երևան նրանց ծանր ծանր հետեանքները:

Մի քանի կանտոններում ժողովրդին պտտկանում է աւագ խորհուրդ հրաւիրելու իրաւունքը: Այն կանտոններում, ուր այս իրաւունքը չ'կայ, ժողովուրդը կարող է յայտնել իր դժգոհութիւնը ներկայացուցիչներից, միայն պէտք է սպասել նոր ընտրութիւններին:

Օրէնսդրական բեֆերենդումի հետ աւելի լաւ ծանօթանա- նալու համար, քննենք երկու հարց. 1) Պարտաւորի՞չ է նա, թէ կամաւոր. 2) Ո՞ր օրէնսդրական ակտերի վերաբերմամբ է նա գործադրւում:

§ 2. Բեֆերենդումի սեսակները

Ա. Պարտաւորիչ բեֆերենդում

Պարտաւորիչ բեֆերենդումի ժամանակ օրէնսդրական հիմնարկութիւնները պիտի յանձնեն ժողովրդի ձայնաւորութեան բոլոր

օրէնքները և մեծագոյն մասը այն որոշումների 1), որոնք ունեն ընդհանուր պարտաւորիչ նշանակութիւն: Օրէնսդրական հիմնարկութիւններն այստեղ միայն նախապատրաստում են օրէնքները, — մի բան, որ նրանք կատարում են ոչ միշտ բաւականաչափ բարեխղճութեամբ, — նրանք ազատ են ամեն մի պատասխանատուութիւնից: Այս սխտեմով ընտրւածները, որոնց յանձնւած է օրէնքների մշակութիւնը, հանդիսանում են միայն իբրև ժողովրդի ծառաներ. նրանք չեն վայելում ոչ մի արտօնութիւն: Այս հանգամանքը թուլացնում է նոյնպէս մի ձգտում — ընտրութիւնների ժամանակ անց կացնել, ինչպէս էլ լինի, իր մարդուն. և, օրինակ, Յիւրիխում մենք տեսնում ենք, որ թունդ-կուսակցական պատգամաւորների թիւը արտօ կերպով նւազում է կանտոնական խորհրդի անդամների մէջ: Ուրեմն ժողովրդին է պատկանում օրէնքների հրատարակութեան իրաւունքը: Բայց կան շատ այնպիսի օրէնքներ, որոնք հետաքրքրւում են միայն քաղաքացիներին չնչին մասին. միւս կողմից, քանի մի տեսակ օրէնքներ էլ այնպիսի մասնագիտական բնաւորութիւն ունեն, որ նրանց ժողովուրդը քննելու հնարաւորութիւն չ'ունի: Կանտոններից մի քանիսը ուշապրութիւն դարձրին այս անյարմարութեան վրայ և իրանց սահմանադրութիւններում որոշեցին. որ ամեն մի օրէնք, որը առաջարկւում է ժողովրդական ձայնաւորութեան, պէտք է պարունակէ իր մէջ պատճառաբանութիւն, որ տալիս է մի ձեռնհաս հիմնարկութիւն:

Ժողովուրդը արտասանում է իր գերագոյն վճիռը առաջարկւած նախագծերի վերաբերմամբ. ուստի, տեսանակապէս, անհրաժեշտ է, որ նրա խորհրդատուները, «խորհուրդներին» (ներկայացուցչական հաստատութիւնների) անդամները տային նրան տեղեկութիւններ բարդ խնդիրների մասին, որ նա պիտի վճռէ: Բայց և այնպէս, քաղաքացիները շատ անգամ ձայն են տալիս իրանց գիտցածի պէս, առանց ի նկատ արնելու իրանց դատողութեան ձեռնհասութեան աստիճանը: Ծիծաղելի կ'լինէր առաջարկել երրորդ-չորրորդ դասատան աշակերտներին դնդաձև եռանկիւնաչափութեան խնդիրներ, — բայց միթէ աւելի նպատակայար-

1) Միայն Նէյշատելում (Նէյնբուրգ) գոյութիւնն ունի պարտաւորիչ բեֆերենդում եկեղեցական գործերի վերաբերմամբ: (1858 թ. Սահման. յօդ. 71):

մար կ'լինէր, եթէ կրթութեան վերաբերեալ օրէնքը կախած լինէր ժողովրդի վճռից կամ մի առաջարկութիւն, որ վերաբերում է բարդ գործերին,—ժողովրդական մասսայի հասկացողութեան աստիճանից: Այս խնդրի վերաբերմամբ ֆրանսիական միապետութեան ժամանակներում մէկն ասել է: «Շուտով մեր ձեռագրանքը ստիպւած կ'լինեն ուսումնասիրել քաղաքացիական իրաւունքը»:

Հարկաւոր է նկատել և այն, որ շատ յաճախ կրկնուող ճայնուութիւնները յոգնեցնում են քաղաքացիներին: 1)

Թէև, համաձայն այս սահմանադրութիւններին, ժողովրդական ճայնուութիւնները սկզբունքով, պիտի կատարեն տարին միայն երկու անգամ, բայց անյետաձգելի դէպքերում կարող է նշանակուել արտակարգ ճայնուութիւն, որովհետև ոչ մի օրէնք, ոչ մի որոշում չէ կարող նոյն իսկ ժամանակաւորապէս ոյժ ունենալ՝ աւանց քաղաքացիների հաստատման:

Պարտաւորիչ ընֆերենդումը, որը միմիայն լիովին արտայայտում է ժողովրդի դրական օրէնսդրութեան գաղափարը, շատ նմանութիւն ունի Արտաքին Ռ—ի Ապենցելի համայնական ժողովի հետ, ուր, ինչպէս տեսանք, դատողութիւններ չեն թույլ տրուում. միայն այստեղ ժողովուրդը ձայն է տալիս ոչ թէ մէկ, այլ մի քանի տեղերում:

Մի Յիւրբիտցի, որը կողմնակից է պարտաւորիչ ընֆերենդումի, ցիւրիխեան կանտոնի այդ հաստատութեան հետեւնքների

1) Դա ֆակտ է, հաստատւած մեծ թուով քաղաքացիների կողմից, որոնք ձայնագրան են եղել: Բեռնի կանտոնում համարւում են մօտ 105,000 իրաւասէր քաղաքացիներ: Կարելի էր տեսնել, որ մի ճայնուութեան մասնակցեցին միայն 40.000 քաղաքացիներ, այսինքն 38 0/0: Այդ երևոյթի առաջն անելու համար, մի քանի կանտոններում մտցրւած են պարտաւորիչ ճայնուութիւններ. իւրաքանչիւր իրաւասէր քաղաքացի ենթարկւում է տուգանքի սկսած 60 սանտիմից մինչև 1 ֆրանկ:

Ժողովրդական օրէնսդրութեան հակառակորդները շատ անգամ մտնացոյց են անում այս «ժողովրդի յոգնելու» վրայ, բայց ուսկապետականները հերքում են այն, և մենք չենք կարծում, որ «յոգնածութիւնը» իրօք մի լուրջ դեր կատարէր ընդհանրապէս ճայնուութեան դէպքում: Ձայնագրութիւնը ամեն մի առանձին դէպքում ունի իր առանձին պատճառները: Ե իրաւ, քանի որ բոլոր օրէնքները ենթարկուած են ճայնուութեան, ուստի հեշտ է ցրեակալել, որ նրանցից շատերը բոլորովին ոչ մի կարեւորութիւն չեն ներկայացնում այս կամ այն քաղաքացու համար, որը այդ իսկ պատճառով չի էլ մօտենայ

մասին ասում է. «Բոլոր օրէնքները, որոնք առաջարկուած էին կանտոնական խորհրդի կողմից երկրի բարիքի համար, մէկը միւսի ետևից ընդունուած էր ժողովուրդը առանց որ և է դժարութիւնների, ինչ տեսակ էլ լինէին այն զոհաբերութիւնները, որ այս օրէնքները պահանջում էին ժողովուրդից: Ժողովուրդը չ'մերժեց և ոչ մի նախագիծ, որը ներշնչւած է եղել երկրի հոգեկան և նիւթական շահերի հոգսերով»:

Պարտաւորիչ ընֆերենդումի հետ կապւած՝ զուտ ուսկապետութեան սկզբունքով կարավարւում են հետեւեալ կանտոնները. Աարգաու, Բազելեան երկիր, Բեռն, Գրաուբիւնդէն, Շվից, Չոլոտուրն, Տուրգաու և Յիւրբիտ:

Բ. Կամաւոր ընֆերենդում

Կամաւոր ընֆերենդումի ժամանակ, որը նոյնպէս գոյութիւն ունի Չվիցերիայում, ժողովուրդը մասնակցում է օրէնսդրութեան, երբ նա ինքը ամեն մի մասնաւոր դէպքում ցանկութիւն կ'յայտնէ: Եթէ մի որևէ օրէնքի հրատարակութեան ժամանակ ժողովուրդն այդպիսի ցանկութիւն չէ յայտնում, դա հասկացում է, իբր լուս վաւերացում: Այս սխտեմի գլխաւոր անյարմարութիւնը կայանում է նրանում, որ նա իւրաքանչիւր ճայնուութեան միջոցին մի տեսակ յուզմունք է յարուցանում ժողովուրդի մէջ,

քւէտփին, մանաւանդ որ քննուող օրէնքը, ժողովրդի ինքնավարութեան պայմաններում յետոյ կարելի փոխել, եթէ անյարմար կ'զտուի քաղաքացիների մեծամասնութեան համար: Այն տուգանքները, որոնք նշանակուած են մի քանի կանտոններում քւէտփի մօտ չ'երակալու համար, նոյնպէս ոչինչ չեն ապացուցանում. չնչին լինելով հանդերձ (20-ից 30 կոպ). նրանք նպատակ ունեն ոչ թէ պատժել քաղաքացիներին, այլ միայն յիշեցնել նրանց իրենց պարտականութիւնների մասին: Այդպիսի տուգանքներ գոյութիւն ունեն ամեն տեղ և մասնաւոր ընկերութիւնների մէջ. անգամներ իրենց տուգանքի տակ են դրնում, օրինակ, ընդհանուր ժողովներում ներկայ չ'լինելու համար, և ոչոք չէ տեսնում դրա մէջ դժգոհութեան ասպցոյց այդպիսի ընկերութիւնների կամ ժողովների դէմ: Մենք չենք կարող նոյնպէս ժողովուրդը հաւասարեցնել լեւրորդ-չորրորդ դասարանի աշակերտների հետ և հասարակական գործերը դնդաձև եռանկիւնաչափութեան» հետ, գալով զվիցերիական «ձեռագրանքին», նրանց իսկապէս հարկաւոր է լինում ծանօթանալ քաղաքացիական իրաւունքի հետ, սակայն նրանք դրանից չեն վերաւորուած:

բորբոքում է ամեն մի կուսակցութեան կրքերը և թերահաւատութիւն է մտցնում քաղաքացիներին մէջ: Դրա դէմ կամաւոր բեֆերենդումի կողմնակիցները բաւական հիմնովին հակաճառում են, որ ռամկապետութեան մէջ կուսակցութիւններն անհրաժեշտ են:

Կոսակցական քաղաքականութիւնը խորհրդում կարող էր առաջ բերել բեֆերենդումի պահանջ ամեն անգամ, ամեն մի ընդունւած օրէնքի վերաբերմամբ:

Մինչդեռ պարտաւորիչ բեֆերենդումի ժամանակ օրինագծի կամ որոշման հասարակ մերժումը ցոյց է տալիս միայն, որ ժողովուրդը դրանց չէ ցանկանում, կամաւոր բեֆերենդումը թոյլ է տալիս առաջարկութեան կողմնակիցներին, որքան էլ սակաւ թւով, օգտւել ձայնաւութիւնից՝ ցոյցերի համար:

Ընդհանրապէս բանից դուրս է գալիս, որ այս պայմաններում առաջարկւած օրէնքները և որոշումները մերժուած են ժողովրդի կողմից:

Նրա և իր ներկայացուցիչների մէջ ծագում է պառակտում: Այս պառակտումը շատ անգամ առաջ է գալիս նրանից, որ փոքրամասնութիւնները չեն կարող ունենալ խորհրդում ներկայացուցիւն. ձայնաւութեան ժամանակ նրանք միանում են իրար հետ, իրանց գոյութիւնն ամրապնդելու համար, և այսպիսով դառնում են մեծամասնութիւն, այն ինչ ընտրութիւնների ժամանակ նրանց բաժանում էին թեկնածուներին վերաբերեալ անձնական խնդիրները: 1)

Բայց կամաւոր բեֆերենդումը այն առաւելութիւնն ունի, որ նրա ժամանակ օրէնքներն աւելի են քննուում ժողովրդի մէջ, քան պարտաւորիչ բեֆերենդումի ժամանակ: Հարկաւոր է միայն, որ օրէնքը հետաքրքրութիւն շարժէ մի յայտնի թւով քաղաքացիներին մէջ. նրանք ուշադրութեամբ հետադատում են, արդեօք նա իրօք համապատասխանուած է իրանց հայեացքներին և չէ՞ն խախտում իրանց շահերը. նրանք պարտաւոր են ուսումնասիրել օրէնքը, նախ քան կարծիք կ'յայտնեն ձայնաւութեան միջոցին:

Կամաւոր բեֆերենդումը գործադրում է այն ժամանակ, երբ մի յայտնի թւով քաղաքացիներ, որոնք դժգոհ են նոր օ-

1) Այս անյարմարութիւնն այժմ աշխատում են փոքրացնել մտցնելով համեմատական ներկայացուցչութիւն, որը վերջին ժամանակ մեծ առաջադիմութիւն է անում Զվիցերիայում:

րէնքից կամ որոշումից, կ'ներկայացնեն ժողովրդական ձայնաւութեան զբաւոր պահանջ: Դրա համար անհրաժեշտ է, որ ձայնաւութիւն պահանջողների թիւը հասնէր յայտնի մինիմումի, որ սահմանադրութիւնը սրոշել է:

Այդպիսի պահանջը պէտք է ստորագրելի քաղաքացիների կողմից ձամայնքներում, ուր նրանք մտքը աւել են ցուցակների մէջ. քաղաքապետները (մերերը) պիտի ստուգեն ստորագրողների իրաւատէր լինել, բայց նրանք չեն կարող վաւերացնել ստորագրութիւնների իսկութիւնը:

Նւազագոյն թիւը ստորագրողների, այսինքն, այն քաղաքացիների, որոնք իրաւունք ունեն ժողովրդին դիմելու, զանազան կանտոններում զանազան է: Այսպէս, որինպէս—Լիւցերնում հարկաւոր են 5.000 քաղաքացիների ստորագրութիւններ:

Շվիցում	«	2.000	«	«
Յուզում	«	500	«	«
Բազելեան երկրում	«	1.000	«	«
Շաֆհաուզենում	«	1.000	«	«
Սէն-Հալլէնում	«	6.000	«	«
Տեսսինում	«	5.000	«	«
Վաագում (վօ)	«	6.000	«	«
Նէյշատելում (Նէյնբուրգ)	«	3.000	«	«
Ժընևում	«	3.500	«	«

Համապատասխան օրէնքը կամ որոշումը յայտարարելուց յետոյ կանտոնների մեծ մասում որոշւած է երեսուն օրւայ ժամանակամիջոց, որի ընթացքում կարելի է պահանջել բեֆերենդում: Իսկ ձայնաւութիւնը կատարում է հետևեալ քառասուն կամ քառասուն և հինգ օրւայ ընթացքում:

Մասնաւոր բեֆերենդումը պէտք է զանազանիւ այն որոշումներից, որ խորհուրդը իր սեփական ցանկութեամբ կարող է յանձնել ժողովրդի ձայնաւութեան: Հետևեալ կանտոններում՝ Աարգաու, Բազելեան երկիր, Գրաուբընդէն, Լիւցերն, Շվից, Ջորտուրն, Տուրգաու, Վաագա և Յիւրիխ՝ որոշւած է, որ աւագ (կանտոնական) խորհուրդը կարող է, եթէ դրան համակարծիք լինի նրա անդամների մեծամասնութիւնը, իր սեփական ցանկութեամբ յանձնել ժողովրդի ձայնաւութեան նոյնպէս և իր այն վճիռները, որ սահմանադրութիւնները թողել են նրա տնօրինութեան: Յու-

գում բաւական է, որ կանտոնական խորհրդի մի երբորդ մասը անմիջապէս այս կամ այն վճիռն ընդունելուց յետոյ պահանջէ բեֆերենդում, որպէս զի ինչիրը յանձնել ժողովրդի ձայնաւութեան: ¹⁾

§ 3 Ի՞նչ է բանի գործադրում բեֆերենդումը.

Առաջ հարկաւոր է որոշել օրէնք բառի նշանակութիւնը: Այստեղ խոսքը վերաբերում է ոչ թէ որ և է գիտնական թէղիսնեւրին, որոնք այնքան շատ են մտել վերջին դարու օրէնսդրութեան մէջ, ոչ թէ պետութեան ազդարարութիւններին վերացական ճշմարտութիւններ ²⁾ նկատմամբ, ոչ թէ կուսակցական ծրագիրների մեկնարանութեան. օրէնքը հրամայողական բնաւորութիւն ունեցող հաստատութիւն է, նա պարտաւորեցնում է որոշ գործողութիւն կատարել կամ կատարելուց իրան զսպել: Այսպէս օրինակ, կանտոնների զանազան սահմանադրութիւնները թողնում են ժողովրդին արտասանել իր վճիռը կամ օրէնսդրական որոշումների վերաբերմամբ, կամ կոնկորդատների, պետական դաշնագիրների վերաբերմամբ, կամ ֆինասական միջոցների վերաբերմամբ, որ աւագ խորհուրդը հարկաւոր է համարում ձեռք առնել:

Ա. Օրէնքներ և որոշումներ.

Բոլոր կանտոններում առանց բացառութեան օրէնքները բառիս բուն մտքով ենթակայ են ժողովրդի ձայնաւութեան: Իսկ օրէնսդրական որոշումներից մի քանի կանտոններում ենթակայ են բեֆերենդումի միայն այնպիսիները, որոնք ընդհանուր նշանակութիւն ունեն և չեն կարող համարել անյետաձգելի: Բայց կանտոնները սկզբունքի տարբերութիւն չեն դնում օրէնքների և

¹⁾ Գիւտին հիմնաւոր կերպով խօսում է այս սխտեմի դէմ, որովհետ նա մեծ տեղ է թողնում կամայականութեան համար: (Archiv für öffente. Recht, 1887, հ. 11, էջ. 415)

²⁾ Օրինակ, հասարակապետութեան 11 տարւայ 18 Ֆլորէալի ֆրանսիական օրէնքը. «Փրանսիական ժողովուրդը ընդունում է զերագոյն էտիկ և հոգու անմահութեան գոյութիւնը»:



որոշումների մէջ, բացի Գրաուբիւնդէնից, որտեղ սահմանադրութիւնը ցոյց է տալիս, թէ ի՞նչը պիտի կազմէ օրէնքի բովանդակութիւնը՝ բառիս բուն մտքով (յօդ. 11: № 3 a և b), Ուրիից և Օրվալդէնից: Օրվալդէնի սահմանադրութիւնը, յօդ. 3, ասում է. «Օրէնքներ համարում են բոլոր օրէնսդրական որոշումները, որոնք արտայայտում են մասնաւոր անձանց, հասարակական կազմակերպութիւնների, համայնքների կամ պետութիւնների իրաւանց ընդհանուր և մշտական կանոնադիրըը, նոյնպէս և կանոնաւորում են պետական հաստատութիւնների, դատարանական և կառավարչական իշխանութիւնների գործունէութիւնը»: Նոյնպիսի որոշում է տալիս և Ուրիի սահմանադրութեան 53 յօդ:

Որոշումներին վերաբերեալ բեֆերենդումի մէջ կան մի բանի սահմանափակումներ, ինչպէս օրինակ, այն որոշումների վերաբերմամբ, որոնք ունեն ընդհանուր նշանակութիւն և միևնոյն ժամանակ անյետաձգելի են (հակառակ այնպիսիներին, որոնք վերաբերում են մասնաւոր շահերին կամ առանձին առարկաների):

Վճռել, թէ այս կամ այն որոշումը ունի՞ արդեօք անյետաձգելի բնաւորութիւն, թողած է խորհուրդներին: ¹⁾ Պարզ է, որ խորհուրդների այս իրաւունքը կարող էր դարձնել բեֆերենդումը բոլորովին շինծու, ֆիկտիւ, եթէ խորհուրդները շատ անգամ սկսէին համարել անյետաձգելի որոշումները, որոնք կարեւոր նշանակութիւն ունեն: Մակայն, արդարութիւնը պահանջում է աւելացնել, որ մինչև օրս դեռ չէ նկատւած մի այդպիսի չար գործադրութիւն:

Բ. Դաշնագիրներ և կոնկորդատներ

Կանտոնական սահմանադրութիւնների մեծ մասը պարզ կերպով հաւասարեցնում է դաշնագիրները և կոնկորդատները օրէնքների և որոշումների հետ: Նրանք չեն մտնում այս կատեգորիաներից և ոչ մէկի մէջ, այլ կազմում են ժողովրդական կամքի արտայայտութիւնների մի առանձին դաս: Համաձայն 1874 թ. դաշ-

¹⁾ Օրինակ, Ժընևում 1879 թ. մարտի 25 սահմանադրական օրէնքը, յօդ. 3, ասում է. «Անյետաձգելիութեան վերաբերեալ վճիռը պատկանում է բացառապէս աւագ խորհրդին:—Նէյշատելում անյետաձգելի լինելը պէտք է ընդունւած լինի ձայների երկու երրորդականով:

նակցական սահմանադրութեան 8 յօդ., դաշնագիրներ և պայմանագիրներ կապելու իրաւունքը պատկանում է միայն դաշնակցութեան՝ 7-րդ յօդուածով կանտոններին է թողնուած իրար հետ համաձայնութիւններ կայացնելու իրաւունքը օրէնսդրութեան, կառավարութեան և արդարադատութեան վերաբերմամբ. սակայն այս համաձայնութիւնները ենթակայ են դաշնակցական խորհրդի քննութեան նաև այն դէպքերում, երբ նրանք պարունակում են իրանց մէջ մի որևէ բան, որ հակառակ է դաշնակցութեան շահերին կամ միւս կանտոնների իրաւունքներին՝ դաշնակցական իշխանութեան կողմից նրանք համարուած են ոյժ-չ՝ ունեցող:

Թէև օտար տէրութիւնների հետ ունեցած յարաբերութիւնների մէջ դաշնակցութիւնը, ըստ իրաւանց, հանդիսանում է իբրև մի ամբողջութիւն, բայց դաշնակցական սահմանադրութեան 9 յօդ. ասում է, բացառիկ դէպքերում կանտոնները իրաւունք ունեն դաշնագիրներ կապել օտար տէրութիւնների հետ այն գործերի նկատմամբ, որոնք վերաբերում են պետական տնտեսութեան, գրացիական յարուրերութիւններին և ոստիկանութեան. բայց այս դաշնագիրները չ'պիտի պարունակեն ոչինչ, որ հակառակ է դաշնակցութեան կամ միւս կանտոնների իրաւունքներին:

Կանտոններին է թողած հաղորդակցութիւններ ունենալ օտար պետութիւնների հետ այնպիսի գործերի վերաբերմամբ, որոնք կարող են կանոնաւորել ստորին իշխանութիւնների միջոցով: Բոլոր մնացած դէպքերում միջնորդ կարող է լինել դաշնակցական խորհուրդը: ¹⁾ Եւ իսկապէս, դաշնակցական սահմանադրութեան 10 յօդ. (1 բաժ.) ասում է. «Կանտոնների և օտար կառավարութիւնների միջև պաշտօնական յարաբերութիւնները կատարուած են դաշնակցական խորհրդի միջոցով»: Իսկ 102 յօդ. աւելացնում է. «Նա (դաշնակց. խորհուրդը) քննում է կանտոնների իրար հետ և օտար տէրութիւնների հետ կայացրած համաձայնութիւնները և հաւանութիւն է տալիս նրանց, որքան այդ թոյլատրում է սահմանադրութիւնը:»

Արդէն պատահել են պէպքեր, որ դաշնակցական խորհուրդը դաշնագիրներ է կապել օտար պետութիւնների հետ առանձին կան-

¹⁾ Ուրի կանտոնը պիտի փոխէր իր սահմանադրութիւնը, որովհետև նրա մէջ ասած էր քաղաքական յարաբերութիւնների և զբաղրութեան մասին օտար կառավարութիւնների հետ:

տոնների անուկից: Բայց այստեղ շատ հեշտ կարող էր ծագել ընդհարում, եթէ մի որ և է կանտոն կամենար ձայնաւորութեան ենթարկել օտար տէրութեան հետ կապած դաշնագիրը (դաշնակցական խորհրդի միջոցով), և եթէ այդ դաշնագիրը մերժէր ժողովրդի կողմից: Այդպիսի դէպքերի առաջն առնելու համար, լաւ կ'լինէր ամեն մի դաշնագիր կուլու ժամանակ օգտել անյետաձգելիութեան իրաւունքից: Հետեւալ կանտոններում՝ Յիւրիխ, Լիւցերն, Շվից, Յուզ, պետական դաշնագիրը ենթակայ է բեֆերենդումի. այն կանտոններում, որոնք կառավարուած են համայնական ժողովներով, այս վերջինները քննում են դաշնագրների նախագծերը և իրանց վճիռն յայտնում նրանց վերաբերմամբ: Գաշնակցական բեֆերենդումի բացակայութիւնը պետական դաշնագիրների համար այն հետևանքն ունի, որ միևնոյն բնաւորութիւն ունեցող գործողութիւնները յանձնուած են ժողովրդի ձայնաւորութեան թէ ոչ, կախած է նրանից, գործը վերաբերում է դաշնակցութեան թէ մի կանտոնի:

Սուրբ Աթոռի հետ կապած կոնկորդանսերը բոլորն էլ ստորագրուած են դաշնակցական իշխանութիւնների, բայց ոչ կանտոնների կողմից, որովհետև նրանք չեն համապատասխանում 9 յօդ. որոշման:—

Գ. Որոշումներ Ֆինանսական գործերի վերաբերմամբ.

Ինչէն կարգադրուած է մի որոշ ժամանակի համար: Բայց այս ժամանակալ ընթացքում առանձին որոշումներով մտցնում են արտակարգ ծախսեր և տուրքեր: Այս ֆինանսական որոշումները իրաւապէս ունեն նոյն նշանակութիւնը, ինչ որ միւս բոլորը, բայց նրանք ենթարկուած են բեֆերենդումի ոչ միևնոյն հիմքերի վրայ:

Կանտոնական սահմանադրութիւնը շատ ճշտիւ որոշում է այն ֆինանսական կարգադրութիւնները, որոնք պիտի անցնեն ժողովրդի ձայնաւորութեան: Ֆինանսական բեֆերենդումը հնարաւորութիւն է տալիս լուրջ անյարմարութիւններ ծագելուն, որովհետև ժողովրդին շատ անգամ պակասում է անհրաժեշտ հեռաւորութիւն և անկախութիւն, որպէս զի թոյլատրէ այնպիսի կրկնակներ, որոնց օգուտը երկալու է, գուցէ, միայն քանի մի տարիներից յետոյ:

1. Սովորական ֆինանսական որոշումներ

Ամենասովորական ֆինանսական որոշումը բիւջէի ընդունելն է, թէև այդ կարելի էր վերաբերել արտակարգ գործերի կատեգորիային: Բիւջէն կազմւում է օրէնսդիր իշխանութեան կողմից և ընդհանուր—պարտաւորիչ նշանակութիւն ունեցող օրէնքի բնաւորութիւն ունի, այնուամենայնիւ նա ոչ մի կանտոնում ենթակայ չէ բեֆերենդումի: Վաադտի և ժընևի սահմանադրութիւններում այդ նոյն իսկ պարզ և որոշ արտայայտւած է:

2. Արտակարգ ֆինանսական որոշումներ

Ֆինանսական բնաւորութիւն ունեցող արտակարգ որոշումները կարող են վերաբերել պետական կայքերի վաճառման, փոխառութիւններին, հարկային խնդիրներին կամ, վերջապէս, պետական ծախսերին:

Գլարուսում և Նիդվալդենում պետական կայքը չէ կարող յատկացնել ուրիշին, մինչև ժողովուրդը չ'վաւերացնի վաճառման գործողութիւնը:

Չանազան կանտոններում փոխառութիւնները նոյնպէս ենթակայ են ժողովրդի ձայնտուութեան: Ժընևում, Օբվադէնում և Ուրիում իւրաքանչիւր փոխառութիւն, ինչ տեսակ էլ լինի, վրձուում է անմիջապէս քաղաքացիների կողմից, իսկ ուրիշ կանտոններում քաղաքացիներից հարց են անում միայն այն ժամանակ, երբ փոխառութիւնը որոշւած գումարից անցնում է. Նիդվալդէնում 6000, Չոլտուերնում 500,000, Աարգաուում 1,000,000 ֆրանկ: Չոլտուերնում որոշում կայ, որ չէ կարելի փոխառութիւն անել նոյն իսկ հինը զեղջելու համար 500,000 ֆր. աւելի:

Ընդհանրապէս բոլոր արտասովոր հարկերը, որոնք դուրս են գալիս օրէնքի նշանակած սահմանից, ենթակայ են ժողովրդի ձայնտուութեան. այսպէս է կարգը Բերնում, ժընևում, ներքին Ռ-ի Ապպենցելում, Վալլիսում և այլն: Այս պետութիւնների սահմանադրութիւնները որոշում են, որ ամեն մի հարկ պահանջւում է միայն այն դէպքում, երբ նա հաստատւած է ժողովրդից: Աարգաուում ժողովուրդը պէտք է կարծիք յայտնէ աւագ խորհրդի բոլոր այն որոշումների մասին, որոնք $1/2$ $0/0$ բարձրացնում

են կղած ուղիղ հարկերը, միևնոյն ժամանակ աւագ խորհուրդը պէտք է պատճառաբանէ իր պահանջը և ցոյց տայ, թէ ի՞նչ բանի վրայ պիտի գործադրւեն այս գումարները:

Նոր ծախսերի համար շատ կանտոններում գոյութիւն ունի բեֆերենդումը ոչ միայն այն դէպքում, երբ գործը արտասովոր կրեդիտի մասին է, որ հարկաւոր եղաւ միայն մի անգամ, այլ յաճախ և այնպիսի ծախսերի մասին, որոնք կրկնւում են ամեն տարի. Ահա այն ծախսերի գումարները, որոնք ենթակայ են ժողովրդի հաստատութեան զանազան կանտոններում.

	Կրեդիտ՝ նշանակւած մի անգամայ համար	պարբերական տարեկան ծախսեր
Յիւրիխում	250,000 ֆր.	20,000 ֆր.
Բերնում	500,000 «	—
Լիւցերնում	200,000 «	20,000 «
Շվիցում	50,000 «	10,000 «
Օբվալդէնում	10,000 «	—
Գլարուսում	5,000 «	—
Յուզում	40,000 «	5,000 «
Չոլտուերնում	100,000 «	15,000 «
Շաֆհաուզէնում	150,000 «	15,000 «
Գրաուբիւնդէնում	100,000 «	20,000 «
Աարգաուում	250,000 «	25,000 «
Տուրգաուում	50,000 «	10,000 «
Վաադտում	500,000 ֆր.	—
Վալլիսում	60,000 «	20,000 ֆր. 1)

Գլարուսում և Ուրիում օրէնքը որոշում է, որ նոյն իսկ մշտական ուժիկով նոր պաշտօններ նշանակելը պէտք է անցնի համայնական ժողովների քննութեան և վճռին: Նիդվալդենում համայնական ժողովը քննում է արտասովոր ծախսերի բոլոր նախագծերը:

X. ՕՐԷՆՍԻՐԱԿԱՆ ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹԵԱՆ ԻՐԱՆՈՒՆՔԸ

Խնդրատուութիւնների իրաւունքը գոյութիւն ունի վաղուց ի վեր և ամեն մէկը կարող էր օգտուել նրանից նոյն իսկ ամե-

1) Իբրև միջին տարեկան ծախս 3 տարւայ ընթացքում:

նահին ժամանակներում: Դաշնակցական սահմանադրութեան 57 յօդ. իրաւունք է տալիս իւրաքանչիւրին,—միևնոյնն է, զվիցերիացի է թէ օտար,—խնդրագիրներով դիմել իշխանութիւններին: Բայց իշխանութիւնները իրաւունք ունեն վարել այս խնդիրներէ հետ այնպէս, ինչպէս հարկաւոր կ'զտենն. նրանք պարտաւոր չեն համակերպուել նրանց: Բոլորովին այլ բան է ժողովրդի նախաձեռնութեան իրաւունքը օրէնսդրական խնդիրների վերաբերմամբ: Այդ իրաւունքը նշանակում է—հրաւիրել ժողովրդական ձայնատուութիւն այս կամ այն օրինագծի կամ նոյն իսկ հասարակ առաջարկի վերաբերմամբ, որ ներկայացրել է քաղաքացիների մի որոշ թիւ, նոյնպէս և գոյութիւն ունեցող օրէնքի վերացման կամ վերաքննութեան վերաբերմամբ:

Խնդրատուութեան իրաւունքը անհատական իրաւունք է. դա անձնական պատուութիւնից սոսկ օգտուելն է. իսկ նախաձեռնութիւնը քաղաքական իրաւունք է, նա ունի հրամանի ոյժ. իշխանութիւնները պարտաւոր են ընդունել այն պահանջը, որ առաջարկել է ժողովրդական նախաձեռնութիւնը, բայց շատ կանտոններում այս պահանջը պէտք պատճառաբանւած լինի:

Ժողովրդական նախաձեռնութիւնը առաջին անգամ մտցրւած է 1845 թ. դա Վաադտուֆն էր:

Արդեօք նա ծագեց Բաբէոֆի յայտնի նախագծի ազդեցութեան տակ: Այդ հարցին չէ կարելի տալ վճռական պատասխան: Ինչ և իցէ, նախաձեռնութիւնն այն ժամանակ զուրկ էր որ և է նշանակութիւնից, որովհետև նա մտցրւած էր սահմանադրութեան ժողովրդական, այսինքն, առանց բեֆերզնդումի: Հարկաւ, ժողովուրդը, որպէս զի հնարաւորութիւն ունենայ օգտուելու օրէնքներ առաջարկելու իրաւունքից, պիտի ստանայ իրաւունք նրանց հաստատելու: Այս նախաձեռնութիւնը, ինչպէս այն ժամանակ ընդունւած էր, կարող էր առաջարկել ամեն տեսակ միջոցներ, ինչ բնաւորութեան էլ լինեն, ուրեմն նրան մեծ ազատութիւն էր տրւած. ամեն մի օրէնսդրական առաջարկութիւն, ներկայացւած 8000 քաղաքացիների կողմից, պիտի անցնէր ժողովրդի ձայնատուութեան (յօդ. 21): Միայն 1855 թ. նախաձեռնութեան այս իրաւունքը լրացեց մասնաւոր բեֆերենդումի իրաւունքով: Այժմ ժողովրդական նախաձեռնութեան իրաւունքը գոյութիւն ունի բոլոր կանտոններում (վերջինը մտցրեց Ֆրայբուրգը յուն-

ւարի 14-ին 1894 թ.), բայց նա զանազոն ձևեր ընդունեց, որ մենք համառօտ կերպով իսկոյն կ'նայինք: Դաշնակցական սահմանադրութեան մէջ մինչև այժմ նա չ'կայ: Նա մտցրւած էր 1872 թ. դաշնակցական սահմանադրութեան նախագծի մէջ, բայց այս նախագիծը մերժեց ժողովրդի կողմից նոյն տարւայ մարտի 5-ին. դրա վրայ մենք կանգ կ'առնենք հետեւեալ զլխում:

Պէտք է միշտ յիշել, որ ժողովրդի օրէնսդրական նախաձեռնութիւնը կանտոնների ազատ հաստատութիւնն է, հակառակ ժողովրդի սահմանադրական նախաձեռնութեան, որ առաջադրում է դաշնակցութիւնը:

Ա. Նախաձեռնութեան տեսակները.

Նախաձեռնութիւնը կարող է երեք տեսակ լինել:

ա) Քաղաքացիները յայտնում են իրանց ցանկութիւնները ընդհանուր գծերով և օրէնսդրական իշխանութեան են թողնում մշակել մի այնպիսի որոշում կամ օրէնք, որ համապատասխան լինի իրանց ցանկութիւններին:

բ) Քաղաքացիները կարող են նոյնպէս ներկայացնել կանտոնական խորհրդին օրինագիծ, հանգամանօրէն մշակւած: Այդպիսի դէպքում խորհուրդը միայն պիտի յանձնէ այս նախագիծը ժողովրդի ձայնատուութեան առանց որ և է փոփոխութիւնների. խորհուրդն այստեղ հանդիսանում է, իբրև մի սոսկ փոխադրող կէտ:

գ) Երրորդ տեսակը, որ մեզ թւում է ամենից նպատակաւ—յարմարը, ներկայացնում է երկու նախորդների մի կոմբինացիոն:

Այն առաջարկութիւնների վերաբերմամբ, որոնք ներկայացւած են ընդհանուր ցուցումների, թէ մշակւած օրինագծերի ձևով, խորհուրդը կարող է յայտնել իր կարծիքը կամ առաջարկել նրանց փոփոխել (այդպէս է, օրինակ, Յիւրիխում, Զոլլոտերնում, Շաֆհաուզենում, Նէյշատելում, Ժընևում և այլն):

Նա կարող է նոյնպէս մերժել առաջարկութիւնը, պատճառաբանելով այդ առանձին որոշման մէջ: Այս դէպքի նկատմամբ կանտոնական սահմանադրութիւնները վճռում են, որ ժողովրդի առաջարկութեան մերժումը խորհրդի կողմից ենթակայ է բեֆերենդումի—պար տաւորիչ կամ կամաւոր: Եթէ ժողովուրդը կ'հաստատէ խորհրդի վճիռը, առաջարկութիւնը թողնում է անհետ-

ւանք: Իսկ եթէ ժողովուրդը կարծիք կ'յայտնէ յօգուտ առաջարկութեան, այն ժամանակ խորհուրդը վեց ամսւայ ընթացքում պիտի մշակէ պահանջելիք օրինագիծը:

Շաֆֆհատուզէնում և Տուրգաուում ժողովրդի կողմից ներկայացրեալ ամեն մի առաջարկութիւն պէտք է տնմիջապէս ենթարկուի քննութեան խորհրդում: Բազելեան երկրում, Գրատուրինդէնում, Վաադտում նախ քան առաջարկութեան քննութիւնը խորհրդի կողմից, միշտ պէտք է եղած լինի ժողովրդի նախնական ձայնատուութիւն: Երբ օրէնսդրական իշխանութիւնը կ'մշակէ ներկայացրեալ առաջարկութիւնն այն ուղղութեամբ, որ ցոյց է տըրւած նրա պատճառարանութիւնների մէջ, օրինագիծը յամնում է ժողովրդի ձայնատուութեան՝ կցելով դրան այն խորհրդածութիւնների համառօտ և անաշառ ամփոփումը, որոնցով ղեկավարել են նախաձեռնողները, նոյնպէս և իր, խորհրդի հայեացքները: Ժողովրդի կողմից առաջարկեալ օրինագծի բնագիրը պիտի ենթարկուի ձայնատուութեան առանց որ և է փոփոխութեան, բայց խորհուրդը կարող է ներկայացնել նոյնպէս և իր նախագիծը, որ քիչ թէ շատ տարբերում է նախաձեռնողների նախագծից, Այսպիսով, ժողովրդի ձայնատուութեան ենթարկում են երկու նախագիծ. քաղաքացիները նրանցից մէկն ընտրում են, իսկ միւսը մերժում կամ երկուսն էլ մերժում են. երկու նախագիծն ընտրանելու մասին, ինքն ըստ ինքեան հասկանալի է, խօսք լինել չէ կարող:

Բ. Նախաձեռնութեան առարկան.

Մի քանի կանտոններում (Յիւրիխ, Սէն-Գալլէն, ժընև և միւսն.) օրէնսդրական նախաձեռնութիւնը, ըստ բովանդակութեան, համապատասխանում է բեֆերենդումին, այսինքն, ժողովրդի լիազօրութեան, այս երկու արտայայտութիւններն էլ տարածում են միևնոյն առարկաների վրայ, և նրանցից մէկը միւսի լրացումն է: Բեֆերենդումի միջոցով ժողովուրդը հաստատում է կամ մերժում օրէնքները: Ինչպէս նա վաղօրօք ցոյց չ'տայ, թէ ի՞նչ պիտի անէ օրէնսդիրը:

Ուրիշ կանտոններում նրանք ոչ միշտ են տարածում միևնոյն առարկաների վրայ և, օրինակ, նախաձեռնութիւնը չէ գոր-

ծաղրում պետական գաշնագիրների և կոնկորդատների վերաբերմամբ: Այս գործողութիւնները, որոնց մասին չ'կան հզգրիտ ցուցումներ սահմանադրութիւնների մէջ,—հակառակ այն առարկաներին, որոնք ենթակայ են բեֆերենդումի—պէտք է համարել նախաձեռնութեան իրաւունքից դուրս:

Ասրգաուում, Շաֆֆհատուզէնում և Շվիցում նախաձեռնութեան իրաւունքը սահմանափակեալ է օրէնքների առաջարկութեամբ. իսկ միւս կանտոններում նախաձեռնութիւնը կարող է առաջարկել և օրէնսդրական որոշումներ:

Բազելեան երկրի սահմանադրութիւնը չէ պարունակում իր մէջ որոշում նոր օրէնքներ հրատարակելու մասին: Նախաձեռնութիւնը կարող է գործադրել այնտեղ միայն գոյութիւն ունեցող օրէնքների ընդհանուր կամ մասնաւոր վերաքննութեան սահմաններում: Վաադտում զանազանութիւն չէ դրեալ օրէնքների և որոշումների մէջ, այլ «Իւրաքանչիւր առաջարկութիւն, որ ծագում է նախաձեռնութիւնից», կարող է լինել նրա առարկան: Բազելքաղաքում նախաձեռնութեան առարկայ կարող է լինել աւագ խորհրդի ամեն մի որոշումը. Յուզում նա տարածում է ամեն մի վճռի վրայ, որ առաջ է գալիս օրէնսդրական իշխանութիւնից:

Շաֆֆհատուզէնի սահմանադրութիւնը ոչ ինչ չէ խօսում գոյութիւն ունեցող օրէնքների վերաքննութեան մասին. այսպիսով, նախաձեռնութիւնն այնտեղ կարող է արտայայտել միայն նոր օրէնքների առաջարկութեան մէջ: Գլարուսում օրէնքը կարող է փոփոխել միայն երեք ամիս անցած նրա ոյժ ստանալուց յետոյ (Գրատուրինդէնում—երկու տարուց յետոյ, Սէն-Գալլէնում—երեք տարուց յետոյ): Ժընևում այս որոշումը մերժեց և բողոքովին հիմնաւոր կերպով. իրաւ, ժողովրդական նախաձեռնութեան սկզբունքը չէ կարող միատեղ գոյութիւն ունենալ սահմանափակումների սխտեմի հետ. եթէ ժողովուրդը օգտւում է այդ իրաւունքից, նա պիտի օգտէ նրանից առանց որևէ պայմանների:

Այս համառօտ տեսութիւնից երևում է, որ օրէնսդրական նախաձեռնութեան խնդրում մեծ համաձայնութիւն չ'կայ կանտոնական սահմանադրութիւնների մէջ: Մենք դեռ կ'վերադառնանք այս խնդրին, երբ կ'սկսենք խօսել սահմանադրական նախաձեռնութեան մասին:



Գ. Մախաձեռնողների նապագայն թիւր.

Այստեղ հարկաւոր է մատնացոյց անել առաջ անհատական և հաւաքական նախաձեռնութիւնների վրայ: Առաջինը պատահում է այն կանտոններում, որոնք կառավարում են համայնական ժողովներով, առաջարկութեան իրաւունքի ձեռով. իսկ երկրորդը գոյութիւն ունի ընդ որ միւս կանտոններում: Յիւրիխը միացրել է նախաձեռնութիւնների այս երկու տեսակն էլ, տալով առաջարկութեան հեղինակին կամ այն հաստատութեան պատգամաւորին, որ արել է առաջարկութիւնը, իրաւունք, հիմնաւորելու իր առաջարկութիւնը կանտոնական խորհրդի ժողովներում, եթէ խորհրդի 25 անդամները կ'պահպանեն այս ցանկութիւնը:

Ստորագրութիւնների թիւը, որ պահանջուած է նախաձեռնութեան համար, ամեն տեղ նոյնն է, ինչպէս և ընթերցանութի ժամանակ: Այս կանոնից բացառութիւն են կազմում Յուզը, ուր ընթերցանութի համար պահանջուած է 500, իսկ նախաձեռնութեան համար 1000 ստորագրութիւն, և Ժընևը, որտեղ ընթերցանութի համար հարկաւոր է 3,500, իսկ նախաձեռնութեան համար 2500 ստորագրութիւն:

Պարտաւորիչ ընթերցանութիւն ունեցող կանտոններում, նախաձեռնութեան համար պահանջուող ստորագրութիւնների թիւը յարաբերութիւնը դէպի քաղաքացոց ընդհանուր թիւը ոչ ամեն տեղ համահասար է: Յիւրիխում և Աարգաուում կամաւոր ընթերցանութի և նախաձեռնութեան համար պահանջուած են հաւասար

1) Յիւրիխում և Գրաուբիւնդէնում, որոնց մասին խօսում է ընթերցանութի մէջ, նոյնպէս և Շվիցում, Օբվալդէնում, Բագելան Երկրում, Տեսենում և Վաադում, բացի պարտաւորիչ ընթերցանութից, գոյութիւն ունի և կամաւորը, այնպէս որ այս կանտոններում, բացի Յիւրիխից, օրէնսդրութեան կարեւորագոյն գործողութիւնները պարտաւորաբար յանձնուած են ժողովրդի ձայնտուութեան, իսկ ոչ այնքան կարեւորները միայն այն ժամանակ, երբ այդ կրպահանջէ քաղաքացիների մի որոշ թիւ:

Յիւրիխում ժողովրդի ձայնտուութեան պարտաւորաբար ենթակայ են ընդ որ նշանաւոր օրէնսդրական գործողութիւնները. իսկ կամաւոր ընթերցանութի մը պահած է հետեւել դէպքի համար: Դաշնակցական ստիմանադրութեան 89 յօդ. համաձայն, օրէնսդրական դաւանակցական ընթերցանութի, բացի 30,000 քաղաքացիներից, կարող են պահանջել նոյնպէս 8 կանտոններ. Յիւրիխի կանտոնական ստիմանադրութիւնը թողնում է 5,000 քաղաքացիներին, կամ կանտոնական խորհրդի անդամների մի երրորդական մասին, կամ կառավարչական խորհրդին (կանտոնի գործադիր իշխանութիւնը, վարչութիւնը) իրաւունք պա-

թիւով ստորագրութիւններ, այսինքն, 5,000. իսկ աղաքացիներութիւն է այս կանտոններում՝ 80,317 և 39,475: Գաուբիւնդէնում (սահմանադրական) նախաձեռնութեան համար պահանջուած են 5,000 քաղաքացիներ, երբ քաղաքացիների թիւը 21,865 է: (Իսկ օրէնսդրական նախաձեռնութեան համար այստեղ պահանջուած են 3,000 ստորագրութիւններ):

XI. 1872 թ. ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ.

1848 թ. սահմանադրութիւնը, որը մի գիշում էր մի կողմից՝ դաշնակցութեան ներքին գործերի մէջ և միւս կողմից՝ միութեան ձգտելուն՝ օտար տէրութիւնների հետ ունեցած յարաբերութիւնների մէջ, տասն և հինգ տարւայ ընթացքում լիովին բաւարարութիւն էր տալիս կանտոնների և դաշնակցութեան պահանջներին: Բայց 1864 թ. սկսեց նկատուել մի շարժում, որը ձգտում էր, ինչ ձեռով էլ լինի, մտցնել ժողովրդական ձայնտուութեան իրաւունքը դաշնակցական օրէնսդրութեան համար: Արգիւնագործութիւնը և առևտուրը հասան նշանաւոր զարգացման և յայտնի տնտեսական միջոցները. որոնք չէին հաշտուած կանտոնների գերագոյն իրաւունքների անսահման լինելու հետ, դարձան անպայման անհրաժեշտ, ինչպէս, օրինակ, աւելի կենտրոնացրած կազմակերպութիւններն են՝ մտքստան գործերի և պոստ-հեռագրատների: Վճռողական նշանակութիւն ունէր դաշնակցական սահմանադրութիւն վերաքննելու համար Փրանսիայի հետ կապած դաշնագիրը հաստատարնակութեան իրաւունքների վերաբերմար (1864 թ.), որով Փրանսիացի ամեն մի քաղաքացու տրուած էր իրաւունք բնակուել և արհեստներով պարապել Զվիցերիայում, այն ինչ զվիցերիացի հրէաները չէին վայելում Զվի-

հանջելու, որպէս զի այս խնդրին վերաբերել կանտոնական խորհրդի որոշումները նախապէս յանձնեն ժողովրդի ձայնտուութեան: Իսկ նախաձեռնութիւնը Յիւրիխում ոչ միայն հաւաքական է, այլ և անհատական. 5,000 ստորագրութիւններ, որոնց մասին ասուած է ընթերցում, հարկաւոր են միայն այն դէպքում, եթէ նախագիծ տուրին չ'պահպանէ կանտոնական խորհրդի անդամների երրորդ մասը,

ցերիայի մնացեալ քաղաքացիներէ բոլոր իրաւունքները: Այս անարդարութիւնը հեռացնելու համար, դաշնակցական խորհուրդը յուլիսի 1-ին 1865 թ. առաջարկեց վերաքննել դաշնակցական սահմանադրութեան 41 և 44 յօդաւանդը, որոնց մէջ խօսք կար միայն քրիստոնէական դասանութիւններին պատկանող քաղաքացիներէ իրաւունքներէ մասին:

Դաշնակցական ժողովը դրան միացրեց նոյնպէս քանի մի յօդաւանդ (վերաբերեալ մի քանի պատիժների վերացման, երկարութեան և ծանրութեան ընդհանուր չափեր մտցնելուն, դրականական, գեղարեւոտական և արդիւնաբերական սեփականութիւնը պաշտպանելուն): Ինչը յօդաւանդից, որոնք առաջարկած էին ժողովրդի ձայնաւութեան 14 յունարի 1866 թ., ժողովուրդը հաստատեց միայն մէկը, այսինքն այն, որը զվիցերիական քաղաքացիների մէջ հաւասարութիւն էր դնում առանց դաւանանքների խտրութեան: Չնայած այս անյաջողութեան, սկսած շարժումը սաստկանում էր, պահանջելով սահմանադրութեան աւելի հիմնաւոր վերաքննութիւն և ժողովրդի գերագոյն իրաւունքների ընդարձակ ծաւալում: Միւս կողմից, նոր արամագրութիւնը Չվիցերիայում պահպանութիւն էր գտնում մի քանի օտար գործօնների կողմից. այդպիսի գործօններ էին ֆրանսիական իմպերիայի և Նապոլեոնի դրութիւնը և Պրուսիայի զօրանալը, որ աճում էր սաստիկ արագութեամբ: Այս հանգամանքների մէջ կային բաւականաչափ պատճառներ, որոնք երկիւղ էին յարուցանում Չվիցերիայում. պահանջում էին զօրքի կազմակերպութիւն, որը կարողանար Ֆրանսիայի և Պրուսիայի ընդհարման դէպքում ստիպել յարգելու Չվիցերիայի տէրութեան չեզօքութիւնը: Վային և ուրիշ խորհրդածութիւններ, այն ժամանակ քաղաքացիական իրաւունքը զանազան կանտոններում դանազան էր. օրէնքի հրամանները քաղաքացիական պատկերների վերաբերմամբ ենթարկւում էին քմահաճ և շատ անգամ վիրաւորական սահմանափակումների. այսպէս, օրինակ, մի քանի կանտոններում օրէնքը արգելում էր պատկերը զանազան դաւանութեանց պատկանող անձանց մէջ:

Երբ 1869 և 1870 թ. կանտոնների մեծ մասը վերաքննեցին իրանց սահմանադրութիւնները և իրանց ներկայացուցչական սիստեմը վերածեցին զուտ ռամկապետութեան, այլ ևս հիմք չ'ը-

կար յետաձգելու դաշնակցական վերաքննութիւնը: Դաշնակցական խորհրդին յանձնւած էր ներկայացնել զեկուցումը այն մասին, թէ ինչպէս պէտք է փոփոխել սահմանադրութիւնը, որ նա համապատասխանէ ժամանակի նոր պահանջներին: Այդ բանը կատարեց, և 1871 թ. աշնան դաշնակցական ժողովը գիմեց վերաքննութեան գործին: Սահմանադրութեան նախագիծը, որ հետեանք էր այս քննութեան, պարունակում էր իր մէջ, ի մէջ այլ ներմուծումների, հետեալ յօդաւանդը ժողովրդական օրէնսդրութեան վերաբերմամբ:

1848 թ. սահմանադրութեան 78 յօդ. ստանում էր հետեալ լրացումը. «Դաշնակցական օրէնքները և դաշնակցական որոշումները, որոնք անյետաձգելիութեան բնաւորութիւն չ'ունեն, պէտք է յանձնեն ժողովրդի ձայնաւութեան, երբ այդ կ'պահանջեն 50,000 զվիցերիացի քաղաքացիներ կամ հինգ կանտոններ»:

1848 թ. սահմանադրութեան 81 յօդ. յետոյ գետեղւած էին հետեալ երկու յօդաւանդները. «Երբ 50,000 զվիցերիացի քաղաքացիներ կամ հինգ կանտոն կ'պահանջեն վերաքննել կամ վերացնել որ և է մէկը գոյութիւն ունեցող դաշնակցական օրէնքներից կամ որոշումներից, կամ հրատարակել նոր դաշնակցական օրէնք կամ որոշում մի յայտնի առարկայի մասին, և այս պահանջը չի հակասի դաշնակցութեան պետական իրաւագիտական պարտաւորութիւններին (Vertragsrechtliche, de droit public), այն ժամանակ երկու պալատներն էլ, եթէ համաձայն են այս կամ այն պահանջի հետ, պէտք է մշակեն նոր օրէնքի կամ որոշման նախագիծ և ներկայացնեն այն ժողովրդի վճռին»:

Իսկ եթէ երկու պալատն էլ համոժայն չեն այս կամ այն պահանջի հետ, նա պիտի անցնի ժողովրդի ձայնաւութեան, և եթէ քաղաքացիների մեծամասնութիւնը ձայն կ'տայ յօդուտ նրան, պալատները պարտաւոր են մշակել օրէնքի կամ որոշման նախագիծը, համապատասխան մեծամասնութեան ցանկութեան, և ներկայացնել այն ժողովրդի վճռին»: 1)

Այս յօդաւանդը պարունակում են իրանց մէջ և կամաւոր բեֆերենդում և ժողովրդական նախաձեռնութեան իրաւունք,—

1) Դաշնակցական սահմանադրութեան 80 յօդ. մերժւած ժողովրդի կողմից 5 մարտի 1872 թ.

հարկաւ, սահմանափակ: Նախաձեռնութեան իրաւունքն այստեղ սահմանափակուած է նրանով, որ նախաձեռնողներից ներկայացուած առաջարկութիւնը պիտի ենթարկուէր ձայնաւուծեան դաշնակցական ժողովում և կարող էր փոփոխուել պալատների կողմից:

Սահմանադրութեան այս նախագիծը մերժեց ժողովրդի կողմից ընդհանուր ձայնաւուծեան ժամանակ 5-ին մարտի 1872 թ. նա չափազանց կենտրոնացնող էր իր ժամանակի համար: Կաթոլիկ կանտոնները մերժեցին այն՝ կրօնական դիտումների պատճառով, ռամկապետական-դաշնակցականները, որոնք պահանջում էին ընդհանուր համար կանտոնների ձայներ, այս պահանջը անուժ էր զանազան կողմերից—չ'կարողացան հաշտել այն բանի հետ, որ օրէնքների և օրէնսդրական որոշումների վճիռը յատկացրուած լինի միայն ժողովրդին:

XII. ՕՐԷՆՍԴՐԱԿԱՆ ԲԵՖԵՐԵՆԴՈՒՄԸ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՄԷՋ.

§ 1. Դաւանակցական սահմանադրութեան 89 յօդ.

Երբ պալատները 1873 թ. նորից դիմեցին դաշնակցական սահմանադրութիւնը վերաքննելու խնդրին, ժողովրդական օրէնսդրութեան կողմնակիցների ջանքերը ուղղուած էին այն բանի վրայ, որպէս զի մերժուած նախագծից տեղափոխէին նորի մէջ ընդհանուր և նախաձեռնութեան վերաբերեալ յօդուածները: Բայց տարածայնութիւններ կային նաև ընդհանուր կողմնակիցների մէջ. դաշնակցականները կամենում էին միայն կանտոնների ձայնաւուծիւնը, իսկ ռամկապետականները պահանջում էին բոլոր քաղաքացիների ձայնաւուծիւն, որը, նրանց կարծիքով, միակ միջոցն է հնարաւորութիւն տալու ժողովրդին ներգործական մասնակցութիւն ունենալ օրէնքների կազմութեան մէջ:

Այս իրար հակառակ պահանջներին գոհացում տալու համար, գիջում արին, որով նախաձեռնութեան վերաբերեալ յօդուածը ոչ ընչացրուեց, բայց ընդհանուր պահանջելու համար, ստորագրութիւնների թիւը իջեցրած է 50,000-ից մինչև 30,000, իսկ ընդհանուր

ընդունի իրաւունք ունեցողների թիւը բարձրացուած է հնդից մինչև ութ:

Այսպիսով, այստեղ նպատակն այն չէր միայն, որ ժողովրդին հնարաւորութիւն տան վերահսկելու դաշնակցական պալատների գործունէութեանը, այլ և այն, որ կանտոնների ձեռք զէնք տան դաշնակցական իշխանութեան սաստիկ զօրացած նշանակութեան դէմ. դա իրողութիւն է, բաւականաչափ ապացուցուած զվիցերիական իրաւունքի պատմութեամբ, այն է՝ այստեղ դաշնակցութեան իշխանութեան ամեն մի ընդարձակման աշխատում են, իբրև հակակշիռ, դնել մի ուրիշ միջոց, որը կարողանար վերականգնել հաւասարակշռութիւնը դաշնակցական պետութեան և պետութիւնների դաշնակցութեան մէջ: ¹⁾

Միևնոյն ժամանակ հարկ եղաւ նոյնպէս մի առ ժամանակ հրաժարուել օրէնսդրութեան կատարեալ միաւորումից, և այդ պատճառով մի քանի յօդուածների խիստ կենդրոնացնող միտումները վերջնական խմբագրութեան ժամանակ մեղմացան: 19 ապրիլի 1874 թ. կայացաւ ընդհանուր ձայնաւուծիւն նոր սահմանադրութեան վերաբերմամբ. նա ընդունեց քաղաքացիների ահագին մեծամասնութեամբ (340,199 ընդդէմ 198,013) և կանտոնների մեծամասնութեամբ (14 1/2 ընդդէմ 7 1/2): Տասնամեայ աշխատանքից յետոյ վերաքննութեան գործը վերջացաւ. դրա հետ միասին ընդհանուր վերջնականապէս տեղ գտաւ Զվիցերիայի դաշնակցական իրաւունքի մէջ:

1874 թ. դաշնակցական սահմանադրութեան 89 յօդ. (գերմանական խմբագրութեամբ) ²⁾ ասում է. «Դաշնակցական օրէնքները

¹⁾ L'état fédéral և l'état fédéré. համապատասխան գերմանական տերմինները թուով են աւելի ճշգրիտ՝ der Bundesstaat և der Staatenbund: Կանտոնները առանձին, ինքնուրոյն պետութիւններ են (soverain). Բայց և զվիցերիական պետութիւնը ինքնուրոյն պետութիւն է: Այստեղ մենք տեսնում ենք երկու պետութիւնների և երկու գերագոյն իշխանութիւնների (soveranité) միասին գոյութիւն ունենալը՝ այսինքն, ընդհանուր-դաշնակցական և տեղային-պետական, կանտոնական. դաշնակցական պետութիւն դարձածը նձանակում է, որ գերիշխում է առջինը, իսկ պետութիւնների դաշնակցութիւն դարձածը—ցոյց է տալիս երկրորդի գերիշխանութիւնը:

²⁾ Զվիցերիայի դաշնակցական օրէնսդրութեան մէջ պաշտօնական են համարուում երկու լեզուներ՝ ֆրանսերէնը և գերմաներէնը: Իսկ կանտոնական օրէնսդրութիւնների մէջ պաշտօնական են համարուում տեղական լեզուները:

և դաշնակցական որոշումներն ընդունելու համար անհրաժեշտ է երկու պալատները համաձայնութիւնը: Դաշնակցական օրէնքները, նոյնպէս ընդհանուր-պարտաւորիչ դաշնակցական որոշումները, որոնք անյետաձգելիութեան բնաւորութիւն չունեն, բացի այդ, պէտք է յանձնեն ժողովրդին՝ ընդունելու կամ մերժելու համար, եթէ այդ կ'պահանջեն 30,000 քաղաքացիներ կամ ութ կանտոն»:

Դաշնակցական օրէնքը միշտ ունի պարտաւորիչ նշանակութիւն: Այս յօդուածի գերմանական խմբագրութիւնը անյաջող է. «Die nicht dringlicher Naturs sind» բառերը կարելի է վերաբերել այնտեղ թէ օրէնքներին և թէ որոշումներին: Ֆրանսերէն խմբագրութեան մէջ այս աւելի պարզ է արտայայտուած: «Անյետաձգելիութեան» հարցը չէ կարող ծագել օրէնքների վերաբերմամբ. ամեն մի օրէնստական որոշում, որ «օրէնքի» անուն է կրում, ենթակայ է և ուրիշ րեֆերենդումի սրբազորութեան:

Յետաձգելիութեան բնաւորութիւն կարելի է յատկացնել միայն որոշումներին, և միայն—անյետաձգելի որոշումները կարող են անյապաղ կատար ածել: Բացի այդ, ժողովը երբեմն է օգտուում այդ իրաւունքից: Այնուամենայնիւ այս որոշումը բաւականաչափ ճիշտ չէ երևում: Ե՞րբ պէտք է օրէնսդրական որոշումը (ղեկրետ) համարել դաշնակցական օրէնք: Ե՞րբ ընդհանուր—դաշնակցական որոշումը չ'ունի անյետաձգելիութեան բնաւորութիւն:

Անշուշտ, անյետաձգելիութեան զսղափարը այստեղ վատ է որոշուած և դաշնակցական ժողովի քմահաճոյքին է թույնուած նոյնպէս,—անւանել արդեօք այս կամ այն առաջադրութիւնը, որ պարունակում է ղեկրետի մէջ, օրէնք թէ որոշում: Ժողովին է թողնուած նոյնպէս վճռել —«ընդհանուր—պարտաւորիչ» է արդեօք այս կամ այն որոշումը թէ ոչ: Այս դարձեւածի մէջ նոյնպէս չ'կայ պատշաճ ճշտութիւն, որը նամանաւանդ աւելի ցանկալի կ'լինէր, քան գերմանական դարձեւածը—«Allgemein verbindliche Bundesschlüsse», բնդհանուր—պարտաւորիչ դաշնակցական որոշումներ, —որը չէ համապատասխանում ֆրանսերէն խմբագրութեան դարձեւածին. «arrêtés d'une portée générale», որոշումներ, որոնք ունեն բնդհանուր նշանակութիւն: Այսպիսով, այստեղ որոշ սահմաններ չեն դրուած դաշնակցական ժողովի կամայական



նութեան առաջ, և նա կարող էր հանել ըֆերենդումից այս կամ այն որոշումները, որոնք աւելի մեծ նշանակութիւն ունեն, քան այս կամ այն օրէնքները:

Վերջապէս, հարց է ծագում, կարճ է արդեօք այն որոշումը, որ ընդհանուր նշանակութիւն ունի, համարել անյետաձգելի: Այդ հարցին, որ առիթ տւեց երկար միճաբանութիւնների, պէտք է պատասխանել բացասաբար. այդպիսի մի պատասխան արդարանում է այս յօդուածի ֆրանսերէն ընագրով: Ֆինանսական գործերի վերաբերմամբ ըֆերենդում գոյութիւն չ'ունի դաշնակցութեան մէջ,—հակառակ շատ կանտոններին: Վերաքննութիւնից յետոյ մի առաջարկութիւն արեց յօդուած ֆինանսական ըֆերենդումի ներմուծման, բայց պալատները մերժեցին այդ ձայների ստւար մեծամասնութեամբ, երկիւղ կրելով, մի գուցէ ժողովուրդը հանրապետական ֆինանսական գործեր վճռելիս՝ ղեկավարի կատարութեամբ և տեղային շահերով: Այս սակաւ գործերին վերաբերեալ որոշումները հաւասարեցուած են միւս որոշումների հետ. որ լէս զի նրանց կարելի լինի հանել ըֆերենդումից. անհրաժեշտ է ամեն անգամ նրանց յայտարարել անյետաձգելի:

Երբ 1878 թ. քննուում էր դաշնակցական օժանդակութեան հարցը՝ վերաբերեալ սէն-գոտտարդեան տուննիլի անց կացնելուն, դաշնակցական խորհուրդը առաջարկեց այս առարկայի մասին եղած որոշումը ենթարկել ըֆերենդումի, պատճառաբանելով իր առաջարկութիւնը հետեւեալ խօսքերով, «կան տարածայնութիւններ այն մասին, թէ կարճ է արդեօք. որ և է հասարակական ձեռնարկութեան մասին եղած համաձայնութեան որոշումը համարել ընդհանուր—պարտաւորիչ (d'obéidation dénérale): Եթէ մենք մտքով թափօնցենք այս արտայայտութեան իսկական իմաստի մէջ, մենք հեշտութեամբ կ'հասկանանք նրա ճիշտ նշանակութիւնը օրէնքների համար նշանակուած տնօրինութիւններին ենթակայ են նաև այն որոշումները. որոնք, օրէնքների նման, խօսում են մի որ և է ընդհանուր նշանակութիւն ունեցող ձեռնարկութեան մասին (la portée dénérale). այդպիսի ըմբռնումը դուրս է ձգում այս կատեգորիայից մասնաւոր բնաւորութիւն ունեցող որոշումները. եթէ այդ ընդունենք, այն ժամանակ ըֆերենդումը անգործադրելի է դառնում օժանդակութեան ղեկրետի նկատմամբ»:

մամբ, որ ի նկատի ունի ճշտիւ որոշւած, բողոքովին մասնաւոր դէպք և կանոնաւորում է միայն այս դէպքը: Եթէ դաշնակցական խորհուրդը այնուամենայնիւ չէ կանգնում այդպիսի տեսակէտի վրայ, սա շնորհիւ գործնական պայմաններէ ներկայ դրութեան, որը պահանջում է, որ նոյն իսկ կասկած չ'յարուցւի, որ իբր թէ նա, մտքերը սաստիկ յուզելու ընդունակ մի խնդիր վճռելու միջոցին, ցանկանում է նւազեցնել ժողովրդական իրաւունքները, սահմանադրութիւնը մեկնաբանելով արհեստական ճանապարհով: Այդ հանգամանքը նկատի առնելով, խորհուրդը աւելի լաւ է համարում առաջարկել այն մեկնաբանելու այն մտքով, որը գուցէ շեղում է օրէնքի բնագրի իսկական նշանակութիւնից, և ընդունել ժողովրդի ձայնաւորութեան բոլոր հետեւանքները,—քան թէ առաջ բերել անվստահութիւն հակառակ բացատրութեամբ:

1 մայիսի 1884 թ. դաշնակցական որոշումը, որը նշանակում էր 10,000 ֆրանկ լրացուցիչ կրեդիտ Զվիցերիայի գեսպանութեան դիւանի պահպանութեան համար—վաշինգտոնում, կնքարկեց ընդհանուր ձայնաւորութեան և մերժեց սուտը մեծամասնութեամբ (219,728 ընդդէմ 137,824 քաղաքացիների և 6 1/2 ընդդէմ 15 1/2 կանտոնների):

Դաշնագիրները սովորաբար կռում են կառավարութիւնների ներկայացուցիչները: Միայն Զվիցերիան է բացառութիւն կազմում այդ կանոնից. այստեղ ինքը դաշնակցական ժողովը իրաւունք ունի կատարել այս պարտականութիւնը և նա մինչև անգամ հրաւիրեց դաշնակցական խորհրդին—չ'փոփոխել այլևս առանց իր համաձայնութեան օտար տէրութիւնների հետ կապած դաշնագիրները, որոնք ըստ էութեան պարտաւորիչ բնաւորութիւն ունեն: Դաշնակցական խորհուրդը չէ կարող ժամանակից առաջ և առանց պալատների համաձայնութեան վերացնել դաշնագիրը, որ հաստատել են պալատները: Դաշնագիրները ենթակայ չեն մասնաւոր բեֆերենդումի. և իրաւ, նրանք չեն յիշւած դաշնակցական սահմանադրութեան 89 յօդւածում: Այս առարկայի նկատմամբ մի անգամ մի այսպիսի առաջարկութիւն էր արւած դաշնակցական ժողովում. «դաշնակցական օրէնքները և դաշնագիրները օտար տէրութիւնների հետ անցնում են ժողովրդի ձայնաւորութեան». այս առաջարկութիւնը մերժեց ազգային խորհրդի կողմից: Պետական իրաւունքի համաձայն, դաշնագիրները պէտք

է ընդունեն այնպէս, ինչպէս օրէնքները, այսինքն, ենթակայ են բեֆերենդումի կամ պէտք է վերապահութիւն ունենան անյետաձգելութեան մասին: Բայց այս չէ գործադրում, որից կարելի էր եզրակացնել, իբր թէ քաղաքացիները դուրս են օրէնսդրութեան մասնակցութիւնից, երբ գործը վերաբերում է մի որ և է միջազգային խնդիր կանոնաւորելուն: Այս հարցում մեծ զգուշութիւն է հարկաւոր. ազգային խորհուրդը չ'կամեցաւ ընդունել վերոյիշեալ առաջարկութիւնը, բայց նա ընդունեց հետեւալ լըրացուցիչ ծանօթութիւնը. ոչ մի նոր, կարևոր և ներքին գործերը շօշափոխ իրաւունք չէ կարող ներմուծել միջազգային դաշնագրի միջոցով. նոյնպէս և ոչ մի իրաւունք, որ պատկանում է դաշնակցութեան և ստեղծւած է սովորական օրէնսդրութեան ճանապարհով, չէ կարող զգալի փոփոխութեան ենթարկւել միջազգային դաշնագրով:

Պետական դաշնագիրները ամբողջելի են. դաշնակցական դատարանը նոյնպէս իրաւունք չ'ունի քննել նրանց. նա պարտաւոր է ղեկավարել նրանցով մինչև անգամ այն դէպքում, եթէ նրանք հակառակ են դաշնակցական սահմանադրութեան (յօդ. 113):

§ 2. Կառնակցական սահմանադրութեան 90 յօդ.

Այս յօդւածն ասում է.

«Դաշնակցական օրէնսդրութիւնը կ'կայացնէ անհրաժեշտ որոշումները ժողովրդական ձայնաւորութեանց ձևերի և ժամանակամիջոցների վերաբերմամբ»:—Այն որոշումները, որոնք նախատեսւած, են այս յօդւածում, պարունակւում են 1874 թ. 17 յունիսի դաշնակցական օրէնքի մէջ, մենք կ'ըբերենք այդ որոշումները: Հըրատարակւած օրէնքները և որոշումները պէտք է յայտարարեն «Դաշնակցական Համբաւարերի»¹⁾ մէջ. նոյնպէս և նրանց օրինակները մի յայտնի քանակութեամբ պէտք է ուղարկւեն կանտոնական կառավարութիւններին համայնքների համար: Մի խնդիրքի զրգմամբ, դաշնակցական խորհուրդը առաջարկեց համապատասխան օրէնքի կամ որոշման հետ միաժամանակ յայտարարել նաև այն խորհր-

¹⁾ Das Bundesblatt, — sa feuille fédérale. պաշտօնական օրգան դաշնակցութեան յայտարարութիւնների համար. լոյս է տեսնում շաբաթը մի անգամից ոչ պակաս:

դածութիւնները, որոնց հիման վրայ պալատները կողմից ընդունուած է նոր օրէնսդրական միջոցը: Այս կարգը, որ գոյութիւն ունի կանտոնների մեծամասնութեան մէջ, նոր չէր լինի և դաշնակցութեան մէջ, որովհետև դաշնակցական սահմանադրութեան նախագծերին նոյնպէս յարակցում էին դիմուհները ժողովրդին: Որքան էլ նպատակայարմար լինի այս առաջարկութիւնը, նա մնաց առանց հետևանքների:

Ժողովրդական ձայնաւուրների պահանջը պէտք է ներկայացրի դաշնակցական խորհրդին իննըսուն օր անցած համապատասխան որոշման յայտարարութիւնից յետոյ. աւելի ճիշտ կ'լինի հաշուել իննըսուն երկու օր, որովհետև այդ շրջանը սկսում է ոչ թէ «Դաշնակցական Համբաւաբերի» համապատասխան № լոյս տեսնելու օրից, այլ հետևեալ օրից, և դաշնակցական տանը 1) ընդունում են բեֆերենդումի պահանջները՝ պոստին յանձնուած ժամանակամիջոցի վերջին օրը՝ պատուիրած ծրարով դաշնակցական խորհրդի անունով՝ նոյն օրուայ դրոշմը խփած պոստայն մարկայի վրայ:

Ժողովրդական ձայնաւուրների պահանջը ներկայացնելու համար հարկ չ'կայ սպասել ժամանակամիջոցի օրան. հէնց որ կ'հաւաքէ ստորագրութիւնների օրէնքով պահանջուած թիւը, նրանց կարելի է ներկայացնել դաշնակցական խորհրդին:

Բեֆերենդումի պահանջը պիտի անւի գրաւոր կերպով: Իւրաքանչիւր համայնքի նախագահը ստուգում է իրաւատէր լինելը այն անձանց, որոնք ստորագրել են նրա համայնքում, բայց նա չէ ստուգում ստորագրութիւնների իսկութիւնը: Եթէ այդպիսի պահանջ կ'անւի կանտոնների կողմից, նա ներկայացում է դաշնակցական իշխանութեան համապատասխան կանտոնների խորհուրդների կողմից: Իսկ իրանց՝ կանտոնների մէջ խորհուրդները որոշումները ենթակայ են, ըստ իրաւանց, կանտոնական բեֆերենդումին, բայց իրօք սա չէ գործադրում. 1875 թւականից այդպիսի դէպք չէ պատահել:

Ստանալով պահանջը, որին ստորագրուած են 30,000 քաղա-

1) Palais fédéral, դաշնակցական պալատ: Մենք գործ ածեցինք վերջին ամիսներում պաշտոնապէս ընդունուած անունը «Դաշնակցական տուն»: Դա մի շինութիւն է, ուր զետեղուած են դաշնակցական խորհուրդը. երկու պալատները և դաշնակցական դիւանատունը:

քացիներ կամ որը ներկայացուած է ութ կանտոնների կողմից, դաշնակցական խորհուրդը նշանակում է ընդհանուր ձայնաւուրների օրը, սակայն այս ձայնաւուրութիւնը չէ կարող տեղի ունենալ, մինչև որ չորս շաբաթ չ'անցնի դեկրետը յայտարարելուց յետոյ որը առաջ է բերել բեֆերենդումի պահանջը:

Եթէ օրէնքից սահմանուած ժամանակամիջոցում բեֆերենդումի պահանջ չէ եղած կամ եթէ կայացած ձայնաւուրների հետևանքը եղաւ յօդուտ համապատասխան դեկրետի, նա ստանում է ոյժ և մտցում է օրէնքների մատեանը: Իսկ եթէ ձայնաւուրութիւնն այդ մերժեց, նա համարում է ուղղակի գոյութիւն չ'ունեցող: Այս երկու դեպքերում էլ դաշնակցական խորհուրդը պէտք է ներկայացնէ պալատներին առաջիկայ նիստի համար համապատասխան դեկրետ:

§ 3. Դաշնակցական բեֆերենդումի հետևանքները.

Ժողովուրդը ցոյց տւեց մեծ խոհեմութիւն այս իրաւունքից օգտուելու նկատմամբ: Շատ ժողովրդական ձայնաւուրութիւններ են եղել օրէնքների և որոշումների վերաբերմամբ, բայց նրանք երբէք առիթ չեն տւել որևէ յուզումների կամ բռնութիւնների: Մինչև անգամ երբ ձայնաւուրութիւնները կատարուած են չափազանց կարևոր խնդիրների վերաբերմամբ, կարծիքների մէջ տարածայնութիւնները չեն թուլացնում այն կապերը, որոնց Զվիցերիայի դաշնակցութիւնը պարտական է իր ներդաշնակութեան համար: Ժողովուրդը մի յայտնի կուլտուրական զարգացում ունի, նա ցոյց է տալիս կենդանի հետաքրքրութիւն դէպի պետական գործերը, բայց—նրա դատողութեան անկախութիւնը հեշտ կարող է ենթարկւել զանազան ազդեցութիւնների: Շատ դէպքերում ձայնաւուրութիւնների ժամանակ վճռող դեր են խաղում այնպիսի խորհրդածութիւններ, որոնք ըստ ինքեան օտար են առաջարկուած օրինագծին. այդ տեսակ ձայնաւուրութիւնների հետևանքները կ'մնային բոլորովին անհասկանալի, եթէ մենք կամենայինք նրանց մէջ տեսնել միայն ժողովրդի դատողութիւնը իրա՛ օրինագծի մասին:

Մենք այստեղ չ'պիտի բնենք բեֆերենդումի ձայնաւուրութիւնները, որոնք տեղի ունեցան 1874 թ. իսկ ընդհանրապէս քննելով նրանց հետևանքները, կարել է նկատել երկու՝ զվիցե-

բիւական ժողովրդի համար ընտրող գծեր. մի կողմից, կանտոններին ազգաբնակչութեան սէրը դէպի իրանց ինքնավարութիւնը, որի վրայ նա նայում է իբրև պատմական իրաւունքի վրայ, միւս կողմից,—անյօժարութիւն անելու մեծամեծ ծախսեր, որոնց անմիջական օգուտը ակնյայտնի չէ երևում ժողովրդին:

Դաշնակցական միտումները, որոնց շնորհիւ մերժեց 1872 թ. սահմանադրութեան նախագիծը, իրանց տակ շատ հող կորցրին: Եւ չէ կարելի ժխտել, որ Զվիցերիան աստիճանաբար մտնում է միապետութեան ձեռն: Արդէն լուծւում են ձայներ, որոնք պահանջում են մտցնել պարաւտորիչ բեֆերենդում դաշնակցական գործերի վերաբերմամբ: Ով ցանկանում է, որ Զվիցերիան պահպանէ դաշնակցական պետութեան կազմակերպութիւն, բոլորեքեան ամենաեռանդուն կերպով պէտք է դիմադրեն այս ձգտումներին: Կանտոններում պարտաւորիչ բեֆերենդումից օգտւում է միայն ժողովուրդը, միաբանւած և միատեսակ, իսկ դաշնակցական գործերում մենք ունենք քսան երկու զանազան պետութիւններ. այստեղ իրապէս կան երկու տարբեր գերագոյն իշխանութեան,—ժողովուրդը և կանտոնները:

Եթէ օրէնքներն ընդունւէին միայն ժողովրդի մեծամասնութեամբ շուտով կանտոնական ինքնավարութեան մնացորդները վերջը կ'զար, և կանտոնների խորհրդի, իբրև այս վերջինների ներկայացուցչի դրութիւնը կ'զառնար խիստ օրհասական:

Աւելի նպատակայարմար կ'լինէր դաշնակցական սահմանադրութեան նոր վերաքննութեան ժամանակ բարեփոխել կամաւոր բեֆերենդումը, որպէս զի կարելի լինի վերացնել մի բանի անյարմարութիւնները նրանից օգուտելիս: Վերցնենք հետեւել օրինակը. 1882 թ. զվիցերիական դեսպանութիւն հիմնեց Միացեալ Նահանգներում. ոչ ոքի մտքովն էլ չէր անցնում այդ դէպքի առիթով դիմել բեֆերենդումի. բայց երբ երկու տարուց յետոյ հարկաւոր եղաւ 10,000 ֆրանկ զվիցերիական դեսպանի քարհարկաւոր պաշտօն ստեղծելու համար Վաշինգտոնում, ժողովուրդը տուղարի պաշտօն ստեղծելու համար Վաշինգտոնում, ժողովուրդը մերժեց այս կրեդիտը: Նիւմա Դրօն, դաշնակցական խորհրդի նախկին անդամը, շատ ճիշտ է ասում այս առարկայի վերաբերմամբ. «Երբ ժողովրդին հրաւիրում են վճռելու այս խնդիրը, թէ հարկաւոր է արդեօք ստեղծել քարտուղարի պաշտօն, ամեն մէկը զգում է, որ դա առողջ քաղաքականութիւն չէ: Որքան էլ

բարձր լինի մեր ժողովրդի քաղաքական կրթութիւնը, նա դեռ չէ հասել այն աստիճանի, որ ժողովուրդը երբէք չ'սխալւի իր վճռին ենթակայ առարկաների յարաբերական կարևութեան գընահատումի մէջ: Նա շատ անգամ մոռանում կամ անզիտանում է հեռապատկերի օրէնքները և աննշան բաներին էական նշանակութիւն է տալիս»:

Դաշնակցական սահմանադրութեան 89 յօդ. հարկաւոր կ'լինէր վերաքննել և պարզապէս ցոյց տալ նրա մէջ, թէ ինչն է ենթակայ բեֆերենդումի, ինչպէս այդ անում են կանտոնական սահմանադրութիւնները: Բայց և այնպէս մինչև այժմ դաշնակցական խորհուրդը հարկաւոր չէ համարել առաջարկել սրա վերաբերմամբ որ և է փոփոխութիւն:

Բայց եթէ զվիցերիական ժողովուրդը, ոչ ցանկալի գործոնների ազդեցութեան տակ, երբեմն մերժում է մի քանի զիկրետներ, որոնք նոյնքան անհրաժեշտ են, որքան և օրինաւոր, այնուամենայնիւ ճշմարիտ է այն, որ բեֆերենդումը զարկ տւեց իսկական առաջադիմութեան և որ նա վայելում է հազազիւտ արտօնութիւն—ունենալ կողմնակիցներ քաղաքական բոլոր համախմբումների մէջ: Արմատականները փառաբանում են նրա արժանաւորութիւնները. պահպանողականները, ընտրողական շրջանների քմահաճ բաժանման շնորհիւ, ունենալով միայն ներկայացուցչիները փոքրամասնութիւն ազգային խորհրդում, նրա մէջ տեսնում են միջոց, արմատական քաղաքականութիւնը զսպելու,—մի միջոց, որ նրանց քանիցս անգամ միացրել է: Բեֆերենդումի իրաւունքը ժողովրդին դարձրել է պահպանողական, և նա շատ անգամ մերժում է օրինագծերը, չ'նայած նրանց հիմնաւորութեան և յաջող պաշտպանութեան. այսպիսի դեպքերում բաւական է միայն զանազան փոքրամասնութիւններին միանալ, և նրանք կ'զառնան ստւար և վճռող մեծամասնութիւն:

Սակայն չափազանցութիւն կ'չինէր, եթէ ասէինք, որ բեֆերենդումը նւաճել է ամենքի համակրութիւնները. նրա դէմ հակաճառել են հեղինակաւոր մարդիկ, անւանելով այն «Փիլոսֆերա» և «խոչնդոտ», և նրանից գերադասում էին զուտ—ներկայացուցչական սխտեմը: Այսպէս օրինակ Վէլտին, 1872 թ. սահմանադրութեան նախագիծը քննելիս՝ ասում էր.

«ժողովրդական ձայնաւորութիւնը, կարելի է, հէնց լաւ է

կանտոններում, բայց նրա արժանիքը նւազում է այն չափով, որ չափով ընդարձակուում է նրա գործողութեան շրջանը: 8 միլիոն ձայն տուող ֆրանսիացիների մէջ անհատի իրաւունքը դարձել է դատարկ խօսք, որով խաբում են ժողովուրդներին: Մեր հիմնարկութիւնները ոսկի հողը կայանում է գերագոյն իշխանութեան մէջ, բայց եթէ մենք այդ ոսկով ծածկենք 500,000 քարտեր, մենք կ'ստանանք միայն ոսկեփայլ թերթիկներ: Համայնական ժողովը կենդանի հիմնարկութիւն է, և նրան չէ կարելի հաւասարեցնել թղթի բեֆերենդումի հետ. նա տալիս է մարդուն գերագոյն իրաւունքների գագաման գործնական արտայայտութիւն. իսկ բեֆերենդումը մարդուն թղթով է փոխարինում և խախտում է պետական կապի կենդանի գիտակցութիւնը»:

Տասը տարի սրանից յետոյ Վէլտին հրաժարական տւեց մի ժողովրդական ձայնտուութեան առիթով: Զվիցերեան նրա մէջ կորցրեց ամենահարգւած և տաղանդաւոր պետական մարդկանցից մէկին:

Նշերը նոյնպէս կարծիք յայտնեց բեֆերենդումի դէմ, որը, նրա կարծիքով, բոլորովին չէ հաշուում դաշնակցական պետութեան հետ. «Այն հանգամանքից, որ այս իրաւունքները ընդունւած են կանտոններում, որոնք ներկայացնում են ամբողջ և միատեսակ կազմակերպութիւններ, չէ կարելի եզրակացնել, որ նրանք մօտենում են բարդ կազմակերպութիւն ունեցող դաշնակցական պետութեան: Այս երկու քաղաքական կազմակերպութիւնների մէջ եղած տարբերութիւնները անթիւ են... Բեֆերենդումը թուլացնում է իշխանութիւնների պատասխանատուութիւնը իր վրայ չէ վերցնում ոչ ժողովուրդը և ոչ մէկ ուրիշը: Նա առաջադիմութեան միջոց չէ. առաջադիմութիւնը և ժողովրդական ձայնաւուութիւնը ամերեկին նոյնանիշ չեն... Ժողովուրդը նոյնքան քիչ է անսխալական, որքան պապը—և ով նրան այդ ասում է, աւելի ազնւաբար է վարում, քան նրանք, որոնք շողոքորթում են ժողովրդին: Ժողովրդի շողոքորթները թագաւորների շողոքորթներէից աւելի լաւ չեն»:¹⁾

¹⁾ Դաշնակցական բեֆերենդումի հակառակորդների, Վէլտի և Նշերի, ճառերը արտասանել են դեռ ևս 1872 թ. դաշնակցական սահմանադրութեան նախագիծը քննելու ժամանակ, այսինքն, դաշնակցական գործերի վերաբերմամբ բեֆերենդումի մտցնելուց երկու տարի առաջ, երբ այս աւարկայի նը-

Զվիցերիայի սկանաւոր քաղաքական գործիչ, դաշնակցական խորհրդի նախկին անդամ Նիւմա Դրօն ճիշտ էր գրել 1882թ.՝ «Նա վաղուց է կարծում եմ, որ փոխանակ անէծքներ թափելու բեֆերենդումի վրայ նրա անասորժ հետեանքների համար, աւելի լաւ կ'լինէր սովորել նրա հետ ապրել և կատարելագործել նրան, բայց ամենից առաջ ինքն իրան կատարելագործել... դժգոհութեան ոգու և աւերման ոգու մէջտեղ տեղ պիտի բռնէ և վճռող դեր կատարէ գործնական հայրենասիրութեան ոգին»:

XIII. ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՎԵՐԱՔՆՆՈՒԹԻՒՆ

§ 1 1891թ. յուլիսի 5 յաւելւածը,

Հազիւ հինգ տարի անցաւ 1874 թ. զիջումից յետոյ, սկսեցին սահմանադրութեան մասնաւոր վերաքննութիւններ: Գործը սկսեց 65 յօդ., որ արգելում էր մահւան դատապարտութիւնը: Հասարակաց կարծիքը վրդովւած էր մի շարք ոճրագործութիւններով, և Ֆրէյլերը, Մաֆֆհաուզենի ներկայացուցիչը կանտոնների խորհրդում, առաջարկեց այդ յօդւածի վերաքննութիւնը.¹⁾

Կամամբ դեռ ոչ մի փորձ գոյութիւն չ'ունէր դաշնակցութեան մէջ: Այժմ Զվիցերիայում չ'կան դաշնակցական բեֆերենդումի այդպիսի անպայման հակառակորդներ: Դաշնակցական բեֆերենդումի բարերար ազդեցութիւնը, որքան մեզ յայտնի է, ամենից լաւ բնորոշել է Կուրտի իր տեսութեան մէջ՝ այս ժողովրդական իրաւունքի հետեանքների մասին 20 տարւայ ընթացքում: Կուրտին ասում է, որ թէև բեֆերենդումը երբեմն պատճառ էր լինում դաշնակցական ժողովի այնպիսի վճիռների վերացման, որ պէտք է համարել նպատակայարմար, բայց նա քանիցս անգամ ուզել է նաև դաշնակցական ժողովի սխալները. իսկ զլլաւորն այն է, որ նա անդադար յիշեցնում էր ժողովրդական ներկայացուցիչներին, որ նրանք իրանց գործունէութեան մէջ պէտք է հետևեն ժողովրդի ցանկութիւններին, այլապէս ժողովուրդը կ'ոչնչացնէ նրանց վճիռները. եթէ չ'լինէր այս մշտական յիշեցումը, դաշնակցական օրէնսդրութիւնը նոյնքան կ'հետանար ժողովրդի ցանկութիւններից և շահերից, ինչքան միւս երկիրներում:—(Աւելացնենք նոյնպէս, որ Վէլտի հրաժարման վերաբերմամբ, մեր կարծիքով, կարելի է գանազան տեսակ մտածել):

¹⁾ 65 յօդ. նախկին բնագիրը այսպէս էր. «Մահւան պատիժը վերացւած

կանտոնները վերականգնեցին իրանց գերագոյն իրաւունքները այս առարկայի նկատմամբ. նրանից մի քանիսը նորից մտցրին իրանց սահմանադրութեան մէջ մահւան պատիժը, բայց մինչև այժմ նա գործադրուած էր միայն Լիւցերնուտ և ամենավերջին ժամանակը, Շվիցում:

Վերաքննութեան վերաբերեալ մի քանի առաջարկութիւններ մերժւեցին: Օրինակ, 1880 թ. օգոստոսի 3 դեկտոր Իօօս ներկայացրեց մի առաջարկութիւն, ծածկւած էր 50,000 ստորագրութիւններով և պահանջում էր, որ պետական դրամական արժեթղթերի, բաց թողնելը յանձնել բացառապէս դաշնակցութեան: (Դա պատկանում է կանտոններին. ուստի թարգ.) Այս առաջարկութիւնը գնաց պալատը, մանրամասնօրէն մշակւած նախագծի ձևով, բայց նա չ'յանձնեց ժողովրդի ձայնաւոյթեան, որովհետև, դաշնակցական խորհրդի առաջարկութեամբ, պալատները, 120 յօդ. հիման վրայ, առաջ հարցրին ժողովրդից, ցանկանում է առհասարակ վերաքննութիւն թէ ոչ: Քաղաքացիների ահագին մեծամասնութիւնը կարծիք յայտնեց առաջարկւած վերաքննութեան դէմ: 1) Դաշնակցական խորհուրդն իր առաջարկութիւնը պատճառաբանեց հետեւեալ խօսքերով. Դաշնակցական խորհուրդը, անկասկած, ունի իրաւունք, իր սեփական նախաձեռնութեամբ, առաջարկել սահմանադրութեան մասնաւոր վերաքննութիւն, և մենք տեսնում ենք, որ նա օգտուեց այդ իրաւունքից վերաքննելու համար 65 յօդ. վերաբերեալ մահւան դատապարտութեան: Բայց այժմ գործը 120 յօդ. մասին է, որը խօսում է սահմանադրութեան ընդհանուր վերաքննութիւնների մասին: Սակայն քաղաքացիները, որոնք ստորագրել են ներկայ առաջարկին, չեն բաւականանում (համաձայն 120 յօդ., որի վրայ նրանք մատնացոյց են անում) սահմանադրութիւնը վերաքննելու հասարակ պահանջուով, նրանք ցանկանում են, որ վերաքննութիւնը սահմանափակւի որոշ առարկայով, և ցոյց են տալիս այն

է:—Այս յօդւածը չէ՞ տարածուած պատերազմական օրէնքի այն որոշումների վրայ, որ հարկ կ'իլինի կայացնել պատերազմական ժամանակում: Այժմ նա ասում է քաղաքական յանցանքերի համար մահւան դատապիժն չէ կարող արասանել:—Մաքնական պատիժները արգելուած են:

1) 260,126 ձայներ դէմ. էին վերաքննութեան և 121,099—յօգուտ նրա:

յօդւածը, որով պէտք է սահմանափակւի այս փոփոխութիւնը: Այդ բաւական չէ. նրանք ոչ միայն պահանջում են որոշ յօդւածի վերաքննութիւն, — նրանք մշակել են խմբագրւած յօդւածը որ պիտի փոխարինէ այժմեանը, և պահանջում են ներկայացւի ժողովրդին իրանց տւած խմբագրութեամբ: Բայց այդ չէ թոյլատրուած սահմանադրութիւնը...—Իսկապէս սահմանադրութիւնը չէ երաշխաւորում այդպիսի խնդրագրները անմիջապէս ժողորդին յանձնելու համար. այդպէս ձևակերպւած ցանկութիւնները չեն կարող անցնել խնդրագրերի տեղ. աւելի քիչ կարելի է տեսնել նրանց մէջ վերաքննութեան պահանջներ՝ 89 յօդ. որոշւած. այս դէպքում ոչ մի արգելք չ'կայ, որ, 120 յօդ. հիման վրայ հարցնել ժողովրդի կարծիքը ընդհանուր ձայնաւոյթեան ձայնապարհով:

Այս բացատրութիւնից հետևում է, որ ժողովուրդը վայելում է աւելի քիչ իրաւունքներ, քան նրա ներկայացուցիչները. նա կարող է առաջարկել սահմանադրութեան ընդհանուր վերաքննութիւն, բայց նրանից չեն հարցնում մասնաւոր վերաքննութեան պատշաճութեան մասին: Սահմանադրութեան մի այսպիսի բացատրութիւնը խիստ հակասում է այն ազդարարութիւններին, որոնք մտցրւած են դաշնակցական սէյմի արձանագրութեան մէջ 1847 թ. ասում էին, և բոլորովին հիմնաւոր կերպով, որ սահմանադրութիւնը մի զիջում է, և միայն մէկ յօդւածի վերաքննութիւնը ժողովրդի կողմից կարող էր խախտել հաւասարակշռութիւնը, որ հաստատւել է այս զիջումով, այն ինչ պալատները կատարեալ հնարաւորութիւն ունեն մի որ և է մասնաւոր յօդւածի վերաքննութեամբ փոփոխել սահմանադրութիւնից հաստատուած ընդհանուր հիմունքը: Բայց այս պատճառաբանութիւնը ոչ ամենքի համար էր համոզիչ, և շուտով բողոքներ բարձրացան:

1884 թ. պ. Յեմպը (այժի անդամ դաշնակցական խորհրդի և Զրիցերիայի նախագահ ներկայ 1895 թ.) ազգային խորհրդում մի առաջարկութիւն արաւ, որով պահանջում էր մի քանի յօդւածների վերաքննութիւն և ժողովրդի իրաւունքների ընդարձակում: Այս առաջարկութիւնը համարւեց ուշադրութեան արժանի և յանձնեց դաշնակցական խորհրդին, որպէս զի նա համապատասխան զեկուցում ներկայացնի: Օրինագծի մշակութիւնը կ'ըջըջէր կրկար տարիներ, եթէ գործը չ'արագանար շնորհիւ ազդե-

ցութիւն վայելող «Գրիւտլի դաշնակցութեան» 1) խնդրագրի: Այս խնդրագիրը պահանջում էր մտցնել պարտաւորիչ ընդհանրուած, դաշնակցական խորհրդի անդամների ընտրութիւն անմիջապէս ժողովրդի կողմից և ժողովրդական նախաձեռնութիւն դաշնակցակցական սահմանադրութեան մասնաւոր վերաքննութիւնների համար: Ազգային խորհուրդը, յիշեցնելով դաշնակցական խորհրդին Յեմպի առաջարկի մասին, հրաւիրեց նրան ներկայացնել համապատասխան ղեկուցում և իր առաջարկութիւններն անել վերոյիշեալ խնդիրների վերջին կէտի վերաբերմամբ:

Վերջապէս, 13 յունիսի 1890 թ. դաշնակցական խորհուրդը ներկայացրեց պալատներին որոշման նախագիծը՝ վերաբերեալ դաշնակցական սահմանադրութեան III գլխին և ժողովրդական նախաձեռնութեան ճանապարհով կատարելիք մասնաւոր վերաքննութեանց պահանջներին:

Մասնաւոր վերաքննութեան վերաբերմամբ ազգային խորհուրդը սեպտեմբերի 23 ընդունեց, համարեա առանց փոփոխութիւնների, դաշնակցական խորհրդի նախագիծը: Իսկ կանտոնների խորհուրդը լիովին չ'միացաւ ազգային խորհրդի վճռին և շուտ ընդարձակեց ժողովրդական նախաձեռնութեան իրաւունքը, որոշելով, որ նախաձեռնողների առաջարկութիւնները կարող են ներկայացնել ոչ միայն ընդհանուր ցուցմունքների, այլ և մանրամասնօրէն մշակած նախագծերի ձևով, ինչպէս այդ անուամ է, օրինակ, Յիւրիխում: Ազգային խորհուրդը նորից դիմեց նախագծի քննութեան, միևնոյն ժամանակ նրա անդամը, դաշնակցական իրաւունքի բերնի պրոֆեսոր Գելտի անձամբ մի այսպիսի առաջարկութիւն արաւ (4 ապրիլի 1891 թ.)—նախաձեռնողների իրաւունքն համարել ներկայացնելու բոլորովին մշակած նախագծեր, բայց դրա հետ միասին տալ պալատներին իրաւունք դիմելու ժողովրդին այս հարցումով, թէ կատարել այս ինչ վերաքննութիւններ թէ ոչ: Այս փոփոխութիւնը մեծ արժանիք ունէր այն մտքով, որ նա նախաձեռնութեան իրաւունք յատկացնում էր նաև կանտոններին և վերացնում էր ընդհանուր և մասնաւոր

2) Պամկապետական ընկերութիւն է:

վերաքննութիւնների մէջ եղած դանազանութիւնը: 1) Ազգային խորհուրդը, չ'նայած դաշնակցական խորհրդի ջանքերին, միացաւ համարեա առանց վիճաբանութիւնների կանտոնների խորհրդի որոշման, Սահմանադրութեան վերաքննած մասը ընդունեց ժողովրդի կողմից ընդհանուր ձայնաւորութեան միջոցին 5 յունիսի 1891 թ. Ահա նա:

Մասն III. Դաւեալիցական սահմանադրութեան վերաքննութիւնը.

Յօդ. 118.—Դաշնակցական սահմանադրութիւնը կարող է վերաքննել ամեն ժամանակ, ինչպէս իր ամբողջ ծաւալով, նոյնպէս և մաս առ մաս:

Յօդ. 119.—Ընդհանուր վերաքննութիւնը կատարուում է այն ճանապարհով, որ սահմանուած է դաշնակցական օրէնսդրութեան համար:

Յօդ. 120.—Եթէ դաշնակցական ժողովի մի մասը կ'վճռէ դիմել դաշնակցական սահմանադրութեան ընդհանուր վերաքննութեան, իսկ միւս մասը չ'համաձայնէ նրա վճռի հետ կամ եթէ 50,000 իրաւատէր զվիցերիայի քաղաքացիներ կ'պահանջեն ընդհանուր վերաքննութիւն, այն ժամանակ այս երկու դէպքումն էլ այն հարցը, լինի՞ վերաքննութիւն թէ ոչ, պիտի յանձնուի զվիցերիական ժողովրդի ձայնաւորութեան:

Եթէ այս դէպքերից որ և է մէկում զվիցերիայի քաղաքացիների մեծամասնութիւնը, որը մասնակցել է ձայնաւորութեան, վերոյիշեալ հարցին կ'տայ դրական պատասխան, այն ժամանակ երկու խորհուրդն էլ պիտի վերընտրեն՝ վերաքննութիւն կատարելու համար:

Յօդ. 121.— մասնաւոր վերաքննութիւն կարող է կատարել կամ ժողովրդական նախաձեռնութեան ճանապարհով, կամ այն ճանապարհով, որը որոշած է դաշնակցական օրէնսդրութեան համար: Ժողովրդական նախաձեռնութիւնը կա-

1) Կրկնութիւններից խոյս տալու համար մենք մեզ թոյլ ենք տալիս բաց թողնել դաշնակցական խորհրդի նախագծի ընդգրկները և Գելտի անձնական առաջարկը, որոնք հետաքրքրութիւն չեն ներկայացնում մեր ընթերցողների համար, և ներքև բերում ենք միայն դաշնակցական սահմանադրութեան III գլխի վերաքննութեան խմբագրութիւնը, որ ենթարկեց ժողովրդի ձայնաւորութեան և ընդունեց ժողովրդի կողմից:

յանում է 50:000 զվիցերիացի քաղաքացիները կողմից ներկայա-
ցրած պահանջի մէջ, այն է՝ վերացնել կամ փոփոխել դաշնակցա-
կան սահմանադրութեան որոշ յօդածները:

Եթէ ժողովրդական նախաձեռնութեան ճանապարհով կ'ա-
ռաջարկեն վերաքննութեան համար կամ դաշնակցական սահմա-
նադրութեան մէջ մտցնելու համար մի քանի զանազան առարկա-
ներ, այն ժամանակ նրանցից իւրաքանչիւրը պիտի կազմէ առան-
ձին պահանջի բովանդակութիւն:

Նախաձեռնութեան պահանջը կարող է ներկայացւել կամ
ընդհանուր ցուցմունքի կամ մանրամասնօրէն մշակւած նախա-
զօծի ձևով:

Եթէ նախաձեռնութեան պահանջը կ'ներկայացւի ընդհանուր
ցուցմունքի ձևով, և դաշնակցական պահանջները համաձայն են
նրա հետ, նրանք պէտք է մշակեն մասնաւոր վերաքննութեան
նախագիծ և այն մտքով, որ ցոյց է տւել նախաձեռնութիւնը, և
յանձնեն այն ժողովրդի և կանտոնների ձայնաւութեան: Իսկ
եթէ դաշնակցական պալատները համաձայն չեն ներկայացւած
պահանջի հետ, այդ դէպքում վերաքննութեան լինել չ'լինելու
հարցը պիտի անցնի ժողովրդի ձայնաւութեան, և եթէ զվիցերա-
ցի քաղաքացիների մեծամասնութիւնը, որ մասնակցել է ձայն-
աւութեան, այս հարցին դրական պատասխան կ'տայ, դաշնակ-
ցական ժողովը ձեռնարկում է վերաքննութեան ժողովրդական
վճար մտքով:

Իսկ եթէ պահանջը ներկայացւած է մշակւած նախագծի
ձևով և դաշնակցական ժողովը չի համաձայնի նրա հետ, նախա-
զիծը պիտի յանձնի ժողովրդին և կանտոններին ընդունելու կամ
մերժելու համար: Ներկայացւած նախագծի հետ անհամաձայն լի-
նելու դէպքում, դաշնակցական խորհուրդը կարող է մշակել իր
նախագիծը կամ առաջարկութիւն անել՝ մերժել նախաձեռնու-
թեան: պահանջը—և իր նախագիծը կամ փոփոխւած առաջարկու-
թիւնը՝ նախաձեռնութեան նախագծի հետ միաժամանակ ենթար-
կել ժողովրդի և կանտոնների ձայնաւութեան:

Յօդ. 122.— Դաշնակցական օրէնքը կ'որոշէ այն ձևականու-
թիւնները, որոնց պէտք է հետևել ժողովրդական պահանջների և
ձայնաւութիւնների ժամանակ՝ դաշնակցական սահմանադրութեան
վերաքննութեան նկատմամբ:

Յօդ. 123.— Վերաքննւած մասը ոչ թ են ստանում, եթէ նրանք
ընդունւած են զվիցերիացի քաղաքացիների մեծամասնութիւնից՝
որոնք մասնակցել են ձայնաւութեան, և կանտոնների մեծամաս-
նութիւնից:

Կանտոնների մեծամասնութիւնը որո ելլիս՝ ամեն մի կէս-
կանտոնի ձայնը համարւում է կէս-ձայն:

Ժողովրդական ձայնաւութեան հետևանքը իւրաքանչիւր կան-
տոնում համարւում է այդ կանտոնի ձայն: Յօդւածի այս նոր սահմա-
նափակումները բաւականին փոքրացրին ներկայացուցչական ժողով-
ների օրէնսդրական իշխանութիւնը: Նախաձեռնութեան զրգմամբ
կատարւած բոլոր ձայնաւութիւնների մէջ պալատների պատասխա-
նաւութիւնը նոյն այս իրողութեամբ հասցրած է առնւազի: Կան-
տոնների խորհրդի նոյն իսկ գոյութիւնը սաստիկ խախտւած է, այս
խորհուրդը, իբրև կանտոնների ներկայացուցիչ, գնալով աւելի և
աւելի կորցնում է իր նշանակութիւնը և արդէն քիչ ձայներ չ'են
լսւում, որ պահանջում են ոչնչացնել այս «բէակցիական» պալա-
տը: Եթէ այս նոր իրաւունքից չ'օգտւեն մեծ զգուշութեամբ,
այն ժամանակ զվիցերիական դաշնակցութիւնը վտանգի է են-
թարկւում զիջման բնաւորութիւնը կորցնելու:

Սահմանադրութեան այս մասի ամենագլխաւոր պակասու-
թիւնը մենք համարում ենք այն, որ նա թոյլ է տալիս ներկա-
յացնել դաշնակցական ժողովին պահանջներ բոլորովին մշակւած
նախագծերի ձևով՝ նրանց ժողովրդի ձայնաւութեան յանձնելու
համար: Սահմանադրութիւնը չէ որոշում այն առարկաները, որոնց
վրայ պիտի տարածեն այս տեսակ պահանջները: Ժողովրդի ին-
քն իրան կառավարելու իրաւունքը անսահման է. ոչ մի բան
դուրս չէ գցւած նրա իշխանութիւնից:

Ժողովուրդը ամեն բան կարող է անել սահմանադրութեան
փոփոխման ձևի մէջ: Եթէ վաղը նախաձեռնութիւնը պահանջէր
սահմանադրութեան 18 յօդ. ոչնչացնել և մեծամասնութիւնն ըն-
դունէր այս պահանջը,—զվիցերիական զօրքը կ'անյայտանար:
Բայց թողնենք այս «եթէ»-ն և բաւականանք միայն ցոյց տալով,
որ նախաձեռնութեան իրաւունքը կարող է հասցնել խիստ անա-
խորժ անակընկալիքների: 20 օգոստոսի 1893 թ. ընդունւեց ըն-
դանուր ձայնաւութեամբ ժողովրդական նախաձեռնութեան ձա-
նապարհով առաջարկւած յօդ. 25 bis, որ արգելում է սպանել

կենդանիներին առանց նախապէս շշմեցնելու: Եթէ մինչև անդամ թոյլ տանք, որ առանց նախապէս շշմեցնելու տաւար մորթելը անխիղճ բան է,— դա ճշմարիտ չէ,— այն ժամանակ տէրութիւնը (կանտոն կամ դաշնակցութիւն) իրաւունք ունէր զբաղէմ համապատասխան միջոցներ ձեռք առնել, մի բան, որ չ'եղաւ: 1)

Սահմանադրութիւնը հիմնական օրէնք է, նորմա, որ նշանակած է օրէնսդրի գործունէութեան համար, նա որոշում է կանտոնների և դաշնակցական ձեռնասութեան սահմանները, անօրէնում է զսնահան դաշնակցական հիմնարկութիւնների կազմակերպութիւնը և իշխանութիւնը, այսպիսով, նա տալիս է ընդհանուր կանոններ, որոնցով պիտի ղեկավարի օրէնսդրական գործունէութիւնը: Այս ձևով նա հանդիսանում է, իբրև ասպանովութիւն անհատի՝ ընդդէմ բացառիկ և պատահական օրէնքների կամայականութեան: Իսկ մտցնել սահմանադրութեան մէջ ստիկանական խանգարմունք տաւար մորթելու վերաբերմամբ նշանակում է խեղաթիւրել նրա բնաւորութիւնը. մեր կարծիքով, այդ նրան այլանդակում է:

Մենք, սակայն, յուսով ենք, որ ժողովրդական նախաձեռնութեան իրաւունքը չափազանց յաճախ չի գործադրել:

50,000 ստորագրութիւնները-համեմատաբար մեծ թիւ է և գործնականապէս այդքան թիւ կարելի է հաւաքել միայն կարեւոր ինդիքների վերաբերմամբ. հակառակ դէպքում այս իրաւունքը կ'ունենար այն անյարմարութիւնը, որ նրա գոյութեան ժամանակ օրէնքների իրազորումը անապահով կ'լինէր, ովովհետև օրէն-

1) Պէտք է ի նկատի ունենալ, որ նախաձեռնութիւնը տաւար մորթելու վերաբերմամբ առաջին նախաձեռնութիւնն էր դաշնակցութեան մէջ: Նրա արժանաւորութիւնները կամ թերութիւնները, իբրև առաջին փորձի, զեռ ոչինչ չեն ապացուցանում: Գրանից յետոյ զեռ երեք փորձեր եղան փոփոխելու դաշնակցական սահմանադրութիւնը նախաձեռնութեան ճանապարհով, 1) դաշնակցութեան մարքաստների եկամուտներից կանտոններին փող տալու մասին, 2) դաշնակցական սահմանադրութեան մէջ «աշխատանքի իրաւունք» մտցնելու մասին և 3) ձրի պետական բժշկական օգնութիւն մտցնելու մասին (տեղային բժշկական կազմակերպութիւն): Առաջին երկու առաջարկում մասին (տեղային և ձրի) ժողովրդի ճնշող մեծամասնութեամբ. իսկ երրորդ փորձը նոյն իսկ չ'կարողացաւ հասնել ժողովրդի ձայնութեան, որովհետև չ'զանցեցին մինչև անգամ 50,000 քաղաքացիներ, որ կամենային ներմուծել տեղային բժշկական կազմակերպութիւն:

քները ամեն ըստ է կարող էին փոփոխել նախաձեռնութեան ճանապարհով: Նոյնը պէտք է ասել և նախագծերի վերաբերմամբ որոնք մշակւած են բոլոր մասերով. հարկաւ, եթէ սկզբունքով կարելի է պահանջել ճիշտ որոշւած փոփոխութիւններ, գործնականապէս աւելի դժւար է 50,000 մարդկանց համաձայնեցնել ընդունելու նախագծի այս ինչ բնագիրը: Յուսանք, որ այս իրաւունքը, որ ներկայ վայրկեանում ունի նորութեան գրաւչութիւն և կնխադրում է զվիցերիական ժողովրդի մէջ քաղաքական հասունութեան և սովորապետական զարգացման մի մեծ աստիճան, միայն ճանապարհ կ'հարթէ ճշմարիտ առաջադիմութեան և անհրաժեշտ բարիփոխութիւնների համար.

§ 2. Օրգանական օրենք.

Ի կատարումն սահմանադրութեան 120 յօդ., 27 յունարի 1892 թ. ընդունեց մի օրէնք, որի վրայ շատ աշխատանք դրեց դաշնակցական ժողովը: Այս օրէնքը պարունակում է անօրէնութիւններ՝ վերաբերեալ նախաձեռնութեան բնագրի ստորագրութեան, նշանակում է ժամանակամիջոց, երբ պալատները պարտաւոր են տալ իրանց եզրակացութիւնը ներկայացւած պահանջի վերաբերմամբ (մի տարի) և, վերջապէս, որոշում է ժողովրդական ձայնութեան կարգը նախաձեռնութեան առաջարկութիւնների վերաբերմամբ: Շատ դժւարութիւններ կային ամբողջովին մշակւած նախագծերի վերաբերմամբ հարցը վճռելիս: Դաշնակցական խորհուրդը այն աջող յանձնարարեց ձայնութիւնների այն սխաւեմը, որ գործադրում է զանազան օրէնսդրական ժողովներում. պէտք է լինեն երկու առանձին ձայնութիւններ. նրանցից առաջինն մէջն իրաւատէր քաղաքացիները կարծիք պիտի յայտնեն, եթէ երկրորդ ձայնութիւնը կ'վճռէ հարցը յօգուտ վերաքննութեան,— թէ նախագծերից որն են նրանք գերադասում, արդեօք մին նախագիծը, որ առաջարկել է նախաձեռնութիւնը, թէ այն մէկը, որ մշակել է դաշնակցական ժողովը: Այսպիսով, առաջին ձայնութիւնը կ'լինէր նախապատրաստական մի գործողութիւն ներկայացւած նախագծերից մէկն ու մէկի ազգայն ընտրութեան համար. երկրորդ, վերջնական ձայնութեան ժամանակ՝ այն նախագիծը, որն ունեցաւ ձայներէ

մեծամասնութիւնը, կ'հակադրուէր գործող սահմանադրութեան համապատասխան յօդուածին, այս միջոցով ժողովրդական մեծամասնութեան կամքը կ'արտայայտուէր կատարեալ ճշտութեամբ:

Կանտոնների խորհուրդը կարծիք յայտնեց յօգուտ այս առաջարկութեան, բայց նա պահանջում էր, բացի այդ, որ ձայնաւուծութիւնների ժամանակ հաշի առնէին նաև կանտոնների ձայները, մինչդեռ դաշնակցական խորհուրդը չէր կամենում այդ ձայները հաշի մէջ գցել ժողովրդի վերջնական վճռի ժամանակ: Ազգային խորհուրդը չ'միացաւ այս հայտցքին. նա կամենում էր, որ, եթէ դաշնակցական ժողովրդը կ'առաջարկէ իր հակահախադիժը ձայնաւուծիւնը կատարուէր միաժամանակ երկու հախադիժների վերաբերմամբ: 1)

Այս սխառեմը, որ գործադրելի է խորհակցական ժողովում, անհարմար է ժողովրդական ձայնաւուծիւններին համար, եթէ դաշնակցական սահմանադրութեան վերաքննութիւնները ներկա-

1) 27 յունուարի 1892 թ. դաշնակցական օրէնքը:

Յօդ. 9. Եթէ երկու պալատները չ'լարեն մի այնպիսի վճռի, որը համաձայն է հախաձեռնութեան ամբողջապէս մշակած հախագծի բովանդակութեան հետ, այս հախագիծը անփոփոխ անցնում է ժողովրդի և կանտոնների ձայնաւուծիւնին:

Նոյնպիսի կարգ պահպանում է նաև այն դէպքում, եթէ դաշնակցական ժողովը կ'վճռէ հաւանութիւն տալ հախագծին:

Յօդ. 10. Եթէ դաշնակցական ժողովը չ'միանայ հախագիծին, նա լանձնում է այն ժողովրդի և կանտոնների ձայնաւուծիւնին: Միևնոյն ժամանակ նա կարող է յանձնարարել մերժելու յիշուած հախագիծը կամ միաժամանակ առաջարկել ժողովրդի և կանտոնների ձայնաւուծիւնին նոյնպէս և իր հախագիծը նոյն առարկայի նկատմամբ:

Յօդ. 11. Եթէ դաշնակցական ժողովը ներկայացնում է և իր մանրամասն մշակած հախագիծը, յանձնում են ձայնաւուծիւն հետեւեալ երկու հարցերը. Յանկանում էր արդեօք ընդունել վերաքննութեան հախագիծը, որ ներկայացրել է ժողովրդական հախաձեռնութիւնը. կամ—

Յանկանում էր ընդունել դաշնակցական ժողովի մշակած հախագիծը:

Յօդ. 12.— Զայնաւուծիւն հետեւեալը հաշիւին չ'լցրած Բիւլետէնները չեն հաշուում (Blanes ou nuls): Այն Բիւլետէնները, որոնք գրական կամ բացասական («այո» կամ «ոչ») կերպով են պատասխանում առաջարկուած հարցերից միայն մէկին կամ պատասխանում բացասաբար այս երկու հարցերին, հաշուում են՝ ձայները համարելիս:

Բիւլետէնները, որոնք պատասխանում են գրական կերպով այս երկու հարցերին, հաշի չեն առնում (Sont nuls):

Յօդ. 13. Ընդունուած է համարում հախագծերից այն մէկը, որի վրայ միացաւ ձայն տուող քաղաքացիների և կանտոնների մեծամասնութիւնը:

յացել քաղաքացիներին երկու ձևով, այն ժամանակ կարող է պատահել, որ վերաքննութիւն ցանկացող մեծամասնութիւնը կ'բաժանւի երկու հախագծերի մէջ և յաղթող կ'հանդիսանայ փոքրամասնութիւնը, որը հակառակ է վերաքննութեան: Այստեսակ կարգի հետեւանքները հեշտ է հախատեսել. ամեն անգամ, երբ հախաձեռնութեան կողմից ներկայացուած վերաքննութեան պահանջը ցանկալի չի լինի դաշնակցական ժողովին, բաւական է միայն, որ նա առաջարկէ քաղաքացիներին և իր հախագիծը, որը փոքր ինչ տարբերում է հախաձեռնութեան հախագծից, կողմնակիցների ձայների կ'բաժանւեն երկու հախագծերի մէջ, և հակառակորդները, այսինքն, փոքրամասնութիւնը, կ'յաղթէ: Այսպիսով, հախաձեռնութիւնը կարող է կորցնել ժողովրդի ամենակարևոր իրաւունքի նշանակութիւնը, կախած լինել պարլամենտական մեծամասնութեան կամայականութիւնից, և վերաքննութիւնը կարող է դանձալ իսկական պատրանք:

Կանտոնների խորհուրդը երկար վիճաբանութիւններից յետոյ միացաւ ազլային խորհրդի կարծիքին: Կարելի է մտածել, որ սահմանադրութեան նոր յօդուածներն ընդունելուց յետոյ, օրէնսդիրը վախեցաւ նրանց նշանակութիւնից և կամեցաւ նւագեցնել այն իրաւունքները, որոնք այս յօդուածներով յատկացուած էին ժողովրդին, որպէս զի հնարաւոր լինի գաղտնի կերպով խանգարել քաղաքացիների ներկայացրած առաջարկութիւնների իրականացումը, կարելի է տարբեր կարծիքներ ունենալ հախաձեռնութեան իրաւունքի վերաբերմամբ, բայց այս իրաւունքը մտցուած է սահմանադրութեան մէջ, այն ժամանակ էլ հարկ չ'կայ դժարացնել նրանից օգուտը անյաջող օրէնքի միջոցով:

Զվիցերիան առողջ և խելացի սամկապետութեան ճանապարհ է հարթում, բայց վերջին տարիները նա կամեցաւ շատ արագ ընթանալ և այդ պատճառով նա քանի քանի սխալ քայլեր արաւ. ինչպէս բոլոր առաջին փորձերի ժամանակ, նա առաջ է գնում՝ բախտի բերմունքին ապաւինած: Իրականութիւնը ցոյց կ'տայ յայտնի թիրուծիւններ, և երբ նրանք վերացուած կ'լինեն, այս օրէնքը, կարելի է, կ'հանդիսանայ, իբրև մեծ առաջադիմութիւն սամկապետական օրէնսդրութեան խնդրում:

Վ Ե Ր Զ Ա Բ Ա Ն.

Արտասահմանում ամենամեծ ուշադրութեամբ են հետևում այն հիմնարկութիւնների գործունէութեանը, որոնց վրայ փորձեր է կատարում Զվիցերիան: Մինչև օրս այնտեղ դեռ ևս չեն եղած նմանողութեան փորձեր, 1) և այդ զարմանալի չէ: Ուրիշ երկիրներում քաղաքական կրքերը աւելի լարւած են, ընկերավարական անտագոնիզմը աւելի խոր է, և ժողովուրդը նոյնպէս աւելի սակաւ է փորձւած քաղաքական կեանքում: Ալպեան վարդը և Էդէլվայսը, 2) ընտելացած լինելով սառնամանիքների դաժան կլիմային, չեն ծաղկում ջերմոցներով և տափարակների ծաղկանոցներում:

Զվիցերիան, ի հարկէ, կ'ընթանայ՝ տաջադիութեան գլուխ կանգնած, միշտ հոգ տանելով իր հիմնարկութիւնների յետագայ կատարելագործման մասին, բայց նա մեծ ուշադրութեամբ պիտի վերաբերւի այն զարգացման, որ նա տալիս է ժողովրդավարութեան. մանաւանդ նա պիտի պահպանէ իրան այն միջազգային գաղափարների հոսանքներից, որոնք, ժողովրդի նոր իրաւունքների պատրակով, ցանկանում են միայն երկպառակութիւն և դժգոհութիւն երկրի մէջ: Էական կարեորութիւն ունի այն, որ միջին դասը չ'կորցնէ հեռաբերութիւնը դէպի քաղաքական և ընկերավարական խնդիրները: Այն ժամանակ նաև յետագայում անկապետութիւնը կ'ունենայ իր տակ մի հաստատ հիմք, իսկ Զվիցերիան նոյնպէս և այնուհետև կ'ծառայէ, իբրև օրինակ մի այնպիսի երկիր, ուր իշխում են ազատութիւն և կարգ ու կանոն:

Հ. Ե. Ր. Զ.
 Լ. Ս. Ս. Ն. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԳՐԱՐԱՆ
 ПУБЛИЧНАЯ БИБЛИОТЕКА
 7/31. 1922

1) Պարիզի և Կիւնիի քաղաքային խորհուրդները ցանկանում էին մտցնել լուսնային ճաշմարտութեան ընդունւած որոշումները բացատրեցին իբրև նշանակութեւն չունեցող: Փրանսիական պաշտոն մերժեց նոյնպէս պղը-Մակկոի նախագիծը յօգուտ քեֆերենդումի ներմուծման: Իսկ Բելգիայում գոյութիւն ունի խիստ նշանաւոր շարժում յօգուտ այս ժողովրդական իրաւունքի: (Արագրական լուրերին նայած, նոյնպիսի շարժում սկսւում է նաև Միացեալ Նահանգներում և Աւստրալիայում):

2) Ալպեան ծաղիկ:

Լ յ յ ա ե ն ի ս ե ս ե ի

1. Բախ.—Հարուստներ և աղքատներ Ս տպագ. 15 կող.
2. Պեղէխօնով.—Հաց, լոյս և ազատութիւն . 12 »
3. Փէդորովիչ.—Ինչպէս են ժողովում և ծախսում ժողովրդական փողերը 5 »
4. Կարմելիւկ.—Նոր լիբան բարոզը 2 »
5. Չերնով.—Գիւղացին և բանտը 15 »
6. Պերներստորֆեր.—Ազգային հարցը և սօցիալ-դեմօկրատիան 5 »
7. Պրամպօլինի.—Գիւղացիներին 5 »
8. Ն. Թոխչեան.—Արհեստակց. միութիւններ 15 »
9. Նովօտորժսկի.—Ինչ է իրաւական պետութ. 15 »
10. Ն. Կարամով.—Հոգային հարցը նոր Զեւանդիայում 2 »
11. Ժան Փօրէս.—Յուրժուական սեփականութիւն և նրա ապագայ զբաւումը 5 »
12. Ա. Աբեղեան.—Դեմօկրատ. բնորութիւններ 12 »
13. Կարլ Կառուսկի.— Ազգութիւնների հարցը Ռուսաստանում: 3 »
14. Ա. Ահարոնեան (Վարիբ).—Ազատութեան ճանապարհին: 80 »
15. Փ. Լաստալ.—Սահմանադրութեան էութեան մասին: 5 »
16. Ս. Ն.—Ինչպէս կարելի է լուծել հող. հարցը 12
17. Վասիլիյ Գօլուբով.—Ինչ է ժողովրդագետութիւնը. 2 »
- 18 Ս. Զաւարեան.—Վիճակագ. տեղ. գիւղ. ազգար. 25 »
19. Ալֆոնս Դիւնան.—Ժողովրդական օրէնսդրութիւնը Իաշնակ. Զեիցերիայում 20 »
20. Դիկշտէյն.—Ով ինչով է ապրում 7 «
21. Ն. Լ.—Մի գրոյց հողի մասին 5 »
22. Լ. Շիշկօ.—Ազգայարին ծրագրի հարցը և գիտական սօցիալիզմի տեսութիւնը: 7 »

Տպագրւում են եւ շուտով լոյս կսեսնեն

2. Վշօսէկ.—Պետական կազմութեան հիմքերը արեւմուտքում:

Պատրաստում են ապագրութեան համար մի շարք ուրիշ գրքեր:

« Ազգային գրադարան



NL0207605

32.932

